

Գ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ԱՎԵՏԻՔ ԻՍԱԿԱՎԱՆԻ  
ԱՐՁԱԿԵ

ՏՕՒՐ 1963









АКАДЕМИЯ НАУК АРМЯНСКОЙ ССР  
ИНСТИТУТ ЛИТЕРАТУРЫ им. М. АБЕГЯНА

---

Г. Н. ОГАНЕСЯН

ПРОЗА  
АВЕТИКА ИСААКЯНА

ИЗДАТЕЛЬСТВО АН АРМЯНСКОЙ ССР  

---

ЕРЕВАН 1963


ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՈՒ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ  
Մ. ԱՐԵԳԱՑՈՒԹՅՈՒՆ ԱՆՎԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

891.99.092 [Բանական]

Գ. Ն. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ԱՎԵՏԻՔ ԻՍԱՀԱԿՅԱՆԻ  
ԱՐՁԱԿԸ


A  $\frac{1}{29.949}$



ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՈՒ Գ.Ա. ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ  
ԵՐԵՎԱՆ

1963

Գրքում բնութագրվում է Ազ. Իսահակյանի փոքր կտալի արձակը՝ պատմվածքներ, արձակ պոեմներ, լեգենդներ, առակ, հեքիաթ։ Քննվում են Իսահակյանի արվեստի որոշ առանձնահատկությունները։



1964. 9. 18. 11. 15.  
ԳԵՂԱՔԱԿԱՆ  
ԳՐԱԴԱՐԱՆ N 2  
ՀԱՅԱՍՏԱՆ

---



**Ժողովրդական ակունքից** է բարձրացել Իսահակյանի արվեստը՝ առաջին սրտառուչ երգերից մինչև աշխարհի, մարդկային գոյության բանաստեղծական իմաստավորումը:

Թումանյանի ճետ միասին Իսահակյանը աշխարհ հանեց իր ժողովրդի մարդկային նկարագիրը, սերը, հավատը, աշխարհազգացումը։ Մեծ անհատականություն էր արվեստագետ Իսահակյանը, համաժողովրդական հարստություն է նրա վաստակը. ամեն սերնդի ճետ ապրող ու հարատեղ են բանաստեղծի քնարերգությունը, լեգենդներն ու պոեմները, արձակը՝ նրա անմահ ժառանգության անբաժանելի մասը։

Խոհական-փիլիսոփայական է Իսահակյանի արձակը՝ պատմվածքները, արձակ պոեմներն ու լեգենդները։ Ինչպես պոեզիայում, գրանց մեջ նույնպես միաձուլլ են տրամադրություններն ու գաղափարները, իրենց բազմերանգությամբ հան-

գերծ խորապես ամբողջական։ Ժանրավիճ առումով ևս անկաշկանդ են բանաստեղծի արձակ գըրվածքները՝ ներթափանցված տարբեր ժանրերի համար բնորոշ տարրերով ու հատկանիշներով. լեզվինդի տարր, բալլագալին կամ ակնարկավիճ հատկանիշ պատմվածքում և հակառակը՝ արձակի մեջքնարական հույզ ու ներշնչանք։ Այս առանձնահատկություններով են բնութագրվում իսահակլանի պատմվածքները, լեզվինդներն ու պոեմները։

---

---

---

## ՊԱՏՄՎԱԾՔՆԵՐ

Սվետիք Խսահականի առաջին փորձերը  
արձակի ասպարեզոմ վերաբերում են 900-ական  
թվականների սկզբներին, երբ նա համարյա միա-  
ժամանակ հանդես է դավիս իր նախասիրած բո-  
լոր ժանրերին պատկանող դրվածքներով։ Այդ  
փորձերը գերևս թույլ են արմիստով, խոհը գրանց  
մեջ չունի այն համակող ուժը, որ բնորոշ է նրա հե-  
տագա տարիների արձակին։ Ինչոր չափով սենտի-  
մենտալ են, ասենք, «Սիրո երգը» արձակ պոեմն ու  
«Արեի մոտ» հեքիաթը։ «Մի շաբաթ մահապար-  
տի հետ» պատմվածքում փոքրինչ հիվանդագին  
երանդ են ընդունում հոգեբանական պնդումները,  
«Ամենապիտանի բանը» առակը զուբկ է խսահա-  
կանական առակի խորաթյունից։ Սակայն, հենց  
այս գործերով էլ ուրվագծվում է արդեն ճանաչ-  
ված բանաստեղծի ողին արձակում։ Եվ արդեն

900-ական թվականների կեսերից՝ մեկը մյուսի հետեւյց ստեղծվում էն Իսահակյանի արձակի դասական նմուշները:

Շատ կարճ ժամանակ է բաժանում «Մի շաբաթ մահապարտի հետ» պատմվածքը «Բորդ Ամոն» ու «Գարփարալիկանը» պատմվածքներից (ընդամենը հինգ տարի), բայց արդեն որոշակի է վարպետությունը: Նույնն է մնացել կյանքից հաւածված մարդկանց հոգեւանությանն ու տրամադրությունները՝ վերհուշի ընձեռած հնարավորություններով պատկերելու նախասիրությունը, բայց և նկատելի է շեղումը, այլ է պաթուսը: Առաջին գեղքում գերիշխողը մարդկալին անզորությունն է, երկրորդամ՝ հերոսների դրամատիկ կամ ողբերգական ճակատագրի պատկերումով հաստատվում է մարդկալին հոգու ուժն ու գեղեցկությունը:

Իսահակյանը գտնում է իրեն նաև արձակում, և, խորացնելով ու կատարելագործելով իր արվեստը, հասնում ժողովրդական կյանքի ու հոգերանության գեղարվիստական ճշմարիտ ընդհանրացումների:

Ահա նրա ամենակարճառու պատկերներից մեկը՝ «Հորս գութանը» (1912), որ ժողովրդական աշխարհադպացման յուրովի խոտացում է՝ էպոսալին չափանիշներով ու հնչեղությամբ:

Խոսքը վերաբերում է այն օրներին, — պարզ ու մեկեն պատմում է հեղինակը, — երբ Սուլթան Համիդը գրդում ու զինում էր քրոգերին, որպեսզի

կողոպտեն հայ շինականներին, ավերեն հայոց շեներն ու քաղաքները։ Եվ ահա Վասպուրականի գլուղերից մեկում քաջերը զենք են առնում, եւնում քրդերի դեմ։ Քրդերը համալրվում են, հայերը մոլեգնում, կոփը բորբոքվում է, տաքանում։ Մրանից գուրս, անշուշտ, անելիք չի կարող լինել, ու բնականից բնական է ինչ խոսք և՝ քաջերի ընդվկումը, և՛ մանուկների տիսրությունը, և՛ ծերերի մատահոգությունը։ Եվ հանկարծ պատկերի նույն հանգարտ ընթացքի մեջ որպես անբնական մի կոնտրաստ, անբացատրելի խելանեղություն՝ միօրինակ երգը շուրջին իր հին գութանն է վերանորոգում ծերունի մի շինական, սրտնեղում է շինականի պառավը։ Կոնտրաստն, խկապես, որ ուժեղ է դառնում ու սպառնացող։ Խելանեղ է թվում ծերունու արարքը՝ ընդհանուր տագնապի մթնոլորտում, կրակոցների տակ, բայց հենց այստեղ էլ իսահակյանը ծայրերն իրար է բերում, հնչեցնում «կոնտրաստի» մեծ իմաստը. «— է՞ն, կնիկ, ի՞նչ ես ասում, մեղ կապանեն, հն գութանն էլ չկ՞ն սպանի, ես կշինեմ, հո չիմ քանդում, աշխարհը գութանի վրա է հիմնված, ողջ մնացինք, գութանը մեղ հարկավոր է ու հարկավոր, մեռանք՝ ով որ տանի, կարելի է արդար աշխատանքի սերդարթնի մեջը, ինձ էլ ողորմիս տա, ի՞նչ իմանաս աշխարհիս բանը...»։

Շինում է ծերունին և ոչ թե քանդում, գութան է շինում — «աշխարհը գութանի վրա է հիմ-

նըլված»։ Օրվա տրամաբանությունը իսահակլանը խաչարեկում է ժողովրդի տեսական, դարերով ստուգված մեծ տրամաբանության հետ, ջոկում ստեղծաբարին ու հարատեղ, այն, ինչ ավանդվում է սերնդից-սերունդ, ապրում է էպոսում, ավանդություններում, ժողովրդի դարավոր բարքերի ու հոգեբանության մեջ։ «Ժողովուրդների էպոսներն առհասարակ վերջանում են խաղաղության սրբազան խոսքով»<sup>1</sup> — զրել է Թումանյանը։ Էպոսային նույն ոգով էլ պետք է բացատրել «Հորս գութանը» պատմվածքի ավարտը, նրա իմաստն առհասարակ։

Ժողովուրդը կովի մեջ է քաշվում ակամայից, որ միշտ էլ նրա համար արհավիրք է նշանակում ու ավերմունք։ Իսահակլանը կողք-կողքի է դնում պատշերազմական տագնապի ու աշխատանքի, աշխարհի բնական ընթացքի ժողովրդական հոգեբանությունը, ընդիմում, որ ժողովուրդն իր տարերքով երկրորդին է հակված, և դա է նրա կենսունակության խարիսխն ու հիմքը։

Շինականը խաղաղ իր գութանն է տաշում, տաշում-տաշում՝ կրակոցների տակ, ասես, հարյուրամյակներով կրակոց չի եղել, կրակոց չեն լաել անգամ պապերը. ի՞նչքան ուժ ու կորով կա նրա հանդարսության մեջ։ Հողի կործքը ճեղքող դու-

<sup>1</sup> «Թումանյանը քննադատ», Հայպետհրատ, Երևան, 1939, էջ 318։

թանն է նրա հավատը, քանի որ նա է սնում շիւ  
նականին, նրանով է շինականը ձուլված հողին,  
իր աշխարհին։ Գութանը չի թողնում, որ խանա  
մարդու բանականությունը, բորբոքում, սլացք է  
տալիս նրա հոգուն, լցնում հույսի, մարդկայնու-  
թյան հաղթանակի անխարդախ հավատով։ Գութա-  
նը երդ է ծնում, շինականի միալար երգը՝ դպաց-  
մունքների անկաշկանդ խաղով ու փալլով, որ ա-  
մենից կախարդականն է համարել մեծ Կոմիտասը.

«Խորհրդավո՞ր ու պաշտելի՛ գաղտնիք. շինա-  
կանը բնության գրկում, բնությունը շինականի  
սրտում վերստին ու միաժամանակ ծնունդ են առ-  
նում»։

Արեն արդեն թռել, ու գլշերն իր մութն է  
փռել. ցորենկը հանգել ու գլշերն է գործի կանգնել։  
Երկու ծով դևմ-դևմի են ծառացել՝ կապուտակն  
երինալին ու զվարթուն և ուսումն երկրալին ու ար-  
թուն. լուսինն անցել է աստղերի գլուխը՝ հերկելու  
շարան ամպերը. երգում են տարուքեր հովերը,  
իսկ մաճկան անցել է գութանավորների գլուխը՝  
արթնցնելու պարարտ արտերը. նվազում են գըլ-  
գըլան առվակները։ Վերեն երկինքն է շնչում, ստորեւ  
երկիրը. վերն աշխատում են լուսինն ու աստղերը  
և հողմավար ամպերը. վարը՝ գութանն ու շինա-  
կանը և գործավար եղները. վերեւ՝ կյանքն ու  
ստորի՝ ջանքը հոգում են միաքն ու սրտի լարե-  
րը։ Շունչ է առնում շինականը ու շունչ տալիս  
իր շարջը։ Թե է ստորս դութանն ու թե տալի

մշակին՝ պատում է արտը, գիլում հողակույտ ալիքներն աշ ու ձախ և ձեռմ ոսկի ակոսների շարը։ Հետևմ է, հեռմ ամբողջ վարը՝ և կրկում է գոմշուկը, և գանչում է գիղջուկը, և սուլում է սարի հովիկը, և փափառմ լիսան ծաղիկը, և գլուզըլում թոթով վարկ, իսկ գոթանի ա՞կը՝ հեծում, լախա, ծըլվըլում, մղկառում, նըռնոռում ու նըլվըսառում է։ Շինական կյանքի մոթն ու լոյսը, գործն ու հույսը ծնում են մեր գոդարիկ գոթաներգը։

Շինականն այն կախարդ վարպետն է, որ կարգում է հարազատորմն բնությանը, սաեղծամ բազմաբեղուն մաքիր, նոցա փչում է իր հզոր ու պարզ շոնչը, գրոշմամ է իր բնավորության էականով՝ ներքին և արտաքին լրիվ կյանքով և կընքում է բասերով ու եղանակով իր հարազատ գաւվակը գուրբաներգը»<sup>2</sup>։

Զգացմանքների, արամադրությունների, խոնների նույն այս կախարդիչ աշխարհն է Խաճականի տարերքը՝ «շինականի հզոր ու պարզ շընչով», «բնավորության էականով», «ներքին ու արտաքին լրիվ կյանքով»։ Այսուղից է ծնունդ առնում աշխարհի արժեքների գնահատության խաճականական չափանիշը, և նա, չկաշկանդվելով երբեք ժամանակի խելածեղ հոգմերով հրապարակ նետվող կոսքերի՝ եսի մոլեգին ցնծու-

<sup>2</sup> Կոմիտաս, Հոգվածներ և ուսումնասիրություններ, Հայոլետհատ, Երևան, 1941, էջ 98—99։

թլունից, պեղում՝ էր ժողովրդական կյանքն ու հոգին, խանդաղատանքով հետևում նրա հավիտենական դարձիքակին:

Արարատայան դաշտի կախարդիչ աշնան զարդարի խորքից, զարդանկարի հարստությամբ ու փալլով է աճա հորդում ժողովրդի բնական, «սովորական» կյանքի գեղեցկության անսանձ տրամադրությունը «Ազգակին երգը» պատմվածքում (1913):

«...Աշնան մի պայծառ առավոտ էր. Արարատայան դաշտի հրաշագեղ աշունը. փոշոտ ցանկերի միջից փալլիվում էին խաղողի ոսկեղեն ողիուցները, նուան ու խնձորները, ասես, հրեղեն գնդակներ լինիին. հոռթի այդիներից լիության անուշ բուրմանքն էր խնկում. վերև, բաց-կապույտում, հավքերի շղթան էր ձգվում, ներքեւ, ցողաթուրմ արածետներով հայ գեղջուկի սալլերն ու ձիերն էին անցնում բարձած աշնան հազար ու մեկ թերթերով»:

Բնությունն, ասես, հոռթիությունից պիտի ճաքի հիմա, ամեն ինչ լիքն է, ուռճացած, պայթելու պտտրաստ, և ուր որ է հյութի հոսքին չի դիմանու ոսկեցիկին վազը, կրացած խնձորենին: Հյութալիությունից ճաքող բնության պատկերը իսահականը խաղաղեցնում է երիզելով սոսիների մեղմ սոսափյունով, քնքանք ու լիրիկականություն հաղորդում բնանկարին: Ահա նա, բնական գեղեցկությունը, և հենց դրանից հետո էլ,

անմիջապես, ընթերցողը ոտք է դնում անբնականության ոլորտը:

Երանգները փոխվում են, նվազում ու խլանում, տհաճ մի շշուկով են հնչում բառերը, «Յարական կառավարությունը փակիլ էր հայկական դպրոցները՝ քաղաքների և գյուղերի, գրավել էր դպրոցների պատկան շենքերն ու եկամուտ բերող կալվածքները։ Հայ ժողովուրդը զրկվել էր ազգային կրթություն ստանալու միջոցներից և հնարավորություններից»։

Շուրջն ամեն ինչ կարծես ակնթարթաբար դատարկվում է, և ցողի կաթիլ իսկ չկատ Կյանքի ու կենդանության ոչ մի զուգորդություն չի առաջացնում այդ փաստը ընթերցողի մեջ։ Բնականի ու անբնականի հակադրության մթնոլորտը հետըգնետե խտանում է, և ապա վերհուշ պատկերի վերջում լիցքաթափվում գեղեցկության հաստատման էպիկական շնչով ու պաթոսով։

Աղքերի ձուլման ցարսական քաղաքականությունը չի պատվաստվում. ժողովուրդն իր կյանքի ակոնքն ունի, իր հունը և ինչ բռնության էլ ենթարկվելու լինի, միևնույն է, հավիտենապես մզվելու է իր բուն հունն ու հոսանքը։ Թող որ այսօր գերզած լինի նրա երգը, բայց նա դեռ պետք է երգի, թերեւս ոչ այն, բայց միշտ իրենը, պետք է երգի, երդ քամի իր հարազատ այր, բնն, գիմից, և երբեք չի խլանա այդ երգը։ Հալածանքից ու հետապնդումներից բնությանը, ժողովրդի բնական

հունին ապավինած հայ պատանիները հաստաբուն  
ընկուղենու տակ «բարձր ու եղանակավոր ձախով»  
հեգում են.

Ալբ, բեն, գիմ,  
Դա՛, եչ, զա,  
Ե, ըթ, թօ...

«Ալսպե՞ս մինչև վերջը, քառասուն-հիսուն  
կրծքից բխած այս հուժկու, բազմահնչուն և միա-  
համուռ ձախը, որ ինքնին հայոց լեզուն է, Երաս-  
խի շառաչի հետ փովելով Արարատյան աշխարհի  
վրա՝ թվում էր, թե սլանում է աղատ—Մասիսն ի  
վերա: Սլանում է իր հարազատ գիրկը, և դա հա-  
րազատության այն ազատ սլացքն է, որ զգում  
ես և ունենում քեզ ծնունդ ու սնունդ տված աշ-  
խարհում միայն՝ հայրենի տան ծխի հոտի մեջ,  
մալրական անաղարտ ժպիտի, քո բլուրավոր ան-  
ջնջելի տրամադրությունների վկա եղերքում ու  
նրա հեռաստաններում: Մտերմիկ ու ինքնաբուխ  
տրամադրություն է ստեղծում պատմողը՝ հեղինա-  
կը. ալբ, բեն, գիմը հայրենի երկիրն ինքն է, իր  
հարազատ արձագանքով՝ նրա բոլոր անկյուններում: Ալստեղ էլ ահա իրար են գալիս ու բանաստեղծու-  
րեն միմյանց հյուսվում Արարատյան գաշտի աշնա-  
նային փարթամության, հոսքի պատկերն ու ան-  
դուսպ հայոց երգը. ինչպես առաջինը, բնական է և  
երկրորդի լիցքը — հաստատում է հսահականը, և  
ոչ մի ուժով կամ կամքով չի հաջողվի կասեց-

նել նրա պոռթկացող ընթացքը։ «Իսահակյանի խորախորհուրդ այս պատմվածքի մեջ, — նկատում է վարպետի ժառանգության գիտակ Ա. Ինձիկյանը, — հայ մանուկների շրթունքներին իբրև ազգային հիմն հնչող հայոց այբուբենը, սիմվոլացնում է հայ ազգային կուլտուրան, աներևույթ, բայց հզոր այն ուժը, որով հայ ժողովուրդը երկար դարերի ընթացքում պահպանի է իր ազգային գոյությունն ու ինքնուրույնությունը, և որը նա հակառակ է օտար նվաճողների ասիմիլացիոն քաղաքականությանը»<sup>3</sup>:

Եվ այսպիս, իսահակյանը ամեն անդամ հարսթուն էր տալիս եղելությունների, երեսութների ու իրադարձությունների բուն էությանը, մի կողմ նետելով երեսութականի ու անցողիկի մշտական շերաը։ Իսկ այդ շերաը նրա ստեղծագործական ճանապարհին անընդհատ նոր նստվածքներ էր բերում, մեկ ծածկվում հուսահատ եսի մոդայիկ կուրությամբ, որ վկաչեսլավ հվանովի բերանով գուժում էր տշխարհի վերջը։

И глубинная мгла до Земли досягла  
И твердь низошла к Земле  
И, как остров один—меж безликих пучин  
Она тонет в единой мгле.


մեկ մորթվող հարազատ ժողովրդի արլունով, որի

<sup>3</sup> Ա. Ինձիկյան, Ավետիք Իսահակյան, ԳԱ Հրատ., Երևան, 1985, էջ 114։

համար, թվառմ էր, թե իսկապես անել ու անդոռո  
էր աշխարհը։ Ոգու կործանման մասին շատ ճի-  
շեր էր լսել Խոահակյանը, բայց դարձյալ շարու-  
նակում էր «կառչած» մնալ ժողովրդական ոգուն,  
անխորտակելի համարել այն ու անսասան։ Հենց  
այդպես էլ անվանել է նա իր պատմվածքներից  
մեջ՝ «Անպարտելի ոգին» (1922):

Հնամենի հնության մասին չեւ պատմվածքը,  
ժողովրդի վերջին օրհասի օրերից է պատմում հե-  
ղինակը, բայց, ասես, նրա մեջ դարերի եղելու-  
թյան թեւեր են հրաւիած ու երանդներ։ Ինարկե,  
ոչ դարերը կան պատմվածքում, ոչ նրանց պատ-  
կերները. արձագանքով միայն, հեքիաթատիպ մի  
ուրվագծով Խոահակյանը քանդակում է մարդկային  
հնագույն մի ողջ ցեղ. «Եփրատից այնքան հեռու,  
որ հաղիվ լսում էր նույնիսկ լուս գիշերին նրա  
խոր շառաչը՝ անապատում կալին իրար մոտ մի  
քանի խղճուկ առաջալիքաներ»:

Հայրենի հավերժ ողբալի սպանդից զերծած՝  
մի քանի տասնյակ հայեր էին ծփարել նրանց  
ներքեւ—ծերեր, կանալք և մանուկներ...։ Անպա-  
տում պաշտպանվելու համար որպես մայրական  
զերկ Եփրատին են կառչել հալածական հալ ընտա-  
նիքները։ Իր վիշերով նա հնուց շատ է փրկել աս-  
տանդական հային։ Վաղեմի ժամանակներում Եփ-  
րատը հայկական բերդերի պարիսպներ է ողողել,  
այժմ չկան գրանք, և փոխարենը ավերակներ են։  
Մնացել է միայն Եփրատը իբրև ժողովրդական



վշարի վկա, համառությամբ զիմացել է անհամար տառապանքների և դարձել ժողովրդի ապավենը:

Ճիշտ այսպես է պատկերացել Եփրատը նաև Թումանյանին. «...նորից հասել են իրենց արյունակալած աչքերը ներքեւ, Եփրատի հավիաթ վրա, — դրել է նա: — Են հովիտի վրա, ուր հեթանոս հայովարդավառ ու Շաղկազարդ է արել, պաշտել իր Անահիտն ու Աստղիկը, իր Արամազդն ու Վահագնը. Էն հովիտի վրա, ուր հայ ժողովուրով իր Մեծ Տրգատի հետ միասին մկրտչել է Արածանու սուրբ շրերում, քրիստոնեություն է ընդունել, ու իր մկրտության տեղը տաճար է կանգնեցրել, ճակատին գրոշմել... Են հովիտի վրա, ուր հայ ժողովուրով գարերով ճակատ-ճակատի է զարկել հին Պարակասատանի ու Արևելքի բոլոր աշխարհակալների հետ: Են հովիտի վրա, ուր վառված է Զիրավի գաշտը, որի վրա էնքան ու էնքան հաղթանակներով խոյացել են Արշակունիները, Բագրատունիները, Մամիկոնյաններն ու Արծրունիները»<sup>4</sup>:

Պատմական հեռավորությունից եկած Եփրատը մոնումենտալություն է հաղորդում նրա ամիերին ապավինած մարդկանց: Ժամանակը խաթարել է այդ մարդկանց գիմանկարը. «Յնցուտիներով էր ծածկված նրանց ոսկերացած մերկությունը, և

<sup>4</sup> Հովիտի Թումանյան, Երկերի ժողովածու, Հատ. IV, էջ 310:

նրանց հայոցքների մեջ մշտական սարտավին էր սպառծ...

Ժպիտ և ուրախություն սպանված էին նրանց աչքերի մեջ. միայն անմեռանելի հույսի մի կալծ կար, որ տակալին կյանքի նշանը էր տալիս նրանց բիբերինք: Նմանվամ են նրանք գարերով, տաշված ու մաշված ֆիգուրների, առնջալից խոշտանդումով հոնվել է նրանց միջից ուրախությունը, խեղաթյուրվել կերպարանքը: Երկար, շատ երկար են չարչարվել նրանց հուծված սոկորները: Առկայն արձանացած քանդակի պես գեղի անծառը ու խորհրդավոր հեռուն է ուղղված նրանց հայացքը ու կարծիս ամբողջ աշխարհն է կինտրոնացված նրանց աչքերում: Կանգնած են նրանք մերկ, անկինդան, և միայն աչքերն են աննկունոթյան առկայթումով լուսավորված. «Դիշերները՝ մետաքսատ ու վիրասապերի պես փաղաքշող ու քնքուչ՝ թե՛ անգորրում էին այդ թշվառների հուր ու զարհուրանք տեսած աչքերը, սակայն հաճախ քրքրում էին նրանց հոգիները կարմիր, ահավոր տեսիլներ...»: Աւրիշ ոչինչ չի ասում իսահականը այդ մարդկանց մասին, կորցրել են արդ մարդիկ ամեն ինչ, զրկել ամենից և նրանց մեջ միայն արդ ոգին է ապրում՝ համառ ու անպարակի ողին:

Ամայի անտապատ, կմախքացած կերպարանքներ և հզոր ու անպարակի ոգի. թերեւ անսպառ, բայց խորսաքիս խահակյանական զագագրում է

ոտ։ Դեղին ավաղուաների, բացարձակուազիս հարթալին կտավի վրա հայոց անկուտընլի ոգին է ծառանում, և շրջանակի արդ գատարկության ու մենության սիմվոլիկ խորությամբ ավելի է ընդգծվում, թե ինչն է գարերով պահպանի ժաղավըրդին։ Համբերատար ոգին, դա է նրա նկարագրի ամենաբարորոշ հատկանիշը, և դա էլ նենց փորագրի ու դրոշմել է Խոհհականը։ Եղ ապա որպես արդ ծալացած համբերատար սկսու ցուցանիշ ուրագագծում է արագիսի մի գիպված։ Ավագի վրա մայրը հայոց ալբուբենն է սովորեցնում իր զավակներին, «...մայրը ցուցամատով գրեց ավագի վրա»։

«Աստված պահն հայրիկս, քուլիկս, աղբերիկո»։

Երեխան հեգելով կարգաց զբածը։

— Ապրի՛ս, աչքիս լուսիկը։ — Մայրը նորից համբուրելով փոքրիկին, մի քանի չորացած որմավ տվագի։

— Հիմակ ալ գուն նոսան գըեւ։

Երեխան արմավը ուտելով, սկսեց փոքրիկ մատով գծեր քաշել ավագի մեջ։

Մայրը գիմելով մեծ որդուն՝ տասց։

— Ի՞մ սիրունիկ Վազգինս, անօննու ի՞նչ գըրեկ ես։

Մանուկը մի քանի բան էր գըեւ ավագի վրա, մայրը աչքերը լարելով կարգաց։

— «Ալապգը տարավ հայրիկս, քուլիկս, աղ-

բերիկս, կը սեն, որ սպանած են. ևս չեմ հավատար. երբ տուն գառնանք անոնց հոն ողջ առողջ պիտի գանձնք»:

— Հարկավ, սիրելիս, հարկավ...»:

Հերոսության փաստի հետ չի կապում իսունականը իր ժողովրդի անպարտելի ոպին, այլ ժողովրդի բնածին օտարենորյաց էության հետ: Էռաթլուն, որ չի լքում նրան կյանքի նույնիսկ ամենաշարդված, բզեզած պահին: Մինչդեռ ժամանակը, թվում է, համրած էր ազատացնելու ու ճզմելու այդ էռաթլունը. իսկական արվեստագետի խորաթափանցությամբ ողբերդական մեծ գիպվածով անդամ Բահականը բացահայտում է ոչ մի բանով չտարբարութիւն ժողովրդի ավանդական հոգեբանության ուժը, նրա մեծ ինքնությունը: Այս մեծ հայացքով էլ անա պայմանագրվում է նրա գեղարվիստական մոռեցումը թեմային:

Իսահականի պատմվածքները հեռանում են ժամանի ավանդական պատկերացումներից: Նրա պատմվածքների բնույթը համարյա առնչություն չունի երեսլիթների ընդգրիման տարողության կամ շրջանակի: Հետեւ և չի բնույթագրվում այդ հատկանիշով: Զափազանց կարճառոտ են ձեռվ, փոքրաթիվ է դրանց լընդգրկած երեսլիթների, դեպքերի ու գեմքերի քանակը, նրա պատմվածքներում խռովը կարող է վերաբերեն միայն մի մարդու հակառակութիւն, և այդուհանդերձ, էականը ծա-

վալը չէ, որպես տարբերություն վիազակի, վեպի կամ էպոսի: Իսահակյանական պատմվածքները խորապես էպիկական են, էպիկականություն, սակայն, որ չի արտահայտվում ձևական հատկանիշներով: Նրա պատմվածքների յարահատկանությունը նկարագրվող գեպքերի կամ՝ գեմքերի մասշտաբայնության մեջ չէ, կամ՝ զբանց շրջանակի չափի ու մեծության: Իսահակյանի պատմվածքներում կարեռը վերաբերմունքը, մոտեցումն է կյանքի հանդեպ, հալիցակետը: Արդ էպիկականությունն արտահայտվում է ժողովրդական ականքի բուն, հավերժորեն կինունակ հնարավորությունների ընտրության մեջ: Իրեն հատուկ հանճարեղ պարզությամբ նմանօրինակ էպիկականությունն է մատնանշում Հովհ. Թումանյանը հակական էպոսում, զրելով, թե այն «ոտեղծում է էն բարյագաղաքական աշխարհը, ուր անձնավորվում ու կինտրոնանում են ամբողջ ժողովրդի գարավոր մաքասումներն ու հեռավոր խղեալները, բայր հոգիկան և բարյագական կարողությունները»<sup>5</sup>:

Սա էպիկականության ըմբանում է որպես կյանքի, աշխարհի հանդեպ մեծ հարցքի, որպես իրականությունը ժամանակավոր շերտերից ու ցանցերից բնանախափելու կարողության: Թումանյանը ուշագրաւթյուն է հրավիրած նաև հարցի

<sup>5</sup> Հովհ. Թումանյան, երկերի ժողովածու, հատ. VI, էջ 358:

մի այլ կարծոր կողմի վրա: Ժողովրդի կյանքի ամեն մի վերաբռտագրություն գեռես էպիկականություն չէ, ժողովրդի կյանքը միայն և միայն թհմա է, մինչդեռ իրականում ժողովրդական կյանք կոչվածը շատ է բարդ ու բաղմազան և շատ բան կարելի է այստեղ դիտակնու ունենալ: Յուրաքանչյուր իր կիսմանում այն բնիվում է բոլորովին այլ և այլ ձեւերով: Թումանյանը էպիկականությունն առնչում է ընդհանրացման որոշակի աստիճանի հետ և խմասուուն կերպով նկատում, թե «ժողովուրդները» ոչ մի բանի մեջ էնքան պարզ ու պայծառ չեն երևում, ինչքան իրենց աղդացին էպոսի մեջ»<sup>6</sup>:

Նմանօրինակ էպոսի մի բեկոր է, ասես «Համբեկանքի չիբուխը» (1928) պատմվածքը: Իսահակյանը գիմում է ժողովրդին ոչ որպես հասարակության «ցածր» խավերի կամ «պանդվածների», ինչպես ընդունված է ասել: Վերհիշելով իր պատահեկության օրերը, նա ժամանակի բուժուական հասարակությունից զատում է ու ներփայացնում այդ հասարակության կողքին, ասես, ինքնահծծան ու անպարտելի ժողովրդական ուրույն կյանքը: Մի կողմ է թողնվում նաև մարդկային կյանքի առօրյան: Պատմվածքում առօրեականի հունում չի ներկայանում Օհաննամու կյանքը, այլ,

<sup>6</sup> Հովին. Թումանյան, Երկերի ժողովածու, հատ. IV, էջ 392:

եթի կարելի է ասել, առօրեականի ետեռմ, խորքում։ Պատմվածքը զեղարվիստական իր հյուսվածքով պատմողին, որ հեղինակն է, և ընթերցողին տանում է ինչ-որ հեռու-հեռուները։ Հեռուների այդ արամագրության համարդ սլաբում էլ ահա բացահայտված է Օհան-ամու հոգիբանությունը։ Օհան ամուն՝ հեղինակը, նրա ամենօրյա զրուցակիցները, ինչպես և ընթերցողը, այցելում են մի կողմ թողած, վերացած առօրյա հոգսերից ու տպագրություններից, նրա ներկայությամբ հանդարտ ու լախասիրտ են նայում աշխարհին։ Դընում ես մի ինչ-որ այլ, ուրիշ վայր։ այլության ահա այդ արամագրությամբ է համարված ողջ պատմվածքը, և ինչ-որ հմալող բան ունի դա իր մեջ, հրապուրիչ, ինչպես հավերժորեն մարդուն ձգող հեռուները՝ հեքիաթալին ու կախորդիչ։ Մինչդեռ այնքան մոտիկ են ուրվագծվում թերթած ջրազացը, ցամաքած առուն, մերձակա ծառուտը, որի ողջ բուրմունքը, ասիս, իրենց վրա են առել առվի ափի որբացած երեք ուսին ու մենավոր բարդին։ «Այսուհեղ էր մի ժամանակ չխկչխկում։ Օհան-ամու ջաղացը։ Առուն չորացել է հիմա, ջաղացը ավերվել վաղուց, միայն երեք ուսի և մի բարդի է մնացել այն վորքը ծառուտից, որ անկել էր Օհան-ամին ջաղացի շուրջը»։

Այս վորքըիկ հողակառը սովերի պես երկարում, միախառնվում է մի ինչ-որ խորհրդավոր կլանքի հետ և մղում, տանում քեզ հեռուները։

Հեռուների այդ պատկերը, սակայն, պատմվածքում՝  
պարուղիած չէ մերժվածության կամ փախուսուոր  
տրամադրությամբ, որն, անշուշտ, «կղարգարիր»  
հիսոթափիված մարդու պողա ընդունած ինտելի-  
գինաթին: Իսահակվանական ժողովագամիրությունը  
հրբեք չէր ակազմութիւն էսթետիկական նման մի  
անձուկ կաստայական շրջագծի մեջ: Հեռուների  
պատկերը աշխարհը լքելու պատկեր չէ, այլ հայտ-  
նագործություն աշխարհում, որն իր ակունքն է  
անում մի այլ հունից ու ոլորտից: Իր հնամենի  
հունով, ափերակ, ջրով, իր լուրահատուկ կոճակնե-  
րով ու խոխոչյունով էր հոսում ժողովրդական-  
կանքը՝ բազմապիսի ճանապարհներով ու արա-  
հետներով: Եվ գրան չէր կարող խաթարել, ըստ-  
էռթյան, բուրժուական հասարակության ոչ մի  
ալիք կամ փոթորիկ, այդ. իրականությունը հե-  
ռունենուու էր: Այլ է այնուև կերպվածքը, բուր-  
ժունքը, նաև վերկենալը, ուրիշ է քայլվածքը, այն-  
չէ պահպածքը, հոգու հկեցք, այլ է բառը: Իր բու-  
րժութին լուրովի մակրեռութն ու տեղանքն ունի  
այդ կանքը: Իսահակյանը տալիս է այդ կանքի  
միայն մի նրբագիծը. «...Օհան-ամու ծերունի-  
րնիերները, գլուղից-գլուղ, ցուպերը շավիզների-  
քարերին ծեծկելով, քթերի տակ մի հին բան թոն-  
թընալով, կորամեջք ու անկանկալով գալիս էին շա-  
ղացը հատկապիս Օհան-ամու ընտիր թլությունից  
մի չիբուխ քաշելու և հնությունից մի-երկու խոսք»

իրար հետ որտանց խոսելու համար, և նորից աընկ-  
տընկալով վերադառնում էին իրենց գլուզերը։

Սա ևս կլանք է, բայց ալտահեղ այլ ևն զգաց-  
մունքներն ու խոհերը։ Խոահակյանը որսացել է  
այս մարգիանց ներքին անգորության պահերը,  
և անգորրի, խաղաղության այդ կարողությունը  
չէ արգո՞ք ժողովրդի մարգիանց զարգարող զար-  
մանալի համարաթյուններից մեկը։ Եվ այդ խաղա-  
ղությանը ցուցը քարերին ծեծկելու ձևի մեջ է,  
թոնթնալու, բարեկամի «թյությունից» չիրաւո-  
ծիսկու մեջ, որտանց զրուցելու։

Այսպիս մանրամասնից-մանրամաս բյուրե-  
ղանում է մարգիալին մի ինչ-որ հազելիճակ, զբու-  
թյուն՝ անհամատելի մանրիկ հոգսերի ու շահա-  
գլըրգությունների հոռովհան։ «Պատանի երեակա-  
յությանս համար,— զրում է Խոահակյանը,— երե-  
պում էր լուրջ, մենակյաց Օհանամին, իրի նահա-  
պետական դարերի մի խաստուն, որ վաթուուն  
տարիների զագաթից նայում է աշխարհին,  
միաք անում աշխարհի բանը՝ ծխիլով իր «համբե-  
րանքի չիրուսը»։

Երկինդված է Խոահակյանի հերոսը, նա և գոր-  
ծողության մեջ է, և միաժամանակ թեածում է գոր-  
ծողության վրա, նա և առկա է իր անմիջական հուշ-  
գերով, և գալիս է դարերի իմաստությունից,  
նա և պատմվածքի գործողության տառաջատար  
կոնկրետ մի գեմք է և միաժամանակ պարուրված  
է գեղքերն իմաստավորելու ինչ-որ առաքելու-

թիւմբ: Նրա մեջ զուգակցվում են, տսիս, աշխարհի անցած գնացածը և այդ անցած գնացածի հայեցումը: Դրամտափի պատմության հետո է նու, միաժամանակ և այդ պատմության գնաճառապը: Եպիկական այս մեծ վերաբերմունքն իր մեջ զբարամափմի տարբել ունի, անշուշտ, և այդ բարդ ձուլվածքի մեջ ինչ-որ մի բան հիշեցնում է անտիկ ողբերգություններին: Նրանց երկիրում երկիրկիվածությունը միանգամաբն որոշակի է. կատարվող իրավաբանություններ և գրանց ուղեկցող հարցոք, «խորի» միջացով արտահայտվող վերաբերմունք: Անմիջական հղելությունը կամ իրողությունը գիտվում է աշխարհի շուրջը լայն խորհրդածությունների ոլորտում: Ժամանակները վերափոխել են գնդարվեստական այս ձեր, ստիաբն հավերժորեն ժառանգվել և ապրել է աշխարհի էռթյունը վերծանելու և կըսադատելու մարդկային մղումը, ժառավական հայացքը: Անտիկ հեղինակները աշխարհի բանը անմիջականորեն համադրում էին այդ հարցոքի հետ: Հետագայում անմիջական այդ կապը խղվում է, և ծալիքին, տսիս, խույս են տալիս միմյանցից: Կանքը շատ է հեռանում անտիկ անաղարտությունից, «իր մանկական հասակից», ինչպես տսում է Մարքուը, և ձգտում ցուցաբերում՝ կեղեապատելու ժողովրդական կանքի անաղարտ աշխարհը: Եվ դա մանավանդ XIX դարի վերջին և XX դարի սկզբներին, կապիտալիտակոն հարաբերությունների պայմաններում:

Կյանքի հարստաւթյան հանգիսդ ախտանիւկան հավատ էր պետք կրկին համազրելու համար ժողովրդի բրւրեղյա հայացքը իրականության ճիշտ, որ բավականաչափ հասցրել էր արդին առականութել Եվ աբգափիսի հավատ ունեին Թումանյանն ու Խանակյանը, ժողովրդական կյանքի անհուն մի պաշտամունք՝ նժարի վրա—բարժուական հասարամիւթյան այլանդակության վեմ ու նրա կողքին:

«Համբերանքի չիրուիում» Խանակյանը Օհան-ամուն գնում է իրագարձությունների բուն ոլորտի մեջ, ապա հետացնելով գրանցից, նույն Օհան-ամուն ներկայացնում է կյանքի լայն հեռանկարի մեջ, հակագիր մասշաբաներ են ծնվում, կյանքի էպիգովը առնվում է ժողովրդական հայացքի շրջանակի մեջ, չափում նրանով:

Դիպվածը ոս է, որ գրողը վերաբառում է ողամշվածքի առաջին էջերում. «...զբուզում հոգաբաժին եղավ: Հարուստներն իրենց մեջ բաժանեցին բերքի հողերը և ստերջ հողերը ալին թուլւերին, խեղճերին:

Օհանը զայրացավ: Վասից ու բորբոքից հոգազուրկների արդար վրեժը: Դրազի զրկմած մասը ըմբասացավ: Հարձակվեցին, ծեծեցին սեսին ու մի քանի հարուստների:

Դանդաւալ հասավ քաղաք: Եկավ կաշառված պրիստավլը և մի քանի լասավուներով (սստիկան), հավաքեց ըմբաստներին, բարկացավ, ոտները գետին դարկեց ու քաշեց նրանց մարակի տակ:

Արքունը կոխեց Օհանի աչքը. ձեռքը ձգեց  
սպատաճած քարին և նետեց պրիստավի կրծքին:  
Ծեծվողները թե առան, հարծակվեցին լասավուշ-  
ների վրա, զինաթափեցին նրանց, քարաճալած  
արին պրիստավին ու ոստիկաններին և գլուղից  
քշեցին:

Երրորդ օրը, երբ կապակները հկան նրանց  
ձերբակալելու՝ նրանք գլուղից փախել էին արգեն,  
ելել էին սարերը, «Պաշադ» էին ընկել:

Կարճ ժամանակի ընթացքում փախստական  
գլուղացիները մեկ-մեկ իջան գլուղը, ընկան հա-  
րուստների սաները, ներում խնդրեցին և ներմիցին:

Օհանը մնաց չորս ընկերով փախստական:  
Մի ժամանակ հետո, չորս ընկերներն էլ եկան,  
վզները գրին հարուստների շեմին, ներում ստա-  
ցան: Բայց Օհանը մնաց մենակ և անսասան: Նա  
չգիշեց: Մերժեց հարուստների պատգամը, որ տ-  
ղարկել էին նրանք — հանձնվել, զղալ և թողու-  
թիւն ստանալ»:

Այստեղ ահա թելը կտրվում է. գեղքերի  
պատմութիւնը սկսում է հեռանալ առաջին պլա-  
նեց, իր առաջը զիջելով գեղքերն ու աշխարհի  
բանը գնահատող Օհանին. գեղքերը գրվում են  
Օհանամու հայացքի տակ: Դեպքերը նրան իրենց  
հետ չեն տանում, նա չի ընկնում գրանց հրու-  
վածքի ու ընթացքի մեջ: Կերպարի, ինչպես և  
ստեղծագործութեան զարգացման մի շատ հազվա-  
գեց հղանակ է սա, գեղարվեստական ինքնատիպ

մտահղացում։ Իսահակյանի հերոսը կապանքված է, գործողության գերին չէ, առաջ մղելով գործողությունը, կյանքը, նա վեր է բարձրանում դրանից, կշառագատում ու խմաստավորում այն։ Երա մարդկային ամուռ բնությունը վանում է իւրինից օրվա անցուգարձը, հեռանում է նրա միտքը օրվա դեպքից, թեածում դեպի մեծ աշխարհը։

Բնորոշ է հերոսի արտաքինն իսկ՝ հանդարտաբարու, կաղնու նման հաստատ։ Օհան-ամին թիվն էր տվել ծառերի տակ։ Մի փոքր արտիճին մասնակի ծածկում էր նրա զլսի նոսր, ճերմակ մազերը։ Ճակատը շատ կնճռոտված էր երեսում։ Ահադին ձլունափալլ մորուքը խառնվել էր բաց կրծքի ալեխառն մազերին։ Ինքնամփոփ ծխում էր չիբուխը։ Ուների տակ մրափում էր Ասլանը, Օհան-ամու հավատարիմ, հսկա դամփուը։

Ծառի հենարանով հողին հենված ամու իսաւ-հակյանական ալու զիմանկարում, ասես, քանդակված է մարդկային սերնդի ու բնության անանցանելիությունը։ Առանձին վերցրած նրանք չեն լրացնում միմյանց, որպես օժանդակող երանգ, այլ միահյուսվելով վերաճում են միասնական մի ամբողջության։

Պատմվածքի պարզացմանը զուգընթաց թել առ թել հարստանում է Օհան-ամու կերպարը և զնալով ալիկի են աղստանում զիսպվածի ուրվազծերը։ Դիպվածը չի ծավալում, նրա մեջ չի առնվազում Օհան-ամին։ Իրողությունը սկսում է ա-

դոտանալ, մարել կյանքի լախ ու մեծ հեռանկարից ոլորտում։ Անձկանում է գիպվածը, սուզվում՝ մարդկացին բախտի մեծ ընդերքը, դառնում աննշմարելի, և վերջապես լուծվում՝ դարերի հեռուներից—հեռուները ձգվող խաչուղիներում։

Անարդար հողաբաժանութիւնն պատամութիւնն հետ կտաված լիմբուսութիւնն ու ստրկական հնազանդութիւննը կարծիս անցնում են Օհանամուաչքի ասցեից, փորձարկվում նորից, թողնելով ծանր մի նստվածք՝ իբրև ճակատազրական մի իրողութիւնն, որ անընդհատ իր պառւլոն է գործում մարդկացին գոյութիւնն հավիահնական ըլլթացում։ Օհանամուան մտահոգում ու մուալութիւնն է պատճառում ոչ թե իր հետ պատահած գեղքի անմիջական արդյունքը, այլ գրա հոգեբանութիւնը։ Ծանր է, և ինքը չի կարող հաշավել այդ հոգեբանութիւնն հետ։ Ծասացման մոլեգնութիւնից՝ ստրկական հոմակերպութիւնն անցնելու փաստը կրծում է նրա հոգին։ Նա մենակ է զգում իրեն զլաւզում և որոշում է «աշխարհաթող» լինել։ Ինչո՞ւ պետք է արդակի լինել աշխարհի բանը, — ոս է ահա, որ տանջում է նրան։ Անմիտ չէ արդյո՞ք աշխարհի կասուցվածքը, որտեղ ըմբռոսութիւննը կարող է վերածվել հնազանդութիւնն։

Գորշ սավերի պիս ուղեկցել էր մշտապես հընազանդութիւննը՝ անհնաղանդութիւննը, փոթորկանուց ժամանակներին հաջորդել են հիտոթափութիւնն։

թիւնն ու անկումը։ Փոթորիկը հանգարավում էր, պոսթկումը հանգում, և նորից իրականությունը սպառումների վրազում էր բերում, հաշտեցնում մարդուն խղճուկ գոյությանը։ Իսահակյանի ճանաչած մարդկային պատմությունը բնութագրվում էր ահա արդարիսի լուսավոր խիզախումների և ամոթալի հնաղանդության հաջորդականությամբ։ Իսահակյանը, սակայն, չի սրբագործում այդ իրազությունը և չի մսացվում այդ տիսուր ճշմարտությունից։ Նրան օտար է ծայրահեղությունը այսակեզ ևս Իրքի մեծ արվիստագետ նա տեսնում էր կյանքի մեծ բարդությունը, նրա զարմանալի ոլորտապաւլմանը, փայլառակումնելը, որ անել չէին թողնում խոնարհելու անկումային այս կամ այն վարդապետության առջեւ։

Պատմության ողբերգական, ավելի շուտ պրամատիկ ճակատագիրն էր զբաղեցնում Իսահակյանին։ Մարգիության մանկության հենց նաւաշեմին շղթայիկը էր մարդկային ախտանիկան ընդգուռմը բանության դեմ։ Ժայռերին էր գամկել մարդկային բարու ամենազնվոր նահատակը՝ Պրոմեթեսը։ Դեմ հանդիման էին ելիկ Պրոմեթեսն ու Զեսը, ըմբռուտության և ստրկության նախակարապետները։ „Прометей и Зевс—это божество разделившееся на самого себя, это сознание, распавшееся на две стороны“<sup>7</sup>. Բժրու-

<sup>7</sup> Белинский, Полное собр. сочинений, т. V, 1954, стр. 322.

տությունն ու սարկությունը անբաժան էին եղել միմյանցից. Պրոմեթեսը գուշակում է մարդկալին ոգու և մզման հավիտինական տառապանք:

Այդ տառապանքը ճշտել ու հաստատել են հետագա ժամանակները, խոյանալով բայրոնյան ըմբուռ կոչերում, Շելիի Պրոմեթեսի որտակիղեք մորմոքներում, լիրմոնտովյան զեի մոլեգին անհանգստության մեջ: Բանությունից ազատազրկիլը մարդկության գոյության մհծագույն խորհուրդն էր, և այդ սգով է համակված Իսահակյանի Օհանամին: Արյունը զլիսին է զարկում, երբ նա տեսնում է երեկով ծառացած մարդկանց գլուխ խոնարհը բանության առջե: Ակտմազից մտաքերում ես Իսահակյանի մի այլ պատմվածքի հերոսին, անհնապանդ Շաքրոյին և նկատում գրողի հետեղականությունը երկար ու ձիգ տարիների ընթացքում: Շաքրոն հակապատկերն էր Օհանամուընկերների, և երեք ծանկի չիկալ բռնության առաջ, գլուխ համար էլ պաշտամոնքն է ժողովը ըստի, էպիկական հերոսը ժողովրդի ու Իսահակյանի:

Ահանապանկություն էր նաև Օհանամու «աշխարհաթողությունը», յուրօրինակ պոութիսում՝ սանձազերծելու ստրկության ու գերության շղթան: Ժողովրդական տարերքին հարազատ է նաև ընդվզման նմանօրինակ ձեզ, որը և պարմանավորում է էպիկական շունչն ու ոգին: Իսահակյանի պատմվածքում: Օհանամին իր «աշ-

խարհաթողությամբ» գնահատում՝ է աշխարհի բանը, Իսահականը նրա հայացքով չափում է աշխարհը, և այդ զգասա չափում ձեզ հավատ է ներշնչում մարդկության առողջ տարերքի, նրա կինսական հնարավորությունների հանգեցք: Եկատենք նաև, որ այդ հավատն արգեն ելնում էր վերածնված հայ ժողովրդի իրական փորձից:

Օհանամու «աշխարհաթողությունը» Իսահականի համար հսկուենասություն չէ երբեք, միակուացում ենի գլուխում, այլ ժողովրդական անպարտելի կամքի արտահայտություն: Մանավանդ, իթե մտարերենք, որ «աշխարհաթողության» որպես ծառացման լուրավի ձեր մտահղացումով է մշակել բանասաւեղծը նույն ժամանակներում «Ասսմա Մհեր» վիպերգը:

«Աշխարհաթողություն» չէ, ի՞նչ է հապա Մհերի առանձնանալը Ագուավի Քարի անձավաւմ, Օհանամու նույն համբերությամբ զինոված՝ ցասկու ու անզիջում.

Աւ կըմաքե անմահ Մհեր  
Աշխարքի բան,  
Աշխարքի բան, հանց որ իժ-օձ,  
Կը խեթըթէ սիրոն ու հոգին:  
Աւ ոչ կուլա, ոչ կը զզչա,  
Որ Քրիստոս խղճա-զթա,  
Վես արարքին թողություն տա:

Հարազատ էին Մհերը, Օհանամին Իսահականին, որ թերեւ «աշխարհաթողության» նույն

լմբուս ծառացումով հայրենի ափերը թողած գեղեցիկ էր աշխարհից-աշխարհ, և ապա աշխարհը թողած նորից առավիճել հայրենի հղերքին ու ժողովը դիմում՝ նրա Օհանամիներով, պարզ ու մարդկացին փոխարարելություններով, սիրով ու պատվավ, աքնությամբ ու ոլացումներով։ Արտասահմանն իր քաղաքակիրթ բարքերի ու զգացմունքների տունավաճառով չէր շլացրել բանաստեղծին. միակ ճշմարիտն ու որբազմնը շարունակում էր մնալ մարդկային այն աշխարհը, որ գարերի քառուղիներում բլուրեղացել ու փափկ էր հողի վրա, ձուրվել հողին, ժողովրդական կյանքը՝ տկարին օգնության ձեռք պարզեցու, ջրի կարկաչն ու հողի շշուկը վայելելու անտղարա կուռքերով ու անտվածություններով, որին փարզում է նա արդեն տարիներով ապրած, վերապրած կարոտի անհուն ուժով ու խանդադառանքով։

Սովետական Հայաստան կատարած այցի ժամանակ բանաստեղծը դրում է «Համբերանքի չիրուխը» (1928), «Հովիկերգությունը» (1929) և ապա արտաստանան վերագրանալուց հետո, 1933-ին՝ «Հայրենի հուշերը»։ Այս երեքի մեջ էլ նրանց բազմազան տրամադրություններով, գաղափարական նկատմաներով հանդերձ, խոյանում է ժողովը դիմում ու հայրենիքի բանաստեղծական կերպարը, մեկ խոհական-էղիկական հյուսքի մեջ՝ հանդարտ ու ամսացի, մեկ լիրիկական հույսով պարունակած՝ նովիտական ու սիրելի։

Եվ կրկին վերհուշի ընձեռած ողջ հավատախութամբ, որով նա մերժում է, ասես, իր ճանապարհին ընկած ամեն-ամեն բան և նորից ձեռքը կնում հայրենի հոգի վրա Բոլոր մյուս զգացմունքների ու որամադրությունների միջից սրագիս ամենից ծանրակշիռը, առանձնանում ու նորից հզոր թափով զարկում է իրենը՝ հոգի կրօսա զգացմը՝ որպիս հասուն տարիների միակ տարերք ու էռթյուն Եվ վերհուշն արդյո՞ք միջոց չէ զեղարվեստորին իմաստավորելու ամբաղջ ահսածն ու ապրածը, մատնացուց անելու խորքերում թաքնըված ամենասրբազանը:

Տեղն է ասել, որ Խառնականի պատմվածքներում, ակնարկներում, պատկերներում առհասարակ որպիս օրինաչափություն միշտ էլ ավելի կամ պակաս չափով տիրապետում է վերհուշացին տարբերը, որն, անշուշտ, իմաստ ունի իր մեկ՝ խոհական, ինչպիս և զեղարվեստական։ Հետապարձ հայացքը տարիների հիսավորությունից նվելությունը, անցքը ավելի խորքից է բնութագրում, ակունքից ու բյուրեղացածի նրանումներով, կրցրածով ու գտածով լի տարիներ, այդ գիտականից ավելի հավաստի են լինում ճշմարտությունները, արամադրությունները ստուգված, հիմնավոր է լինում խանի փորձարկման բովը Ոչ թե տաք հետքով, շիկացած կրօսով, որի գեղքում հաճախ կարող է ցցվել անցողիկ շերտը, հաճամուաք մզկւով մայունն ու տեսականը։ Վերհուշի խառնականական

հնարիանքը, կամ հակումը միջոց է զատելու և ընդդեկու մնալունը, ոքն ընտրելու մեծ վարպետ էր բանաստեղծը. ժողովրդական կլանքի ու հոգեբանության ակունքից քաղված՝ անցողիկի հետ իր զարմանալի խաղերով ու բեկլեկումներով:

«Հայրենի հուշեր» — տարիների կարոտով բանաստեղծը նորից է ոտք գրել հայրենի հողին, և հողը նրան ընդունել է հանդարտ ու լիին Խստափեմ է հողը՝ տառական ու հանդիսավոր ոչ մի ցուց. զբա համար էլ թերեւ, նրա վրա հենվիլը գժվար է, չսալթաքելը երբեմն ուժից վեր: Բայց հողի վրա ամուռ կանգնածի համար քաղցրից — քաղցր են նրա ամենահասարակ բարիքները: Հողի հարուցած այդ սովորական զգացմունքների մասին է հենց խոսում իսահականը. դա քարագործի, սելվորի, ջրակորի առօրեական բերկրանքն է՝ զերծ արտաքին փայլից ու փառքից, բայց և ամենից արբիցնողը, տեականը, որ հոգեկան հարստե կլանքի անունն է, մշտական ակունքը: Ոչ թե տատառության եղջյուրից թափված բարիքներ ու վարիլքներ, այլ, առևնք, չուրն ամին առնելու, ոնձի բուրմունքը հոտուական հասարակ սւրախություն, որ վերհուշի տաշջին խև տողերից տագնապոյ թրթուած է, ելեէջում, հնչում որպես անանցանելի մի բախտաբիրություն:

«Ահա մեր պյուղի հանդերը, ուր աղջիկների և աղաների հետ քանչար էինք քաղում, ահա լիռները, ուր գիշերել եմ ոչխարների հոտերի մաս,

երբ ընկերներիս հետ հովիզ էիր: Գյուղի հանգերից նրա միտքը ուլանում է գեղի պարզութա մանկանց բերկբալի զբաղմունքը, լեռներից՝ գեղի արգ շինչ հոգիների թևավոր երաղները:

Հայրենի հողի խաճակլանական վերհաւշը մշաապես ներթափանցված է մարդկացին պարզ հոգիների, ժողովրդի մարդկանց հանգեալ մեղմ քնքշանքով: Նրանց պարզությունը, սակայն, աշխարհից անտեկյակ իցիլիկ վիճակի չէ: Կյանքի բոված բյուրեղացած պարզությունն է դա, բազմապիսի մոլորությաններ, մանր-մոնր կրքեր թոթակած ու վիճացած: Ժողովրդական կյանքի իմաստուն պարզությունն է դա, որ ժառանգվել է, սեբնդից-սելունդ հղկվել, հարստացվել ու պահպանվել ինչպիս անգնահատելի գանձ ու հարստություն:

Անհուն մի խաղաղության է ծորում նրա հայրենական օջախից. «Առավոտ է: Հայր հաղել է քիրմանշալի խալաթը (զգեստ), նստել է մտամափոփ, վիրացած, Սաղմոս կամ Նարեկ է կարգում, կիսաձայն: Դասն ճեղքից երկառածորին նայում եմ նորս. կտրծես, խեղճ մարդը մի ծանր ոճիր է գործել, որ հիմտ, աչքերը արցունքով լի, կարգում է սուբբ գիրքը՝ քավիլո համար իր մեղքը»:

Տարեկ մարդու ապրումը բնիվում է մանկան անմիջական հայացքով. կիսաձայն Նարեկն է հընչում, թափվում են նոր արցունքները, մոլորդած նայում է որպին հոր աղօթքին ու արցունքներին,

և խռովում է նրա հսկին հոր անբիծության ստվերին մաքից: Բեկիում է մանկան երկուշած աչքերի մեջ՝ չարի նախազգացումով իր հոր համար, բայց և միաժամանակ կյանքի փշոտ ճանապարհներ անցած արվեստագետի հայացքում, որն արգեն զիահե և՛ հոր թափած արցունքների չափն ու արժեքը, և՛ չարի: Մոլոր է առաջին հայացքը, երկրորդը՝ հայրառ ու տարսակուսանք չվերցնող, որ թևավարված, տսես, հուսուսում է հայրենի օջախը առնելու համար բարուն աղոթող, բարու համար արցունք թափած հոր համակող շունչը: Զգալու և վայելելու համար նաև իրենը, ինչ ստացել է ու պահպանել նույն հայրենի օջախից, ժողովրդական կյանքի անտակ մթնոլորտից՝ կառւրից-կառւր թռչուսելու, ջրի տակ սուզվելու մանկական ուրախություններից մինչև հայրենի լեռների ու հանգերի, նրա պարզասիրա մարդկանց զգալու և պաշտելու բախտավորությունը: Լուսով ու չերմությամբ հն սղողված Խսահակյանի մանկական օրերի մարզիկ, խաղընկերներն ու նրանց աշխարհը: Այնքան հարուստ են եղել մանկական տպավարությունները, որ վերիշելիս անգամ, թըշքում է թե, հաճույքից ու հագեցումից, ուր որ է պիտի կարմիրմեն լիզուն ու զրիչը: Որքան անսոնձ է եղել տպիկը և հրճիկը մանկական նրա մզամն ու թափիր:

Խսահակյանի համոզմանքով վեհությունն ու մարդկայնությունը զարմանալի պարարա հող ու-

նեն վիթթելու համար ու հասկացվելու։ Անստհման է ժողովրդական կյանքն իր արբորությամբ, իմաստության կողքին զարմանաճրաշ պատկերացումներ, հսկու խոյանք, տիրություն ու ուրախություն, այս ամենի խօսկանը հասակ է նեռում միայն այդ հոգի վրա, որին ի բնի օտար է մարդկացինի չափավորումը։

Մեզ ու խնայող հռմորավ է վերհիշում գրողը չար ու գալ անսած ժողովրդի մարդկանց հավատալիքները, որ մանուկ հառակում նրան սարսուռ են պատճառել, իսկ այժմ արդեն և ծիծծաղելի են թվում, և զարմանալի՝ աշխարհի ռատեղծման օրից մինչև ռվերջին օրը սալանող նրանց մաքի թոփչքով, աշխարհի, այսպիս ասած, տակն ու գլուխը շաշափելու, բնատուր հակումով։ «...Օհան տացուն ասում է, որ վերջերս անխծված թափառական հրեան հանկարծ երեացել է Հռոմու գլուղի հավիվներին, մի քիչ գագար է առել նրանց մոտ, մի թառ կաթ է խմել և նորից ճամփա է ընկել, աներեսութացել. հայանել է, որ շուտով աշխարհանցում պիտի լինի, և իր տանջանքները աշխարհի հետ պիտի վերջանան։

Մարմինս վշաքազվում է, և բաժակները դուռ են մաստոցաբանի վրա։

Տեր Միքայելը հակաճասում է առելով, որ աշխարհը կլործանվի միայն այն ժամանակ, երբ Նեռը կերեա. Հայտնության գրքի վիալությամբ գեռ հազար տարի կա ների երեալուն։

Ես հաճգոտանում եմ:

Խլել կլինի արդյո՞ք ժողովրդից հրաշքների մասին զբուցելու նրա սովորությունը՝ ոանձել կլինի արդյո՞ք ժողովրդական մաքի ոլացքը. և չհոել հանկանա, երբեմն, թե ո՞ւր է թոշում ու խորանում նա, այնքան ազատ է ու անկաշկանդ:

Ամենասլացիկ ելեակաբության մարդկային հոգու ամենաբարդ անցումների ու ելեջների հետմիասին— Իսահակյանը ամենից ավելի այս է ընդուզման ժողովրդական կյանքի բան ընդելքում, նրա պարզության մեջ ու բնականության. այդ ժողովուրդն իր գոյության հողն ունի, և այդ հողը իր աարտությամբ անհուն այն մթնոլորտն է, որ վիճակիւմ է ժողովրդի պատմական մեծ հանապարհին՝ նրա լուրաքանչյուր անցնող ու եկող նոր սերնդին: «Հողը ավանդապահ է, — զբում է Իսահակյանը, — հողն է ստեղծում և կաղապարում ազգությունը, երբ հողը կորովի, ամեն ինչ կորաված է»:

Ամեն ժողովուրդ ունի իրենը, իր սեփական, անկընելի գոյության հողը. անօրսալի, որ չգիտես գութանը շարժելու եղանակից է սկսում, թե ուրիշ բանից—ուրախանալու ու ախրելու ձեից, նացվածքից, հորովել երգելու հանդից. և որտեղ է վիրանում. անեղի է այդ հողը, անընդգրիելի, ամեննէ, ամենը, ինչ որ հասակ ու կերպարանք է առալիս ժողովրդին: Պատմական եղելություններ հնդալիս ու անցնում, ժամանակներ, կերպարանա-

ժիտինելով ժողովրդի տաղբելաձեւ, իրեն ժողովրդին,  
բայց նրան միշտ պահում է իր գոյության հողը:  
Կորսավ այդ հողը ուրիշ ոչ մի զորությամբ ժողովուրդի չի  
կարուի: Եվ ինչ բառ է ընտրել իսահա-  
կիանը՝ «կորսավել»: Նույթական հողը չի կորսավում:

Պետականություն չունեցող հայ ժողովրդի  
գարավոր մատանջությունն է եղել դա ու ծվա-  
րել բանաստեղծի պատանեկան հոգում, վճարել  
իր պատասխանը: Ժողովրդից է ժառանգել և ժո-  
ղովրդի հետ էլ հավատացել այդ մատանջության  
ավարտին, որ հույսի ու հավատի բյուրեղյա իր  
շաղախով հաղորդմել ու խացվել է էպոսում: Ժո-  
ղովրդի համոզմունքով աշխարհը իրենը կլինի  
միան այն ժամանակ, երբ ամուր լինի իր ուաքի  
տակի, իր գոյության հողը: Իսկ հողը շարունակ  
թուլացել էր և ոչ միայն ամուր չէր եղել ձիավոր  
Մհերի ուղացքի համար, այլ և չէր զիմացել նրա  
ժանրությանը.

Զիու ոս չէր զաղբի վեր հողին,  
Որ զստքեր կը թալեր կ'երթար մեջ հողին.  
Հող առջև թուլացեր էր,  
Չէր զաղբի առջև Մհերին:  
Մհեր ասաց. «Հայ-յ-հո՛յ, զո՞ւր է,  
Գետինն էլ հալեռցեր է,  
Իմ ձիու ուաց տակ չի զիմանա»:  
Օք կեսօր էր, քանի քշեց,  
Չին թաղփակ չուր իրիկուն:

Աչքը իր գոյության հողին, որ ժողովրդական  
խոյանքի միակ տաղավինն է զիտիկել ու հինարա-

նը, հողի ուժը փորձարկելու իր ավանդությունն է հյուսել ժողովուրդը և պատգամել նույն էպասում.

Կ'ասեն՝ առքին էրկու անգամ  
եղ քար իրաբուց կը բացվի.  
Մեկ անգամ վարդեռին,  
Մեկ անգամ՝ չամբարձման:  
Որ քար կը բացվի, Մհեր՝  
Քառսուն ավուր ճամփա մեկ ճամփա կ'էրթա,  
Քառսուն օր վեր բարերին կ'էրթա,  
Ինչ հողի վերան ընկնի՝ ձին կը խանգիի,  
Չը կարնա քելի, ետ կը զառնա:  
Կ'ասեն՝ մեկ չամբարձման դիշեր  
Հովիվ կ'էրթա եղ քարի տռաջ,  
Մհերի քար իրաբուց կը բացվի  
Հովիվ ներս կը մանի, կը տեսնի՝  
Հոկա մարդ մի էզաեղ նստած.  
Հովիվ կը հարցու.  
— Մհեր, զու ե՞րբ ա՛կնիս էզաեղեն:  
Մհեր կը զառնա՝ կ'ասի.  
— Ես որ էլնեմ էսաեղեն  
Հողն ինձ չի պահի...

Անգամար փորձում է Մհերը հողի ուժը, իր գոլության հողը, և ոս է Մհերի հոր բներանով առված ժողովրդի հավատամքը.

Աշխարք ավերի, մեկ էլ շինվի,  
Որ գետին քս ձիու տոջն դիմանա  
Աշխարք քոնն է:

Հողի ժողովրդական-էպոսակին այս հասկացա-  
ղության վրա է խարսխված իսահակյանական  
շամփանդապահ հողին գաղափարը, այն և հողալին

է, և հողացին չէ, որիշ է, լայն, և սղի է, և հողու խորանքի խարիսխ, և շինականի օջախ է, և դրուցաղնավեպ—տեսանելի ու անտեսանելի այն ամենը, ինչ գալիս միախառնվում, միահլուսվում է մի ամբողջության մեջ, կերառում ու կաղապառում ժողովրդի հոգեսր գիմանկարը, անծայր աշխարհի մի կոորդ աշխարհագրական հասկացողությունից գարձում հայրենիք: «Հայրենիքը հող է:— պատահենեկան օրերի իր համոզմունքով շարունակում է իսահականը— ... Մեր պատերը ծնվել են այդ հողից և նորից վերածվել արդ հողին: Մենք ինքներս են ծնվել ենք այդ հողից, սնվել ենք այդ հողով, այդ հոգով է շինած ու կանգված մեր ոսկորը, մեր արյունը, մեր հողին: Մեր բյուրափոր նախահայրերի հողն է մեր մեջ»: «Հայրենի հուշերից մշշերած ալս տոպերը, տակո, բառացի, նույնությամբ տանկած են «Հայրենի հողը» չափածու լեգենդից՝ գրված զետես 1920 թվականին: Հայրենիքի հասկացողության, ռավանդապահ հողի» գաղափարը բանատեսնելու և ոչ մի երկում, թերես, այնպես իմաստավորված չէ. ինչպես այդ լեզենդում: Հայրենիքը նրա մեկեղիներն են, խրճիթների ոլորուն ծուխը, ձիերի խըրոխտ խրիինչը՝ հայրենի փոշոս ճանապարհներին, մայրենիւ անուշ բարբառը... Սրանցով է մի բուռ հողը շունչ ու լեզու տանում, Շխոսում սրտի հետառ քաշում իրեն և տինչքա՞ն ուժով է, ի՞նչ անպնդուելի»: Շատ է ինքնակենսադրական «Հայրե-

նի հողը», և, թերեւ, զբա համար էլ արքան հուզական ու համակող:

Եվ արդ «անպարտելի հողը» քաշում էր, իր րուրավոր մտերիմ ու հարազատ կանչերով, մողական թովչանքով ձայնում իսահակյանին: Իսկ շուրջը, օտարության մեջ դաշնակցության մեծ ու փոքր գործիչների հայուանքներն ու սպառնալիքներն էին բանաստեղծի հասցեին — չանսալ հայրենիքի ձայնը, չվերագառնալ հայրենիք: «Հայրենի հուշերով» Խստհակլանը նորից ու նորից է հավաստում իր նվիրվածությունը հայրենիքին, իմաստավորում մեծ ու անվերջանալի հայրենիքի ժողովրդական իր իդեալը, որին խորթ էր հայրենիքը դավելու կիրքն ու մոլեսանդությունը:

Եվ բանաստեղծը վերագառնում է հայրենիք, Սովհատկան Հայուստան, վերագառնում է 1937 թվականի ծանր օրերին, համոզված, որ ամուր է դարերից եկող իր ժողովրդի դոյցության հողը:

\* \* \*

Զըսուցներ են իսահակյանի պատմվածքների մեծ մասը, իրապատում հուշվրուցներ, գրված ժողովրդի մեծ կլանքին վայել ավանդապատումի յուրովի հանդարտ շնչով և բարձր ոիթմով: Սլուժեներ չի որոնում իսահակյանը, բնավորություններ շբացելու ոլորտներ կամ շբապաւլտներ մարդկային սովորական զգացմունքների ու ձբգ-

տումների պատկերներ են դրանք, իրենց սովորականությամբ հանդերձ, ավանդատիպ ու առքալին:

Սովորական մարդիկ՝ սովորական զգացմունքներով — Իսահակյան արվիստագետի հակումն է սա, բնական արտահայտությունը նրա կենսագոցաղության: Այդ կենսազգացողությամբ մեծերից մեծը աշխարհում գոյության, ասբեկու ժողովրդական իդեալն է՝ մանկան մի ժամանակ, հայրենի հողի բուրմունքով ու լորիքով, առավոտի շաղով ու շողով, սիրս արրեցումով, աքնության ցավով և ուրախություններով, մարդուն ստար լինելու երջանկությամբ — սրանով է, որ ամեն մի կլանք կլանք է, լինի այն «մեծ» թե «փոքր», բատ որում իսահակյանական ըմբռնումով մեծը հենց այն է, որն ավելի է լցված և ավելի է ալեկոծվում կլանքի այդ ամենասովորական բովանդակությամբ: Մեծագույն հարստություն է այդ սովորականը, ժողովրդի մարդկանց համար, ասես, բնաւուր տարերք ու իդեալ, որ մեծագործները, փառքի ու հարստության սիրահարները դժբախտություն են ունենում զգալ ու հասկանալ, թերեւս, միայն, մեռնելու պահին կամ զբանից մի փոքր առաջ:

Իսահակյանական նմանօրինակ աշխարհընկալումը բնականաբար կոնտրաստներ է ծնում, անմիջական ու հեռավոր կոնտրաստներ, ինչպիսիք են, ասենք, դության նորոգող հայ շինականը և նրա վրա սուր ճոճող բանակալը, անպարտելի

Սատադին և նրան կրնկակովս հետապնդող մահը, քուրդ Ամոն և... աշխարհակալ Զինգիզ խանը:

Մեծ, իմաստուն քուրդ Ամոն և նույնքանանմիտ Զինգիզ խանը: Ամոնի հասակում Զինգիզը ինքնասպանություն կոսրծեր, եթե կորցնելու վենքը իր նվաճած աշխարհները, գանձերը, հորդաները, փառքը: Հարազատ չէ «մեծ» մարդկանց նման տիպի ողբերգությունը խսահականին, և նա շրջանցում է գո, նույնիսկ այն գեղքում, երբ օրիկապը Զինգիզ խանն է: Ուրիշ գանձեր էր կորցրել Ամոն, կորցրել էր իրենց սարերը, ձորերն ու քարափները, զառավառ ծաղկեները, աղջիկների զնգղնդոցը, վրանների ծուխը, ձիերի խրխնջոցը՝ իրենց սարերի այդ տարօքա գարունն էր կորցրել Ամոն: Ութուուն օր էր մասցիլ, և նա գուրս պիտի գար բանակց, ուրիշ գարուններ պիտի աեսներ ու վայիլեր Ամոն, բայց անա զբկված էր այդ մի տարօք գարունը աեսնելու հնարավորությունից: Մեն մի տարօք գարնան կարոտ և ինքնասպանություն, այս է մարդկալին կենսասիրության, միաժամանակ և ողբերգութանի խսահականական չսփառնիշը:

«Քուրդ Ամոն» խսահականը գրել է 1907 թվականին. դրանից ընդամենը երկու տարի հետո է ստեղծվել «հոռեանսությամբ» կամ համենայն գեպս «մարդաբախույսությամբ» տոգորված «Աբուլազա Մահարին»: Կհնսասիրությունից՝ ինքնասպանություն, նույնատիպ մի անցումից չի սկը-

միև արգլո՞ք նահ ողբերգականը պոկմում — անափ մարդասիրությունից՝ վիախուսա մարդկանցից, ողբերգական մի կոնտրաստ, որ պոկմի ողջ տարեքն է, ոգին: Բայց սա, ինարիկ, ի միջի ալլոց:

Եկապիրյան ողբերգություն չէ Ամոյի ողբերգությունը՝ միծ ու աշխարհացունց, սովորական մարդու սովորական ողբերգություն է այն՝ հատուկ բնության ստեղծած բոլոր մահկանացուներին՝ շաղղից հլած ժամանակներ ուղղելու կոչված չամշետին, բայց և սարերի հովիվ Ամոյին, բոլոր նրանց, ովքեր գալուն վայելելու բնական ձգումամբ են ծնված և տառապում են գարուններ կորցնելու «հառարակ», «առօրենական» ողբերգությունից: Ողբերգականը միշտ էլ գրողի հոկման, նրա կողմնորոշման որոշակի ցուցանիշ է, բոլոր մարդկանց համար բնական նմանօրինակ «սովորականի» ողբերգական վիլովման պատկերներ են իսահականի պատմվածքները, որ նրա կենսազգացողության ամբողջականությունն են վկայում ու խորությունը:

Այդ ընդհանուր սովոր և արամակը թիսմբ պարբանակոված «սովորական», «առօրենական» զգացմունքների կամ արարքների իսահականական արդ պատկերներն ահա ստանում են առջապին սգեշունչ մի երանգ, որ վաղեմի առումով բնորոշ էր գյուցաղունների ու հերոսների սիրանքն ու քաջությունը զբանառող պատումներին: Ասքային պատումի ոլորտը Իսահականի վաստակում ըն-

դարձակվում է, լայնանում, ինչպես բովանդակության առումով, նյութի ու թեմատիկայի, նույնապես և գեղարվեստական ձեր տեսակիտից։ Ասքի առաղջ հն գաւնում շատ սովորական մայրական սերը իր իրական գյուցազնական ուժով և զորությամբ, ապրելու մարդկավին «Հասարակ» տեսչանքը, երազելու և ձգաելու, սիրու ու կարուած ամենաբնական ապրումները։ Իսահակյանի արձակ գործերն այսպիսով նույն մոտիվներն ունեն, նույն բովանդակությունը, ինչ նրա պոեզիան է. բանաստեղծական մի նոր կենսազգացողություն էր սա, որ ակնորոշ առնելով հայ գասական պոեզիայի առաջն ներկայացուցիչների, հատկապես Հովհ. Հովհաննիայանի ստեղծագործությունից, իր ամբողջ ուժով գրաւորիւմ է Իսահակյանի անմահ լիրիկայում և մեծ թումանյանի պոեզիայում՝ ստանալով համաժողովրդական աշխարհըմբանման անհամապարփակ հնչեղություն։ Այս իմաստով, եթե ցանկանալու լինենք բնութագրել թումանյանական էպիկայի տարրերությունը նախորդ շրջանների էպիկական ստեղծագործություններից, ապա նրան ամենից ավելի կվայելեր, թերիս, «սովորականի» էպիկա անվանումը։ Այլ կերպ չես անվանի, իհարկե, «Անուշը» սիրու, նվիրվածության, անձնազոհության ու ողբերգության իսահակյանական լիրիկային հարազատ ոգով ու տարերքով։ «Աղթամարը» — բալլագային իր հատկանիշներով, որքանով այդ հատկանիշներից շատերը առկա են նույն իսա-

Հականի պատմվածքներ կոչվող զբուցներում։ Առանց նավակի, իր առնացի բազուկներով ամեն գիշեր՝ խավարին թե փոթորկին, ծալն է մտնում մի տղա, բայց ոչ թե ծովն առագիր իջեցնելու համար, այլ ամենասովորական մի բանի՝ հանդիպելու սիրած աղջկան։ Ամենքի համար կրկնվող սիրո և անձնազոհության այս լիգենդը՝ օդի ու ջրի պես, նրանց նման աննկատելի, ավելի է կրանքի տարերքն ու մեծ էությունը, քան ամենասպանդական հերոսի ավանդական արտաքը, և այդ պատճառով էլ ավելի արժանի առջադին լիցքի ու հնչեղության։

Ասքալին երանդը նույն հնչեղությունն ու իմաստն ունի նաև Իսահակյանի արձակում։ Էպիկալիտի համար բնորոշ այս երանդը, անշուշա, որոշակի կառուցվածք ու հատկանիշներ է պահանջում, հատկանիշներ, որոնք խահակյանական պատմվածքները, հեռացնելով տրադիցիոն պատմվածքից, շատ կողմերով մոռեցնում են պոեզիային։ Չափածո նովելներ անվանեց հետադարձում Եղիշե Չարենցը իր չափածո գործերից մի քանիսը, իսկ արձակ բանաստեղծությունը գործածության մեջ էր մտել դրանից շատ առաջ չափածովի և արձակի ներթափանցման արձանագրումն էր սա, մի երեսվթ, որ գեղարվեստական առումով, կարծես թե, ամենաէականն է Իսահակյանի արձակում։ Պատմվածքներ խորագրով հայոց նրա գրվածքներից շատերը իրենց և՛ շնչով, և՛

Հյուսվածքով ու առաղձով, ասես, արձակի վերածված չափածո զրուցներ ու ավանդություններ լինեն, էլ չենք ասում, որ զբանցից մի քանիսը, պարզապիտ, վարելի է անվանել արձակ բալլագներ։ Ինարկի, ժանրի համեստացողության նորագույն խմաստով՝ զերծ խորհրդավորության, ոգիների, մահու և մըսալի այն առարկելից, որով բնութագրվում է բալլագի զարգացումը նոր ժամանակներում։ Համեմատելին ներկա գեղգում իսահակյանի և Թումանյանի բալլագներն ին, իրենց ժանրավին «խաճանկածքով» և բովանդակության սովորականությամբ։

Ինչպես, ասենք, «Հավերժական սեր» բալլագը, տարիների, սերունդների բախու է խտացնում Խոսականի «Վիկինդների կյանքից» պատմվածքը, որը արտպիցիոն առումով բոլորովին էլ պատմվածքալին հատկանիշ չէ։ Բայ որում, ինչպես ժողովրդական բանակոր ավանդություններում, հերոսների բախուի պատկերին նախորդում է նրանց արդարության և խիզախության գովքը՝ էպիկական շնչով, պաթոսային ոիթմով ու սեղմությամբ։ Նախներգ հիշեցնող բանաստեղծական հատկած է ոտ, հերոսների ճակատագրի ինչ-որ հետավոր ակնարկությամբ։ Ապա սկսում է բուն պատկերը՝ արդին մհասմ-զնացած Բողդլինի բախտով, որ բառացիորեն 4—5 տող է։ Բողդլին սպանել էր իր կաթնեղբարը, որովհետեւ վերջինս իրենից առաջմունաթյան խոսք էր տվել իր կնոջը և հետո

լքել նրան. Բողդին վրեժինգիր էր և զել իր կնոջ նվաստացնողից, այլապես նա արժանի չէր կարող լինել իր կնոշն ու նրա սիրուն Պապենական ավանդությամբ վիկինդների համար խոստությանց ցությունը մեծագույն անպատճեմություն էր և կարող էր հատուցվել միմիայն արշունով։ Պապենական նույն օրինքով սիրած կնոշն արժանի լինելը որբագան պատիվ էր, որ պետք էր նվաճել կյանքով։ Եվ Բողդին նվաճում է այդ ռազմորականը՝ սպանելով և սպանվելով։

Տղամարդը արժանի պետք է լինի իր կնոջը, որդին՝ հորը, և վերջապես մարդը պետք է որ արժանի լինի մարդուն։

Հերոսի բնավորության հաջորդական բացումով չէ, սակայն, որ ասվում է այս ամենը, այլ հերոսի վարքագիծը ներկայացնող տողերի տրամադրությամբ ու շնչով, որ հեղինակի ու հերոսի բանաստեղծական լուրջինակ մի փոխամբնուղության արգասիք է։ Բողդին հաջորդում է նրա որդին, և նորից է սկսում մարդուն՝ այս անգամ էլ հորը, արժանի լինելու մաքառման լեկենդը։ Առնական ու ամրակազմ հոր որդին նրբակազմ է, վտիս, բայց և հոգով նույնքան ամուր ու բարձր, որքան և հայրը։ Հեղինակի և հերոսի ներթափանցումն արտեղ ավելի քան խորն է, ասես, որդու իրավունքները խլած նրա հոր թշնամու վեմ կանգնած է լինքը՝ հեղինակը՝ վրիժառու և մեծահոգի, արդարության իր մեծ պատգամահոսությունը։

Հակառակորդի և նրա խմբի հետ հաշիվները մաքրված են, մնացել է միայն հակառակորդի մասնութիւն ժառանգը, որ հիմա կանգնած է Բողդլիի որդու տոցի, կարծես վեխտ բազուկներով հոր թշնամուն ջախջախողը ինքը չէր, կարծես արդ պահից դարիր են անցել և այդ ընթացքում չի կատարվել անարդարության ու վրիժառության որևէ փաստ, և հանդիսավոր ու մեծ Բողդլիի որդին պատգամում է. «...Թաջերի գործն ավարաված է, մնում է միայն վատերինը... սրա մի մաղին պիտի չըդիպչիք. նա պիտի ապրի խաղաղության մեջ և հետո, եթե հիշե այս օրը, պարտական է կատարելու իր պարուաքը»:

Պատմվածքալին գործողություն, գործողության մեջ բացահայտված հոգեբանություն չէ, որպեսզի կարիք զգացվի խոսելու այս «հայտաբարության» պատճառաբանված կամ չպատճառաբանված լինելու վերաբերյալ էպիկական պատկեր է առ, մարդու, մարդկանության ժողովրդական աշխարհազդացողության անսանկյունից գծագրված հերոսի վարքագծով, որի պատասխանատուն միայն ինքը ժողովուրդն է՝ մարդկայնության անսահման, հնարավորությունների պատկերացումով: Մանուկ սպանել, սերունդ վիրջ տալ չի ընդունում ժողովրդական հոգեբանությունը, և դա չէր վալելի: Իր կնոջ նվաստացնողի դեմ նույն ժո-

դովրդական հոգիբանության թելազրանքով ծառացած քաջ ու արդարամիտ Բողզիի որդուն, որքանով նաև արժանի զավակն էր իր հոր

«Եկիմնպների» յուրովի ալու հյուսվածքը բնորոշ է իսահականի պատմվածքներից շատերին։ Պատմվածքային աստիճանաբար զարգացող գործողության փոխարեն դրանց մեջ էականը էպիկային (պոեմին, բալլագին) հատուկ հերոսների հոգեվիճակի ամենալարված պահերի սուր անցումներն են՝ ժողովրդական հոգերանության ամենաանսպասելի խաղերով ու երանպներով, որոնք ե պայմանավորում են հերոսների բնավորության մոնումենտալությունը՝ խացման ուժով ու խորությամբ։ Մի առանձնահատկություն՝ է սա, որ առավելապես բնորոշ է ժողովրդական զրուցին և ավանդությանը, բայց չ՝ որ իսահականի պատմվածքների նյութը միշտ էլ նմանօրինակ զրուցներ են ու ավանդություններ, հնագույն՝ սերնդիներունդ հյուսված, ավանդված կամ իրականաւում հարատեղուց։

Ինչպիս ժողովրդական զրուցներում, Իսահականի պատմվածքներում նույնպես անմիջականութեն ներկա է ինքը՝ հեղինակը, որ գեղքերն ու պատկերները ներկայացնում է որպես ականատեսութիւն կամ իր անունից հյուսում ուրիշի պատմածքը՝ հրկու գեղքում էլ պահպանելով հավաստիության բնական չափն ու երանպները։ Հեղինակը, հեղինակային վերաբերմունքը զրանց մեջ նույնքան կարեւ

զոր տարր է, որքան և հաղորդվող պատկերը կամ դիպվածը: Այդ վերաբերմունքով է, որ նկարագը՝ փող «սովորականը» ստանում է ավանդական, ասքալին լիցք, այդ երկու կողմերի ներթափանցումից է, որ ծնվում է իսահականական պատմը՝ վածքների արամագրությունը, նրանց իմաստն ու բովանդակությունը:

Միծ մտերիմներ են իսահականն ու նրա հերոսները՝ ժաղովրդի մարդիկ, մի գեղքում հայ շինականը, մյուս դեպքում արգարատենչ Գարիբալդիականը, ըմբռոս Շաքրոն, աշխատասեր թաթեղբայրները, իր հայրենի լիոնների սիրահար քուրդ Ամոն, առակետորեն հազարտ Բալբամ Ալին, ավանդապահ Ջիլինդները և մյուս-մյուսները: Այնքան մտերիմ, որ շատ հաճախ գրողն, ասեա, փոխարինում է իր հերոսներին. ավելի ճիշտ գրողն ու իր հերոսները ձուլվում են, միասնանում իրենց զգացմունքներով ու ապրումներով, և պատմվածք կոչվածը մի պահ վերակերպվում է լիրիկական հուզաշունչ բանաստեղծության: Թեև ասքալին, բայց գրողին, թվում է թե, չի գոհացնում, որ իր վերաբերմունքը գրաից է, մի արիշ մարդու վերաբերմունք. կարծես այդ վերաբերմունքը իր և ժողովրդի մարդկանց միջև արարերության ու անհավասարության ինչ-որ նշան է կամ հատկանիշ: Իսահականը շատապում է նույնանալ իր հերոսների հետ, ավելի ու ավելի անմիջականորեն հաղորդելու համար նրանց արամագրությունների ու արտաքնների ողջ վեհությունն ու հմայքը: Սակայ-

վում է անխարդախ հույզի մոտավորապես մի այսպիսի խաղ, ինչպիսին տհանում ենք, ասենք «Առճկալ հս, բնզարած հս» լիրիկական բանաստեղծության մեջ։ Լիրիկական հերոսը՝ բանաստեղծը չէ։ սակայն, բանաստեղծինն ին լիրիկական հերոսի ապրումը, արամազրությունն ու մորմոքը, և լիրիզապես սերն ու սիրո իդեալը։ Այդ իգեալը համակ նվիրվածությունն է, ծով չերմությունը, ներկա գեպքում հայ գեղջկունու առօրինական սերը, որն իր սրտասուչ տարիքով թերես միակ ապամինն ու սատարն էր բնզարած ու քրտնաթոր հայ շինականի կյանքում։ Ապավենն էր, և այդ պատճառով էլ զերծ քամահրանքից կամ սիրավին խաղից, բառի ամենալավ իմաստով բնական ջանելների համար կամ անհոգ տարիցների։ Բեղարած լարին սպասող հայ գեղջկունին մարդ էր՝ մարդկալին ամենաշերմ քնքշանքով բնզարածին դիմավորելու իղձով ու տաղնապով։ Դա էր իր ժողովրդի սիրո մարդկալին իդեալը, և այդ իդեալը դավանում ու գուրգուրում էր բանաստեղծը՝ հեռու շուշլաք մարդկանց սիրավին «բարդ» սեթեթանքից։

Ասում են, թե Իսահակյանի «Երգած սերը» հնացել է, որ մեր օրերի սերը այլ է, նարուսաւ քամահրանքի ու դավաճանության խաղերով բազմերանգ ու խորը, որն ավելի է պատշաճում մեր օրերի ավելի քան քաղաքակրթված մարդուն։ Ասում են, մոռանալավ, որ նոր չէ նաև նմանօրինակ խաղերով հարուստ սերը, որն առնվազն այս-

քան հնություն ունի, սրբան մեծ հռավմեացի Նա-  
զոնը, և հետո Իսահակյանի կողքին մռանում են  
ավելացնել ոչ միայն Թումանյանի, այլև Տերյանի-  
«Հրդած սերը» Դպիլավածության, կարտափ ու մարդ-  
կանության անափ տեհնչանքով. մռանում են,  
որ սիրալին հանաքի հետեից ընկնելու (ինարին,  
սուհղիալում) սիրա չի ունեցել բանաստեղծը և,  
եթե ընկել էլ է հանկարծ, ապա գտ նրա համար-  
եղել է «կտավի գրախտ» միայն, ոչ ավել—ոչ պա-  
կառ, քան արդ իմաստուն տրամհաշտությունը՝  
կատակալինի, կատակիրգականի ու սղբերգականի  
ներքին սղջ հակասականություն:

Իսահակյանի սիրալին լիրիկակի շուրջը երբեմն  
լոխող այս խոսակցությունը խորապես առնչվում  
է բանաստեղծի սղջ վաստակի, ինչպես և արձա-  
կի, հումանիտարկան մեծ էության դնահատության  
հետ: Եվ գտ աստիլ ևս այն պատճառով, որ  
Իսահակյանը չի գրել զուտ սիրալին որևէ բանա-  
ստեղծություն, բալլագ կամ արձակ գործ: Նրա,  
այսպիս կաչկած, սիրալին որ բանաստեղծությունն  
էլ վերցնելու լինենք, սերը՝ բցուրավոր իր երանգ-  
ներով հանդերձ, մշտապես հաղորդակցության մեջ է  
մտրգիալին ամենատարբեր զգացմանքների, տրա-  
մադրությունների, կրքերի ու ձգտումների հետ, և  
գժվար է տոնել, թե գրանցից որն է տիրապետողը  
կամ ասաջատարը:

Ճիշտ արգակու էլ արտպես կոչված, սիրո թհ-

մայով գրված արձակ պատմվածքներում՝ կամ՝ աշվանդություններում։

Սիրո խաճակլանական ծանոթ մստիվներով է գրված, օրինակ, նրա «Բայրամ Ալին» արձակ պատմվածքը։ Ինչպես Խաճակլանի բոլոր պատմրվածքներում, հասարակ է նաև որա սյուժեն, սիրել էր Բայրամ Ալին Մաճնուր խաճնումին, ուիս էին կապել հավատարիմ լինել միմյանց, սակայն Մաճնուրը դրժել էր երգումը, ամուսնացել ուրիշի հետ։ Եվ Մաճնուրի համար շղթաներից փախած Ալին ներկայացել էր զիվան, ինքնակամ հաճճնվել շղթաներին։ Մաճնուրի սերը ամենաամեն ինչ էր Բայրամ Ալու համար, և տուանց նրա դնդան կամ՝ կլանք՝ միհնույնը։

Այս է ամենը, և կարծես թե, սիրուց զատ արիշ ոչինչ։ Մակայն, պատմվածքի ուղղակի վերջին տողերից սիրո հետ միահյուսվում է մի այլ տրամադրություն, որ արաւաքին հայացքից պրիմիտիվ սիրային այս պատմությանը տալիս է մարդկալին-հասարակական ավելի քան մեծ հնչեղություն։ Անպաճույն ու պարզ պատմում է հեղինակին ազրբեջանցի մի հասարակ կալանավոր Բայրամ Ալու պատմությունը, պատմում է իր մտքի ու լեզվի ողջ միամտությամբ, կանդ չառնելով, ասածը չհանդացելով ոչ մի անդամ։ Պատմում է, ինչպես ուրիշից լսած մի հեքիաթ, և հանկարծ, ասես, կառկածելով, որ չլինի թե ունկնդիրն Ալուն.

բայց և իրեն, լավ չհստկանա հենց այսուհետ, որունդ պետք է ամենից ավելի հասկանա, զիմում նրան պատասխան չփերցնող մի հարցումով. «Ախապկը շան, զուն լընելիր Ալու աեղը, կհավատաբ՞ր, չէ՛, չէիր հավատա, աղամարդը չի հավատա, չէ՛ որ ուստ կա, երգում կա»: Իզիթ Ալին չի հավատացել աղջկա ախտավրժությանը՝ ռողամարդը չի հավատա: Ոչ մի խոսք չի ավելացնում դրան հեղինակը, նույն անմիջական ընթացքով շարունակվում է պատմությունը, բայց արդեն շաղախիված ուխտի, հավատի կորատյան իսահակյանական արամագլությում:

Ակը ու հավատ: Իսահակյանի ստեղծագործության մեջ շտո հաճախ են համադրվում, միահյաւսում սերն ու հավատը: Բալլագացին իր խորհրդագործ շղարշով մարդկացին սիրո և հավատի ամենազոր ուժի բանաստեղծական հիմն է «Հավիրժական սերը՝ ժամանակին և արեին նրանց ծննդյան օրից ուղիկցող, նրանց հետ չափվող ու... հաղթող: Մարդկության մաքառումի հավիտենական զինքն են սերն ու հավատը, իրարձուցիչած, իրար պահապան մահի գեմ ու չարի, զրանցով է մարդկությունը հավիրժում, հավիրժորեն մաքրագարվում և աղնվանում:

Իր մտահղացումով և գաղափարով այս աշխարհընկալման հետ են տանչչվում ոչ միայն Շիայրամ Ալին», այլև ամենատարբեր ատաղձներով ստեղծված իսահակյանի պատմվածքներից շատ

շատերը, ինչպես «Վիկինգները» կամ, ասենք, 1905 թվականի ռեոլուցիոն իրադարձություններին արձագանքով «Շաքրա Վալիշվիլին» (1906):

Բնորոշ է և խմաստալից թված պատմվածքներից հատկապիս վերջինը, խմաստալից է ամենից ասաց նրանով, որ Խոհանկար կրումի, ուխտի ժողովրդական բմբանսղության տեսանկյունից է խմաստավորում նաև հեղափոխական պութկումներն ու ընդվզումները: Ժաղովրդի համար արգեն ավանդություն է զարձել Շաքրովի պատմությունը, որին ոչ մի պատճով ոստիք չկարողացավ հրդմնապահնց գարձնել և որովհել ապստամբություն կազմակերպիչների անունները: Իր երգումի, ուխտի անդավանան ասպետն էր նա, անձնադու նահատակը, որա համար էլ ժողովուրդը հավատում է, որ «պիտի գուրս ենի գերեզմանից սիրելի և ազնավոր Շաքրոն՝ նորից բանելու հեղափոխության սրբազն գրաշը...»:

«Բայբամ Ալու» պատմիչի լեզվով ասած՝ տղամարդ էր Շաքրոն, տղամարդ էին և նրան հակառացողները՝ ժողովուրդը, որ սովոր չէր ու չէր հակառամ ուխտազանցությանը, ճիշտ հակառակը՝ տղած երգումի, կապտծ ուխտի մեծ հավատ ուներ, էպիկական պաշտամունք, որով և օծում ու զարգարում էր նաև երգումի ու հակառակին, մի գեղքում Շաքրովին, մյուս գեղքում Բայբամ Ալուն և մյուսներին:

Իսահակյանական այս մոտիվները նորից ու նորից ակամայից հիշեցնում են սիրո և ուխտի ժողովրդական հոգեբանության ու կենսադրացողության անպարփակ շահնչը՝ Թումանյանի ստեղծագործություններում։ Եվ խոկապիս, այս հարցերը առանցքային են XIX դարի վերջին և XX դարի սկզբների հայ գասական գրականության, մասնավորապես Թումանյանի ու Իսահակյանի ստեղծագործության մեջ։

Բուրժուական այլասերված բարքերի պայմաններում սիրո, հավատի ժողովրդական արդ ըմբռնություն ամուր խարիսխ էին, որոնց ապավիճնում էին Թումանյանն ու Իսահակյանը, որպես հայիրժող մի օրինաչափություն, որ ուղեկցում է ժողովուրդներին՝ նրանց ողբերգական, բայց և հայիսենապես առաջընթաց ճանապարհին։ Տարրեր էր արվեստագետի նրանց խառնվածքը, Թումանյանը մեծապես խաղաղ էր ու հսնկարա, Իսահակյանը ապելի պսովթկացող, սիրո, արդարության սոնահարությունների ցավից քարեւքար զարկվաղ, սակայն մեկ էր ժողովրդական առողջ տարրերի վատահության ու պաշտամունքի նրանց խոհալն ու գովանանքը։

Հարազատ ժաղովրդի և մարդկության, մշտաշուղիս կողք-կողքի, միջնորդված, ձուլված, ազգայինի մեջ համամարդկայինը, համամարդկայինի ոլորտում՝ սիրականը, ազգայինը։ Այնքան զուզորդված, որ գժվար է ասել, թի որտեղ է վերջանում

մեկը և սկսվում մյուսը: Հարադատ ժողովրդի գոյության խսահականական ըմբռնումը իր կովանոներով՝ ամենօրյա մաքառումով, աքնությամբ, մարդկայնությամբ ու հրազանքով, վերաճում է մարդկության հարատե զոյության աշխարհապղացման:

Աւշագրավ է, որ Խսահակյանը այդ խարիսխաները անսնում է ոչ միայն հարազատ, այլև մոտիկ ու հեռու ազիաց ժողովուրդների կյանքում ու հոգեբանության մեջ և գեղարվիստորին խմաստավորում այն, ստեղծագործական նյութ գարձնելով երբեմն առօրինական մի գիպված, հնորյագրուց կամ ավանդություն: Ասես, գրանով նառագում է հավատատիացնել, որ անարդարության, արյան ու գասիրի փորձություններ անցել են բոլոր ժողովուրդների գլխով, բայց այդուհանդերձ ժողովուրդները միշտ էլ շարունակել են հավատարիմ մնալ մարդկացնեն ու մարդուն: Մարդկությունը հարատեսրին կրկնելով—կրկնել է մարդը՝ մարդուն արժանի լինելու իր դարավոր լեգենդը և ոչ մի ուժ չի կարող օտարացնել մարդուն այդ լիգենդից:

Եվ Խսահակյանը հնչեցնում է այդ լեգենդը՝ «Բայցամ Ալուս կողքին ստեղծելով «Վիկինդները», «Շաքրո Վալեշվիլու» կողքին «Դարիւրալդիականը», թված պատմվածքներից, թերես, ամենալիրիկականն ու միաժամանակ տունականը:

Ի՞նքնակենսագրական շատ բան կտ «Գարիբալդիի հայութականում»։ ոչ թե զուտ կյանքի փաստերի տառմով, այլ այն, որ պատմվածքում շատ յուրավի տնդրատարձել են Իսահակյանի այդ ապրիների հոգեկան խոռվքն ու արամագրությունները։ «Խորի հայրենիքի» լիրիկական մոտիվների կողքին, 1907 թվականին Իսահակյանը վերհիշում է «Հայրենիքից խոռված» ծերոնի Զիտվաննիքի կյանքի, ավելի շուտ հոգու պատմությունը, և խանգաղատանքով պարուղված այդ պատմությունն, անշուշտ, իր մեջ շատ հատիկներ ունի նուև հեղինակից։ Նկատենք, որ հեղինակալին տրամադրությունների երանդներ առկա են Իսահակյանի արձակ համարյա բոլոր գրվածքներում, մեկում ավել, մյուսում պակաս, և երբեմն էլ այնպիսի ստատությամբ, ինչպիսին է, ասենք, սարերի, ադասության նրա անզուսալ կարուաը «Բուրդ Ամոն» պատմվածքում։ Ինչեմից, թվում է թե, բանատեհղծի՝ ռեակցիալի տարիների պոկողիան բնութագրելիս չել կարելի շրջանցել «Գարիբալդիի հայութականը», որն ուղղակիորեն հուշում է բանատեհղծի «Հայրենալքության» ոչ միայն պատճառները, այլև բնությունը, էությունը։

Գարիբալդու կողքին, նբա օրինակով Զիտվաննին իր հայրենիքի արդարության զինվորն է Աղել, հայրենիքի և արդարության համար ստացած վերքերով հայրարացել է նա, երանի ավել ընկած այն դինուրին, որի համար արցունք է թափել

Գարիբալդին (իսկ նա արցունք ունեցել է բոլորի համար): Մինչդեռ հետո նույն հայրենիքի, Գարիբալդու և իրեն՝ Զիտվաննիի գալաջնած արգարաւթյունը սահանարիկ է, ցեխոսպիլ, և արդեն ձերություն թհակոսիած իտալացին խոսվել է հայրենիքից, քաշվել օտար ափեր, հեռացել է, սրբինակ հավատարիմ է մնացել Գարիբալդուն:

Անափի հույզ ու մորմոք է գրել Իսահակյանը ձերունու խոստվանության մեջ այն մասին, թե ինչպես է ինքը սիրել ու սիրում Գարիբալդուն. պատահներան սիրանարությամբ, ասես, որդու ոկնածանքով ու նոր խանգաղատանքով՝ միասին վերցրած: Գարիբալդին նրա ուժն է, հույսը, հաւատը, Գարիբալդիով է նա վստահ, որ նոր օր պիտի ծագի Խոտալիայի համար, և խոստվանության ափերն արգեն նեղ հն թվում մարդուն՝ Գարիբալդուն, արժանի լինելու ծերունական նրա թափի ու կորովի համար: Նվիրական զգացմունքների այդ հոգենուաց պահին Գարիբալդին ու արգարությունը նույնանում հն, զբանց հետ է նույնանում Զիտվաննին, և նորից ու նորից է հանում հայրենիքի արգարության դինվորը՝ իր վազգեմի հերսոնական հասակով ու կիցվածքով. ճիշտ է այս անգամ արդեն հայրենիքից խսոված, օտար մարգկանց կոշիկները կրծքին կամ ծընկներին սեղմած: Իսկապես որ անարգար աշխարհում արգար ապրելն էլ հայրենասիրություն է, և Իսահակյանը ողեշունչ հիմն է ձռնում արդ

մարդուն, նրա սովորականից-սովորական, մի-օրինակ, ոչ հերոսական կյանքին. «Ո՞վ գիտե, ուր է նա հիմա, արդյո՞ք նորից՝ հոգին շքեղ ե-րազների մեջ՝ գրկել է և ամուր սեղմել մանր ու չնչին մարդկանց կոշիկները իր առնացի, հերոսա-կան սրտի վրա և համբերությամբ կարկատում՝ իր վերջին պարտքը կատարելով թոռնիկի հանդեպ, թե գոյության կովի դաժան ալիքները, որ այն-պե՞ս զորեղ են աղքատներին փշրելու, որ այն-պե՞ս գոենիկ են դեպի մեծություններն ու գեղեց-կությունները, վերջնականապես խորտակել են արդ չքնաղ բնիկորը և հողերին հավասարացրել ու որ-բուկին թողել ապերախտ հայրենիքից դուրս, նյու-թապաշտ մարդկանց մեջ՝ խեղճ ու անօգնական...» — այս առղերով է ավարտվում «Դարիբալդիա-կանը»:

Կյանքի ճշմարիտ մեծությունների և գեղեց-կությունների իսահակյանական դավանանքն է սա, որ վկայում է նաև, թե ո՞ւմ և ինչի՞ համար էր մորմոքում և քարե-քար զարկվում բանա-ստեղծը: Այդ մեծությունների կործանման, «վշրվե-լու» ցավից է ահա, որ նա ապերախտ է համա-րում մի ամբողջ հայրենիք և մարդկանց՝ նյութա-պաշտ, մանր ու չնչին: «Ինքնակենապրական» հն, ինարկի, այս տրամադրությունները, բայց թվում է թե պակաս ինքնակենսագրական չեն նաև վերածնված հտալիալի ծերունու անխարդախ հավան ու երազանքը. «...Բայց կուզենալի գոնե-

աճլունս թաղվեր իմ հայրենիքում, որ տարիներ հետո, երբ վերջնականապես իտալիան իր ստրոկ, չարքաշ ժողովրդով ազատվեր հարստանարության լծից.— հաղթական ժողովրդի ազատ ձախները լսեի, ինչպես լսեցի երիտասարդ օրելումս...

Բայց ո՞վ է տանելու մի աղքատի աճլունը արդքան հեռո՞ւ...

Է՞՞, թող ազատվի Իտալիան, հևովից էլ կը լսեմ...»:

Թերեւ մի այգալիսի իղձ էլ բանաստեղծն ուներ Արևի գիրկը հեռանալիս («Արտ-Լալա Մահարիս»), թերեւ, հենց մի այգալիսի ձախի էլ նա էր սպասում, որ թվաց թի ամայի անապատում լսում է հայրենիքից. բայց ձախնը չկար, և շարունակում էր խորթ մնալ հայրենիքը («Օտա՞ր, ամայի», ճամփիքի վըրա»): Համենայն գեպս, պարզ է մի բան, որ աշխարհը, հայրենիքն անխօնում ժամանակներում իսկ Իսահակյանը ճանաչում ու վասարանում էր աշխարհի ճշմարիտ գեղեցկություններն ու մեծությունները՝ արգարության ու մարդկայինության շարքային, անանուն ու անհիշատակ մարդկանց:

Աղքատների՝ որպես կյանքի մեծությունների ու գեղեցկությունների զուգահեռը Իսահակյանի արձակում նոր չէր և «Գարիբալդիականով» էլ չի եղբավակվում: Այդ զուգահեռը նա հայտնագործել էր գետես իր առաջին արձակ վտրձերում: «Արևի մոտ» հեքիաթն է դա (1905) ընդդված մոլեկին

ատելությամբ ու բողոքով քաղաքի ու «քաղաքականիթության» գիմ: Միամտություն կլիներ մտածել, իհարկե, որ Խաճակականը քաղաքն ու քաղաքակըրթությունն անվիրապահորեն մերժում էր, չտեսնելով այսանդ ոչ մի գեղեցկություն ու մհծություն, ոչ աշխատանքի չարքաշ մարդկանց (ինչպիսին էր ծերունի Զիոնվաննին), ոչ էլ քաղաքակըրթության նվաճումները, որոնց երկրպագուն էր ամբողջ կանքում: Նրա վերաբերմունքը հակասական է, խորը, խաչարեկվող պատճառներով, որոնց շարքում էականներից մենքն այն է, որ բուրժուական քաղաքն ու քաղաքակըրթությունը առավել դաժանությամբ և ավելի էր սրում բեկուացումը մարդկանց միջն՝ հարուսանների ու աղքատների, բեկուացնում էր մարդկությանը, իսկ Խաճակականը ազատ ու անկաշկանդ բնության, աշխատավոր մարդու պատգամախուն էր:

Պատգամախոսություն է, անշուշտ, «Արեի մոտ» հեքիաթը, որտեղ՝ նույն այդ մարդը արեի համանիշն է, արևից ավելին որբի համար, խեղճի ու թշվարի: Հեքիաթային բնական հանդարասության փոխարեն գրական ինչոր հուղարատություն կտ մարդաշատ քաղաքի մայթերից արեի հտեւից ճամփառ ընկած որբուկի պատմության մեջ: Պաղպարի ինչոր «մերկություն» ունի հեքիաթը. քաղաքի մայթերին հաց չեն տալիս որբին, և նա հաց ու չերմություն է գտնում արեի մոտ, քա-

դաքից հեռու մի խրճիթում։ Բայց սկզբովիկ է մտահղացումը՝ բուրժուական քաղաքի շպաղ մարդոց և արևի համագության վրա, որ հետագայում համարլա նույնությամբ դարձել է նրա հանրածանոթ պուսմի հիմքը, առանցքը, երանդավորվել բանաստեղծական բովանդակության լայնքով ու խորությամբ։ Հուրիմբացող արևի չեկ բացերի մեջ մխրճվելու «Արու-Լալացի» հոչափավոր խորհրդանիշ-պատկերը արժանացել է բաղմաթիվ բացատրությունների և մեկնաբանությունների։ Թվում է թե վաս չեր լինի, եթե մեկնաբանվիր նաև սիմվոլի արդ, այսպես առած, նախօրինակի տեսանկյունից։ Նման մոտեցումով սկզբովի բանդակությունը ավելի քան կոնկրետանում է և բացգում արևի չերմ, արեւալին մարդկանության աենչանքի, «հաշտ ու խաղաղ մարդկության» բանաստեղծական երազանքի առումով։  
 «Արևի մոտած հեքիաթի, ալապես առած, մուտիվներին ու գաղափարին իսահակյանը վերադառնում է նաև իր հետագա արձակ գործերում։ Դրանցից մեկը, գրված 1914 թվականին, նաև վերնագրել է «Երջանիկ խրճիթը»։ Իմաստալից վերնագիրը ունեցող այս պատմվածքը հեքիաթալին է թ'ե իր սլուժեով, թ'ե լուծումով, և մանավանդ բովանդակությամբ ու հլուսվածքով։ Պատմվածքը հեքիաթի իմաստը մոտավորապես այն է, ինչ բաղմաթիվ տարրերակներով հանդիպում ենք հայ-

կական տասնյակ հեքիաթներում, առաջներում ու ասացվածքներում. «լավություն անողի առաջը կդա»: Ժողովրդի հոգեբանության մեջ խորը նստած ճշմարտություն, տսես, թե իմաստություն է սա, որ լայնորեն գործածվել ու գործածվում է, երեխ թե, անհիշելի ժամանակներից: Հումանիստական մեծ լիցք ունի իր մեջ ալդ իմաստությունը, և Խոաճակլանը նոր երանգներ է պեղում, նոր գծեր է հավելում՝ ժողովրդական ակունքից քաղածը նորից վերադարձնելու համար ժողովրդին: Պատմվածքի փիլիսոփալական երանգները ինչ-որ չափով ազգակից են «Կըսեսնեմ ահա, — լուռ երեկովին» լիրիկական բանաստեղծության ոգուն.

«Ամենեն առաջ թո՞ղ ինքը հասնի  
Այեն հիվանդի, հեռու և ճամփորդի.  
Ամենեն հետո թո՞ղ ինքը հասնի  
Թե՞զ, իմ խեղճ որդի՝, իմ պանդուխտ որդի»:

Ավ. Խոաճակլանի սրտառուչ պատմվածքում, ինչպես վայել է զրույց-հեքիաթին, բանաստեղծության թախծուա տրամադրությանը փոխարինում է պանդուխտ որդուն սպասող մոր ասքալին հավատը, ժողովրդական հուլսի և արդարության միաձույլ շաղախով: Մոր աղքատիկ խըճիթում հավատուն ու արդարությունը կողք-կողքի են, որովհետեւ բոլոր թափառական որդիներին օգնության ձեռք մեկնելով է, որ մայրը սպասում է իր որդուն: Մոր թեման, եթե կարելի է արագիս ասել,

ամբողջացնում է որդին, որի շուրջը և հյուսվածք է հեքիաթային սյուժեն: Հարստություն, շքեղություն, նաև ծնողական գուրգուրանք թողած՝ աշխարհաշխաբն որոնում ու իրենց խրճիթն է գտնում մոր որդին, քանի որ այդ խրճիթում իր մոր արդարությունն ու մարդկայնությունն էր ծփարած, նույնն է թե երջանկությունը:

Կրկին Խոանակյանի հավատամքը, երջանկությունն այսուել է, որտեղ արդարությունն է ու մարդկայնությունը, ժողովրդի մոռ, ժողովրդի մարդկանց աղքատիկ խրճիթներում, որտեղ վերջին հացից բաժին է հանվում ուրիշին, կարեկցվում է ցավը, որտեղ մարդը մարդուն մարդ է և ոչ թե գալապիր:

Իր այս մեծ էությամբ ու տարողությամբ էլ ահա խոանակյանական մարդկայնը նաև «հիշաչաչար» է, և, ի վերջո, իր ողբերգականությամբ հանգերձ, հզոր ու հաղթանակող: «Հիշաչար է», քանի որ անմարդկայնը դեռևս շարունակում է իր գոյությունը, սպանում բարուն ու մարդկայինին: Նման «հիշաչարությունն» է պահպանել Սուլթան Ֆաթիհի արլունությանը պատմությունը, «Զիլի Սուլթանի երգը», պատմությունն ու երգը պահպանել է որպես զինք, հետեւում թողնելով Ֆաթիհին ու Զիլի Սուլթանին:

Եղել է Սուլթան Ֆաթիհ, որի արլունութաթի պատմությունը սերտնդներ է ցնցել, եղել է Զիլի Սուլթան: Բայց մարդկությունը բալորել է

գրանց, մունչ բողոքով լինի, անեծքով կամ ըմբռաստությամբ, միենուն է, անցել է առաջ արյան, բանության ու անարդարության դեմ պահպանիով մարդկացինը:

Ավելին, նույնիսկ Սուլթան Թաթինի պալատում անգամ խոսվել է աստծուն ձգտող մարդու, առավագացին սիրո ու գեղեցկության մասին։ Խորամանկ էր Թաթինը, նրա ամենամերձավոր պալատականներին անդամ չէր հաջողվել հրբեք գուշակել նրա խոհերն ու վճիռները։ «— Ե՞ս ի՞նչ հմ մատածում — այդ միմիայն ես գիտեմ։ Եթե սեփական մորուքիս մազն անգամ գիտենա իմ մտքերը, արմատից կպոկիմ այն...» — տիրաբար հայտարարել էր նա, և շրջապատողները մի անգամ չեն որ համոզվել էին դրանում։ Խորամանկ էր, գուցե և «իմաստուն»։ արվեստներ էր հովանավորում, փիլիսոփանների հետ սիրում էր խոսել բարձր իմաստություններից։ իսանականական մի յուրովի «օբյեկտիվիզմով» կարծես երկու մարդ է Թաթինը։ Սուլթանը՝ գալագիր, նենգ ու բռնակալ և բանաստեղծ Թաթինը՝ նիզամու և Ռումմիի սիրահար։ Սակայն, Թաթինի կլանքի այդ մի օրվա մի «մանրուքով» իսանականական օրյեկտիվիզմը ի վերջո ասում է իր ասելիքը։ Սուլթանը ցանկանում է տեսնել իր սիրած նկարչի՝ Բելլինիի նոր պաստառը, որի վրա նկարված էր Հովհաննես Մկրտիչի կորած դլուխը։ տեսնում է, զմալլվում գույների ներդաշնակությամբ և ապա ավելացնում։

«— Սակայն պարանոցի այս կտոր միաը, որ գեռ նկատվում է կտրած գլխի վրա, իրականին չի համապատասխանում։ Նկատում է և տեղն ու տեղը հրամայում բերել մի ստրուկ և գլխատել՝ պարզելու համար ճշգմարտությունը։

Եվ ճշգմարտությունը, իսկապես որ, պարզվում է՝ արքաների արլունությունը ճշգմարտությունը։ Պլատոնի և Ռումմիի մասին վիճող, բանաստեղծություններ հորինող ֆաթիճը մերկանում է ոճրագործի իր ամբողջ էռությամբ։ Արլունն էր Սուլթանի իմաստության ու արքայական շուքի գաղտնիքը, և մինչդեռ նրա գաղտնիքները չէին կարողանում «գուշակել» պալատական մեծամեծները, սարսափահար կուահեց ստրուկի գլխատմանը ականատես նկարիչ Բելինին։ Այո՛, ճշգմարիտ է Ռումմիի պատգամը՝ մարդը ձգտում է աստծուն, բայց ոչ, ինարկե, ֆաթիճի պալատում՝ ոճրագործություններ մատացող արքայական թիկնոցի տակ, մեծ վեղիրի կամ դեֆտերտարի ծունրագիր շողոքորթություններով։ Աստծուն ձգտող մարդը հեռու է, շատ է հեռու բռնակալական պալատից ու դահից և, անշուշտ, ավելի հզոր, քան ֆաթիճը։

Ինարկե, հղորության հատկանիշ է, քանի որ տարիներ են անցել, գուցե և գարեր Զիլի Սուլթանից, իսկ ժողովրդի մարդիկ դեռևս շարունակում են անիծել նրան և երգել նրա զոհի կյանքի, սիրո ու արդարության սրտառուչ երգը։ Ահավոր էր եղել արդ մարդու պատիժը, համարձակության

համար Սուլթանը նրան պատժել էր արեւլյան դաժան սառնասրտությամբ. շատ մեծ պիտի լինի այդ մարդու սիրտը, եթե նա համարձակվել է բողոքել ինձնից. և ուզում իմ տեսնել այդ սիրտը, — ասել էր նա, — և սիրտը տեսնելուց հետո հրամայել նետել իր ամենամեծ շանը:

Պատիժն ի կատար էր ածվել ոչ միայն գոհի համար, այլև նախորդ ու հաջորդ բոլոր գոհերի, և մունջ լուսթլունն էր եղել պատասխանը, մեկ էլ այդ երգը, պատմելու համար սերունդներին, թե որքան ցասումնալից կարող է լինել հնագանդութլունը! Զիլի Սուլթանի մասին չէ իսահակվանի պատմվածքը, այլ նրա գոհի երգը երգողների, հենց այն օհնագանդներին, որոնք քրտինք թափելուց բացի, թվում է թե, ոչինչ չգիտեն աշխարհում: Ասքային պատումը հենց այդպիս էլ պատկերում է թաթ եղբայրներին՝ լուռ ու խաղաղ քրտինք թափելիս, ամեն օր և ամեն տարի: Ուրիշ ոչ մի ապրում, ոչ մի ցավ. հեղինակային հուշն է միայն թախծոտ ու քնքշալից, որ ինչ-որ սպասումով է համակում ընթերցողին: Ասքագրի իր տարերքի մեջ է գրողը, և տարակուսում հս գեռես որոշել, թե սպասածու տագնապալից խորհուրդը թաթ եղբայրներին է վերաբերում, թե պատմողին Սկավում ու ավարտվում է երգը, արեւլյան բեկրել, սրտակտուր մեղեղին և ապա շողում իմաստութլունն Արևելքի.

«Գիշերը»

Նազեր շահը  
Նստել էր թախտին,  
Թաղը՝ գլխին:  
Առավոտը  
Ոչ նազեր շահի մարմինը  
Գլուխ ուներ,  
Ոչ զլուխը թագ»:

Նովիլատիպ լուծում է սա, դուցի և բալլա-  
գային. ճերուներն են բացվում իրենց դառն ու  
իմաստալից խորհրդով, Զիլի Սուլթանի ժամա-  
նակներից ժառանգած արդար մարդկության երա-  
զանքով ու ճավատով, ողջ պատումն է բացվում  
ճերուների ողբերգական կյանքին ու լուսավոր ճա-  
վատին ձուլված ասքալին թախծոտ ու առնացի  
արամադրություններով:

Նորից, ինչպես միշտ, ճեղինակը իր ճերունե-  
րի կողքին, նրանց հետ ճավասար տանում ու կի-  
սում է մարդկալինի ողբերգականության ու Շհի-  
շաշարության բեռը, և թվում է թե, ապարդուն  
կլինեն բոլոր ջանքերը, որոշելու ճամար, թե որ-  
տեղ է սկսվում ճեղինակալինը և որտեղից ճերու-  
ներինը: Բանաստեղծ լինել, նշանակում է մարդ-  
կալինի ու գեղեցիկի նվիրված երկապագու լինել  
ու մարտիկ, և իսահականը բանաստեղծ էր, այս  
իմաստով, նաև արձակում: Զրույցն ու առքն էր  
նրա տարերքը, որ չէր կարող եղանակ ունենալ  
անմարդկալինի, ալլանդակության ու չարի ճետ  
եղբեր չուներ. բայց իսահականի ստեղծագործու-

թյունը հավելստորեն ուղղված է անմարդկանության, բնուության ու չարի դեմ, ուղղված է բարու ու մարդկայինի հաստատման ուժով ու խորությամբ, որ անկապտելի հատկանիշն է ամեն մի իսկական մեծ արվեստի:

\* \* \*

Դարձաւ իրապատռմ և մեծ մասամբ ժողովրդական ակունքից առած իռահականի պատմվածքների մյուս խումբը կենցաղային-հոգիբանական պատկերներ են, պատմելու օօբյեկտիվ առնեք, թե նկարագրական եղանակով, ժողովրդական բնավորության փայլատակումներով, բառ ու բանով, սրամտություններով։ Իրենց գյուղը՝ Ղազարապատը, կենցաղի ու բնության, բայց և մանկության մշտապես տենչչափ համ ու հոտով, տիրություններով ու ուրախություններով, ցավերով ու հոգսերով («Հովվերգություն», «Հին գյուղ»), ավանդապահ մարդկանցով («Օջախի ծուխը»), հին Դյումրին արհեստավորական իր միջավայրով ու շնչով, ադաթ-սովորություններով («Դարբին Դեռպալ»), սեփական կյանքի գիպվածներից հոգիբանական առանձին հետախուզումներ ու սրամիտ էտյուդներ («Գերեզմանի վրա», «Սրտի դատողությունը», «Դրական նախանձ», «Ծառա Սիմոնը»), — այսպիսին է այդ պատմվածքների թեմատիկ շրջադիմը։

Դրանց մի մասում խտացված բնակլորություններ կան, ինչպես ո Օջախի ծուխը պատմվածքում Կարոս ամին է՝ սերնդասիրության ժողովրդական հոգեբանությամբ ու ծերության մորմոքով. մարդկային հոգու անսպասելի ու պարագուքային և լուծնիր՝ որպիսին է մալլական վշտի ամոքման խահակյանական ասեղնագործ պատումը՝ «Սրտի գտառողությունը», և վիրջապես վարակիչ հումորով գրված կատակային էջիր — «Ծառա Միմոնը՝ կատակայինիւն, այսպես առած, «առօրեական ողբերգականի» իր բնական շաղախով: Մյուս գործերում առավելապես իշխում է ակնարկային տարրը, թեև դարձյալ քիչ չեն հոգեբանական հայտնագործությունները կամ նրա զրուցապատմվածքների համար բնորոշ տրամադրությունների նրբերանգ խաղերն ու անցումները: Տեղադրության ասքին անցնելով, բայց հիմնականում նկարագրողի խաղաղ ռկնիցվածքով» ու ոճով Իսահականը շարադրում է հիշարժան գեպքեր, մտաքերում ծանոթ գեմքեր, գրականության ոյորտից երբեք չիշնելով «քրոնիկոնի» կամ փաստագրության ոլորտը: Ամենուրեք առնում ես կյանքի իրական բեկորի համն ու հոտը, զգում մարդկայինի ու գեղեցիկի խահակյանական մեծ կենսազգացողության ներկայությունը, որի գիրքերից էլ վերաբռագրվում են երեսլիքներն ու գեմքերը, իմաստավորվում մարդկային հատկանիշներն ու արարմունքները, անդամ բնությունն

ու ժամանակները։ Մեկ պատաճակությունն է հովվիրդում կամ մանկության օրերի խինով հորդում, թշվառության ցայն է բորբոքվում կամ մարդկայնության իղձը։ Անհոգ ցրում է հսանակյանը իր անհատում մարդկայնությունը՝ կարելցում հավքին, գուրգուրում մարդուն, ոլացք ապրում նրա հետ Առանց այդ էջերի, թերեւս, դժվար կլինի պատկերացնել, թե որտեղից է գալիս բանաստեղծը իր երազներով, խոհերով, մտորումներով, բանսուտեղծական աշխարհով։

Պատաճական մի նրբին Շնովվիրդություն, և իրիտասարդական կտրիճության, ասպետական սիրու ու երազանքի մի աշխարհ է փոփում։ այդ աշխարհում, երազելու սիրահար պատաճիների միջավայրում է ապագա մեծ վարպետը ճաշակել լուսության ծովածավալ երաժշտությունը, վայելել երգի թովչանքը, երգիչ մկրտվել ու լոկլայն երգել իր առաջին երգերը։ «Ես պառկել էի մեջքիս, — գրում է նա, — գլուխս ձեռներիս վրա գրած, և նայում էի երկնքին։ Մուգ թալշյա մի խորուսկ երկինք, ուր, կարծես, հենց գլխիս վրա հավաքված էին բոլոր երկինքների բոլոր աստղերը եվ կարդում էի ապագայիս ոսկետառ գիրքը, որ էջ առ էջ բացված էր հիտցմունքով վառված աչքերիս առաջ Աստագա՝ չքնաղ սպասելիքների, որ գամանդա հուլսերի անծալը Ծիրակաթին։

...Միրաս պռունկեապունկ լցված էր մի հըզոր, ամենատարած սիրով, որ հեղեղանման գիւ-

դում էր գեղի բոլոր արարածները և գեղի բոլոր իրերը: Աւզում էի գրկել և համբուրել և՛ ընկերներիս, և՛ բոլոր մարդկանց, և՛ ոչխարներին, և՛ քարերն ու սարերը: Եվ տիեզերքի բոլոր աստղերը համբուրել էի ուզում:

Եվ զգում էի ինձ բոլոր արարածների և բոլոր իրերի մեջ՝ անմելին և անբաժան — և՛ թփի ու քարի մեջ, և՛ ջլփի ու հողմի մեջ, և՛ ամպի ու աստղի մեջ... հյուլեացած ու տիեզերացած...»:

Ուրիշ էլ որտե՞ղ կարող էր ծնված լինել բանաստեղծը.

— Սիրաս երկինք է...

Ամեն արարած

Աստղ ունի այնտեղ —

Գահ ունի այնտեղ:

Եվ այսպիս, բանաստեղծի ծննդյան պատմություն է «Հովվելբության» ամեն մի տողը, «Հայրենի հուշերի» անչար ու թուլիչ մթնոլորտը՝ հայրենի ջաղացի և ուսիների մեղմ խշշոցով, ծփացող ոսկե արտերով, մայրական քաղցր ծախով... Հենց այստեղ էլ, Սխուրցանի ափին, նվիրական Անիի զիմաց բանաստեղծի հետ ծնվում է և հայրենասիր Իսահալլանը, իմ բյուրավոր նախնիների ժառանգն ու գալիքի մեծ նախնին:

Հուշակնարկներից բոլորն էլ նմանօրինակ բեկորներ ունեն բանաստեղծի կանքից, հուցդերից, արամադրություններից և յուրովի լրացնում են,

ամբողջացնում իսահակլանի բանաստեղծական աշխարհն ու մարդկապին գիտանկարը:

Իսահակյանի այս խմբի պատմվածքների թվին է պատկանում նաև «Նրանք գրոշակ ունին» մեծածավալ գործը՝ գրված 1932 թվականին, Փարիզում։ Պատկանում է, բայց և աարբերվում, մանավանդ նրա զրուց-պատմվածքներից, գեղարվեստական բնույթով ու դրեկաձեռվ։ Այսուղ նա ստեղծել է տարբեր մարդկանց փոխաբարերությունների միջոցով զարգացող գործողություն։ Այուժեալին գիծ, գործողության մեջ հառաջացող բնավորություն՝ հոգեբանության, արարքների, նույնիսկ արտաքինի մանրամասներով, երբեմն և մանրուքներով, որ միանգամայն անհարիր էր ասքագրի նրա խառնվածքին։

Պատմվածքի գործողության վայրը Փարիզն է, նկութը՝ քաղաքի հատակի մարդկանց կյանքը, որոնց միջավայրում էլ անտ ներկայանում է գըլ-խավորն հերսոնը՝ Արշակը, իր կինսագրությամբ, տրամադրությաններով ու դատողությաններով։ Դաժան մի իրականություն է վերարտագրել հեղինակը։ Սկսայի ամիսն վիստացող ցնցոտիապատ ու քաղցած ընչազուրկների ստվար մի ամբոխ, օրվա հացի սարսափն աչքերում, մարդկապին դեմքը կորցրած ու անսանացած։ Կապիտալիստական աշխարհի հերթական ճգնաժամը փողոց է շպրտել հաղարների, որոնց շարքերն են համալրում թուրքական լաթաղանից։ Փրկված հայերը՝ Արշակը և

մլուսները Արշակի բերանով նորից է գրողի բողոքի՝ ձախը հնչում հանուն իր ժողովրդի նահատակների, աշխարհի չորս կողմը շպրտված հազարավոր զոհերի, որոնց օտար երկինքը ժամռում է ճիշտ ախպես, ինչպես ժպտացել էր սեփականը՝ բռնակալների սրի ու կրնկի տակ:

Երիտասարդ է Արշակը, ամրակազմ ու խելացի և միայն մի ձգտում ունի, մի լրակագ՝ ունենալ աշխատանք: Հստ էության այս ձգտման ու որոնումների և իրականության բախման հիմքի վրա էլ ահա խարսխված է պատմվածքի գործողությունը Մեկը մլուսի հետեւց խափանվում են նրա սպասելիքները, որը և գործողության գարգացման միակ լիցքն է, սակայն, ըստ էության արտաքին, քանի որ գրանց հաջորդականության մեջ հասակ չի նետում հերոսի բնափորությունը Եվ, ժվում է թե, խափանումները ոչ թե ծառալում են ցուց տալու նրա ձգտումների փլուզումը, այլ մի ահսակ միջոց են հնարանվորություն տալու համար հերոսին՝ արտահայտելու իր տարբերաբեր գատողությունները: Իսկ արդ գատողությունների վրա իրեն՝ հեղինակի խոների ու մտածումների, խորը, ամեն քալլափոխում զգացվող կնիքը կա, աշխարհայացքալին անջնջելի հետքը, բուրժուական քաղաքի, կապիտալիստական հարաբերությունների գատապարառում, գրամի գատափետում, եվրոպական ու ասիական մարդկանին հարաբերությունների հակագրություն,

Խղճահարություն աղքատության ու թշվառության համար, և վերջապես սփյուռքի հայության գոյավիճակի վերաբերյալ զգաստ մտորումներ ու անհուն մտահոգություն։ «Օսար եղերքներում միմյանց սատար լինելու հայությանն ուղղված Խոահականի հորդորը պատմվածքում սրտառուչէ, խորապես ապրված, հորդոր, որ նա շարունակում էր կրկնել բաւացիորեն մինչև վերջին շունչը»

Բնական է պատմվածքում Շարլ Բրեյլի կերպարը, որ ֆրանսիական կողշերների՝ լուսմպենների լուրովի էնտուզիաստն է ու գաղափարախոսը, խրախնձանքի տեսարանը՝ պատվի ու աղնը-վության լուսմպենական սովորությներով ու օրենքներով։ Սակայն Շարլ Բրեյլի հետ գոխնարարեցիւնների ոլորտում ևս Արշակի կերպարը չի բացվում, և, ըստ էռլիքյան, չպատճառաբանված է մուռմ նրա անցումը լուսմպենասիրությունից՝ պրոլետարիատի կողմը։

Իր գեղարվեստական թուլություններով հանդերձ, «Նրանք գրոշակ ունին» պատմվածքը խոահականի համար նշանաձողացին է գաղափարական տեսակետից. բանաստեղծի քաղաքական հայացքների որոշակիությունն է վկայում այն, ոտարությունից հայրենիք՝ Սովետական Հայաստան վերադառնալու նախօրիին և լուրովի ընդհանրացնում նրա հայացքները բուրժուական աշխարհի

փոխարարերությունների ու բարքերի վերաբերությանը:

Եվ Իսահակյանը այլևս չի վերադառնում գիշեղաբվեստական հնարանքների այդ ոլորտաը, կրկին հանձնվում է առօքագրի իր տարհրգին, ստեղծում «Զիլի Սուլթանի» երգը, զրուցը, իր նոր հուշակնարկները՝ «Վեզըլի», «Գերնիկայի նվիրական կաղնին», «Նոր տարվա դիմավորումը Փարիզում» և մյուսները, գեղարվեստական հարազատ եղանակով ու գրելաձեռվ, բայց և սոցիալական բաղոքի ու անարդարության, սոցիալական պահքարի առավել ընդգծված տրամադրություններով:

Գեղարվեստական նույն հարազատ տարերքի ծնունդ է նաև «Ուստա Կարոն» անավարտ վեպը՝ Երկարատև է եղել հեղինակի աշխատանքը վեպի վրա, որից առաջմ հրապարակվել են միայն սակավաթիվ գլուխներ: Դրանց հիման վրա, ինարկի, հնարավոր չէ գատողություններ անել վեպի գաղափարական ու գեղարվեստական էռության վերաբերյալ, սակայն, թվում է թե, կարելի է որոշել վիպելու հեղինակային սկզբունքները:

Այս առթիվ էլ աճա ուղում ենք անդրադասնալ մեր անվանի արձակագիր Սահման Զարյանի կարծիքին «Ուստա Կարոնի» վերաբերյալ, որ հայտնել է Իսահակյանի մասին գրած հիշողություններում<sup>8</sup>: Զորյանի կարծիքով Իսահակյանը

\* «Առվետական գրականություն», 1962, № 6:

իր վիապը չի ավարտել, որովհետեւ, ըստ երեսւթին,  
հնարավոր չի եղել ընսրբած գեղարվեստական ձեի  
սահմաններում ի մի հավաքել նյութը: Վիպտկան  
գործողության, գործողության մեջ բացահայտվող  
բնավորությունների, կուռ սյուժեի արձակագիր է  
Զորյանը, և էսթետիկական արդ դիրքերից էլ ար-  
ված է վիապությունը: Ճիշտ է, որ հսահակյանը  
վիպելու ազգօրինակ խառնվածք ու մտածողու-  
թյուն չուներ, և դրա ապացուցն է նրա միակ  
փորձը՝ «Նրանք գրոշակ ունին» պատմվածքը:  
Սակայն «Ուստա Կարոն» հյուսված է այլ սկզբուն-  
քով, մի սկզբունք, որի գեպքում ոչ թե բնավո-  
րություններն են համախմբվում գործողության  
շուրջը և բացվում, այլ կոպիտ ասած, աշխարհը՝  
բնավորության շուրջը: Զիս այդանդ հերոսի և աշ-  
խարհի միջև միջնորդ (իրադարձություններ, փոխ-  
հարաբերություններ), և նմանօրինակ հյուսվածքով  
ավելի մարդկալին կենսագոացողություն է բացա-  
հայտվում, քան բնավորություն: Ոչ թե միայն  
կենսագոացողություն, այլ ավելի. բնավորությու-  
նը գալիս է կենսագոացողության հետ ձուլված,  
մինչդեռ առաջին սկզբունքով բնավորությունը  
առաջնային է ու հիմնական:

Վիպելու նման արվեստը, անշուշտ, հսահա-  
կյանով չի սկսվում և նրանով էլ չի վերջանում  
կամ մնում անավարտ: Ասում են հանձին Ուստա  
Կարովի, նա ցանկացել էր ստեղծել հայկական մի  
լուրպի կոլտ Բրյուսոն. գեղար է ասել, թե որ

քանով է հավաստի, սակայն Ռոմեն Ռոլանի կենս-  
սաթրթիու երկը վաղուց արտեհն հրապարակի վրա  
էր: Այդ արգեստի նվաճումներն ակնհայտ են մա-  
նավանդ ժամանակակից վիպասանության մեջ՝  
չեմինդուելի ու Սարոյանի վեպերն ու վիպակ-  
ները: Եվ, վերջապես, վիպելու նույն եղանակով  
է ձեռնարկել Խաչատուր Աբովյանի մասին իր  
դարձյալ անավարտ վեպը հայ նորագույն ար-  
ձակի ախալիսի մի վարպետ, ինչպիսին էր Ակ-  
սել Բակունցը: Բակունցի վեպի ավարտված կամ  
պահպանված հատվածների առթիվ գրականագի-  
տությունն արդեն առել է իր խոսքը, իսկ  
թե որպիսին է «Ռւսաւ Կարոն», գտ կարելի կի-  
նի առել, ինարկի, միայն այն ժամանակ, երբ հրա-  
պարակի վրա կլինեն վեպի ավարտված կամ չա-  
փարտված բոլոր գլուխները, որոնք, որքան հայո-  
նի է, այնքան էլ քիչ չեն:



## ՀԵՔԻ ԱԹ ԵՎ ԱԽԱԿ

«Ուստա կարովի» համար իսահակյանը, իսկապես որ, շատ նյութեր է հավաքել գրի տոել բազմապիսի առածներ, ասացվածքներ, որամիտ պատմություններ: Եվ դա ոչ թե իր վեպում աղջկակի մեջ բերելու համար՝ հերոսներից մեկի կամ մյուսի խոսք ու զբուցում, այլ խորամուխ լինելու համար և օգտագործելու դրանց մեջ խտացված ժողովրդական մտածողության, վերաբերմունքի և բանգները, էությունը, ինչպես նաև ձեզ: Ժողովրդական ակունքի հանդեպ բանաստեղծի սիրահարությունը նոր չէր, գալիս էր հնուց՝ մտնկությունից, գրական առաջին փորձերից, և նա բանահրատությունից, ինչպես ասում են «Ճեռք չի քաշում» իր ամբողջ կյանքում, ինչպես «Ճեռք չեն քաշում» նրա մեծ ժամանակակիցները՝ կոմիտասն ու Թումանյանը:

Հայ ժողովրդի կուլտուրայի, գրականության զարգացման ամենամեծ օրինաչափությունն էր դա XIX դարի վերջերին, ուսումնառիրության ու մեկնաբանության արժանի ամենակարևոր հարցերից մեկը։ Այդ օրինաչափություն արդյունքում ինքնուրուցն պետականության չհասած, զլատված ժողովրդի հոգևոր մշակույթում իր հոգեբանությունն ու աղջային նկարագիրն է հաստատում՝ ժողովուրդների հոգեբանությանը հարազատ, ժանոթ ու անծանոթ գծերով, հումանիստական կենսագուցողությամբ։ Կոմիտասան մեղեդին, թումանյանական էպիկան, խոահականական լիրիկան, գրանց երեքի համար էլ ժողովրդական ականքն էր սկիզբը, հիմքը, երեքն էլ հավասարապես քաղաքում էին ժողովրդից, հաստատում՝ ժողովրդինը՝ նրա երգը, սերը, մորմաքն ու ցավը, արդյարությունն ու հավատը, երազանքն ու մարդկանությունը, հաստատում էին խորացնելով ու հարզուացնելով ժողովրդինը՝ ժողովրդի ելակեալից։

Ժողովրդական ականքից է սերում նրանց մեծ վասարակի բրուրենդյան պարզությունն ու բավարության անհամապատճենությունը, գրելու ձեւը, հաճախ ժամնրելն անդամ, կամ ժանրի բնույթը, պոեմի կողքին պոեմ-հեքիաթ, զբուց, ավանդությունն, ասքային պատմվածք, համատեղ հետաքըրքը քրությունն, ասքային պատմվածք, համատեղ հետաքըրքը քրությունն, համատեղ հետաքըրքը, համատեղ հետաքըրքը մշակում, սրոնցով և արդունակ էպոսով էպոսով միաւմ է հնչել ժողովրդի ամենալայն շերտերում, և վերջա-

պիս հետաքրքրություն հարկական հեքիաթներով ու առակներով — արդյունքում Թումանյանի մշակած գառական հեքիաթներն ու Իսահակյանի առակները:

Հեքիաթ ու առակ — էպոսի հետ միասին ժողովուրդների հոգեոր մշակույթի ամենից կողմնակալ ժանրերն են որպանք, չարի գիմ՝ բարու օգտին, անխնա բոլոր արատների հաճգեպ՝ օտար, ուրիշ ների, ինչպիս և սիփական: Չարի գիմ ժողովուրդների գրասովոր մաքառման իմաստությունն է խոտացված գրանց մեջ. սերունդների մաքառումով է ստուգվել չարի նենդությունը, բայց և բարու անխուսափելի հաղթանակը, որ ժողովուրդների մարդկության կենսազգացողության հիմքերի հիմքն է: Թերես հենց դա էլ ակնարկում է Թումանյանը, գրելով, թե հեքիաթը «գրականության մեջ ամենաբարձր արտահայտությունն է, ուր ամբողջը հավիտենական սիմվոլներ են»<sup>9</sup>: Հեքիաթ կամ առակ մշակել նշանակում է ամենից առաջ հարազատ մնալ այդ կողմնակալությանն ու կենսազգացողությանը, իսկ հարազատ կարելի է լինել միայն հարազատին, սրա մեջ է Թումանյանի մշակած հեքիաթների ուժն ու հմայքը, Իսահակյանի հեքիաթների արժեքն ու առանձնահատկությունը:

<sup>9</sup> «Թումանյանը քննադատ», Հայկետհատ, 1939,  
էջ 451:

Թվով քիչ են իսահակյանի հեքիաթները. Նրա առաջին հեքիաթներից «Արևի մոտը», թեև ժողովրդական հեքիաթի տարբեր ունի իր մեջ թե բովանդակության առումով, թե ձեմ (արևի հետեւից ճամփու ընկնելը և այլն), բայց և գրական է՝ քաղաքի մարդկանց ու ազատ հովիվների հակադրության տրամադրությամբ, բարոյախոսությամբ, լիրիկական անմիջական հույզով։ Հեքիաթ է, սակայն, այդ ժանրին հատուկ լուծումով. աղքատ որբը, ինչպես հեքիաթն է ասում, հասնում է իր մուրազին, արև՝ ապաստան ու գուրգուրանք գըտնում հովվի խրճիթում։

«Հեքիաթ» վերնագիրը կրող մյուսը՝ ավելի քան հարազատ է ժողովրդական ոգուն. Հեքիաթային է լճակի մեջ աղջկա շողքը տեսած երիտասարդի և գլյակում բանտված գեղեցկունու սիրահարության պատմությունը, երիտասարդի խոչընդուներ հաղթահարելը, ալիքների, ծաղիկների ու թուչնակների հովանավոր օգնությունը սիրահարներին, սիրո հաղթանակը՝ չարի գեմ ու բնության։ Բայց և նորից չափաղանց անմիջական ու լիրիկական է հույզը։ Մինչդեռ հեքիաթը, ալսպես ասած, հեռավորություն է սիրում, էպիկական հեռավորություն ու ռաառնություն։ Նրա՝ կողմնակալությունը հանդարտ է, խաղաղ և էապես հեռու անմիջականությունից։ Բնորոշ է, որ Աղալանի ու Թումանյանի հեքիաթներում, որոնց հարազատությու-

նը ժողովրդականին, իսկապես որ, դասական է, հուզառատության ամեն մի հասունացած պահի հեքիաթալին արձակը ընդհատվում է չափածորով, երգով՝ թումանյանի մոտ շատ սակավ դեպքերում, իսկ Աղայանի հեքիաթներում ավելի հաճախ («Անահիոռ», «Անտառի մանուկը», «Արեգնազան կամ կախարդական աշխարհ» և այլն): Չափածոն մի տեսակ լիցքաթափ է անում հուլզը, իսկ հեքիաթը շարունակում է իր էպիկական հանդարտ ընթացքը:

Թվում է թե, ժողովրդական կողմնակալությունը պահպանելու, արտահայտելու, նաև սրբելու հարմար երանգներ չեն գտել հսահակլանը նաև Շիազ Նաղար» հեքիաթը մշակելիս: Նպատակասլաց ու հետեղական չերգիծանքը, առանց որի հնարավոր չէր, իհարկե, իմաստավորել անբան վախկոտի և արքալական գահի համադրության ժողովրդական իմաստությունն ու ծաղրը: Թերեւ ալդպիս չէ, և Շհանցավոր» է Դեմիրճյանի կոմեդիական մշակումը, որով Չարենցի վկալությամբ հսահակլանը անվերապահորեն հիացած էր կատակերգության առաջին իսկ ընթերցումից:

Իր գեղարվեստական մեծ զգացողությամբ հսահակլանը հազիվ թե զգացած չլիներ սեփական հեքիաթների թե՛ ուժը, թե՛ թուլությունը թերեւ արդ պատճառով էլ հենց քիչ է անդրադարձել արդ ժանրին, առիթից՝ առիթ, մինչդեռ հեքիաթալին ակունքը մշտապիս նրա հետ է եղել, որ-

նունդ տվել նրա . չափածո ու արձակ վաստակի  
տրամագրություններին ու աշխարհաքնկալմանը:  
Ավելի հաճախ է անդրագարձել հսահակյանը  
առակին, և առակն արդեն նրա տարերքն է: Ժան-  
րի տեսականորեն սահմանված հատկանիշներից  
շատ են հեռանում նրա առակները. գրանց մեջ և  
հեքիաթի տարրեր կան, և զրուցի ու ավանդու-  
թյան, և առածի, ձեւական ու իմաստալին հավե-  
լումներ ու բիոնաթափումներ: Մեծ գրողներին  
հատուկ զրչի ուժ է սա, որով հնօրլա ժանրերը  
ակականորեն նորոգվում են, թարմանում, իրենց  
հնչեղությունը պահպանելով ժամանակների հեռա-  
վորությունից՝ ժամանակների համար: «...հսահա-  
կյանի առակները նշանավորում են այդ ժանրի՝  
զարգացման մի նոր աստիճանը. հայ դրականու-  
թյան մեջ»<sup>10</sup>, — բանաստեղծի չափածո առակների  
տոիթով իրավացիորեն նկատել է գրականագետ-  
Ա. ինձիկյանը, և այդ գնահատականն, անշուշտ,  
գերաքերում է նաև արձակ-առակներին:

Իսահակյանի արձակ առակներում ոչ աղքանա-  
լին խորամանկություն կա, ոչ գալլալին ագահու-  
թյուն կամ առլուծի ուժ, բացակալում են ոչ  
միայն անձերը այլև խորամանկությունը, տգա-  
հությունը որպես այդպիսին, բացակալում է ագե-  
ղի ու գեղեցիկի կամ ալլահնդակի ու ասաքինի:

<sup>10</sup> Ա. Ինձիկյան, Ավետիք Իսահակյան, ԳԱ Հրատ.,  
Երևան, 1935, էջ 108:

կոնտրաստը, կոնտրաստից ըխող բարելավնուությունը՝ մարդկայնության գիրքերից բոլոր գեղքերում ճշմարիտ, բայց հաճախ նաև ոչ ճիռնու Կոնտրաստներ չունեն նրա առակները և բարոյախոսությամբ ավելի էլաստիկ են ու տարող, քան ավանդական առակի վերջում նիրմալացվող «առակոցականնեն» է: Հիշենք հեքիաթային հրատավածքում բացիող «Ամենապիտանի բանը» (1905), որտեղ երեք եղբայրներից աղան չէ մեծը, անբան՝ միջակը և փոքրը՝ ամենակարող. պարզապես մարդիկ են պիտանիի առարեր ըմբռանումներով, և հեքիաթներին, առակներին բնորոշ կրտսերի առաջնությունը միջոց է միայն ճշտելու չափանիշը՝ պիտանիներից պիտանին, որ առակում լուսավորությունն է, գիտությունը՝ հացից ու հողից անհրաժեշտը երկիր կառավարելու համար և աշխարհն շենացնելու: Կամ առաջալին՝ հինք ունեցող «Մեծ ճշմարտությունը» (1938), որտեղ արտաքին կոնտրաստով (առաջին մասում նույն մարդը ուեր, երկրորդում՝ նույնը ճպանակ), բայց և ներքին նույն ճկունությամբ մատուցվում է ժողովրդական այն ճշմարտությունը, ըստ որի ուրիշին հասկանալու համար, ուրիշի վիճակում պետք է լինեա:

Իսկ նրա լավագույն առակները պարզապես լիսվին ճեղքում են բարոյախոսության սահմանները և մուռք գործում վիլխոսովայական լայն խոհի ու ընդհանրացման ոլորտը, հարստացնելով, նորացնելով ժամանակին նոր հասկանիշ:

ներով ու խորությամբ։ Զավիածո առակներից արդպիսիք են «Մոլլան ու մանուկները», «Մի հարցում», «Կանքից թանկ բանը», «Քաղցած հավը», «Մարդն ու տարերքը», «Գալն ու եղնիկը», «Սատանան ու իր աղջիկները», արձակից՝ «Ահմեդի ուղարք», «Ալդ ոչինչը ես եմ»։

Առակալին բարոյախոսության շրջանակում չի լինի տեղագորել, ինարկի, «Մոլլան ու մանուկները» (1910) առակի բովանդակությունը, ըստ որի մինարեի բարձունքից արարչի հետ զրուցող մոլլալին հավեր են թվում ներքեկի մարդիկ, իսկ պարտեզում վաղվզող մանուկներին՝ մոլլան մինարեի կատարին թառած ծիտ ... Դիտեր արդյո՞ք մոլլան արարչի լեզուն, թերեւ սա է առակալին հարցը, որին հետևում է պատասխանը՝ մանուկների չափ։ և սա ավելի տրամադրություններ է հարուցում՝ անհատի, աշխարհի ու մարդու փոխհարաբերության շուրջը, լայն խոհեր, քան «ցուցանում» է կամ քարոզում։

«Ահմեդի ուղարք» (1912) գրված է կիսահեքիաթալին — կիսաառածալին հյուսվածքով և մարդկալին ճշմարտությամբ, ճշմարտության մարդկալին մեկնակետով։ «Ամեն մեկի համար իրեն աքլորն ու ասեղը քո ուղափ չափ է»։ «Էռն ուղարք շինմելու» առածալին հանդիմանական խտացումը չէ սա, հանդիմանանքի տարբերն արտեղ անպայման բացառված չեն, բայց խլացված է ներողամտության, մարդկանց հասկանալու և օդ-

նելու շեշտաված հորդորով։ Ժողովրդական միջավալրում ավելի ընդունված է հակառակը. ցայլ կամ կորուստ անհեցող մարդուն հիշեցնում են ազգականինը, հարմանինը, ավելի ժանրը, մեծը կամ ոլբալին։ Ցայլ մեղմացնելու ավանդական սովորութիւնը է սա, հայ ժողովրդի, բոլոր ժողովուրդների համար նույնքան տաօրինական, որքան ցայն է։ Իսահակյանական հորդորն ու հիշեցումը սկսվում են սրա ճիշտ հակառակ ծալրից. մեծն ունեցողին է հիշեցվում փոքրը. Ահմեդի տղան է կորել, պատափի՝ աքլորը, իսկ մլուսը՝ ասեղն է կորցրել ու չի կարող կարել պատափած պարկը, ու Ահմեդը աքլոր ու ասեղ պիտի դարձնի իր ուղարք։ Եվ Իսահակյանը դարձնում է՝ մարդը մարդուն պետք է օգնական լինի, դարձյալ ժողովրդական ավանդական մտածողությամբ հավիանապես պարտադիր օրենքով. «...այս աշխարհիս բանն այնպես է, որ առաջ արիշի կորուստը պիտի վնատրիս, որ ուրիշն էլ քո կորուստը վնատրե. մի՛ մեղադրիր մարդկանց. ամեն մելի համար իրեն աքլորն ու ասեղը քո ուղարք չափ է»։ Ամեն մարդու համար իրենն է չափանիշը. օգնիր մարդուն՝ նրա քեզ փոքր թվացող նեղության մեջ, որ գուցե նրա համար ամենամեծն է, քո մեծից էլ մեծ, և մարդկանցից նոր միայն կարող ես պահանջ անհնալ կամ սպասելիք գտնելու համար քո մեծը, դուք գալու քեզ համար մեծ նեղությունից։

Իսահակյանական «Այդ ոչինչը ևս եմ» առակն արդեն կարող ես ճամկանալ մարդկայնության անհամապարփակ լմբոնման բոլոր ծալքերից: Բանաստեղծության չափ սեղմ ու կռւռ այս առակը փիլիսոփայական խոն է՝ գրված մարդկության մեծագույն փորձություններից մեկի օրերին՝ 1945 թվականին: Վարպետի կյանքի այդ օրերին են վերաբերում ի, երենբուրգի խմասալից տողերը: Ճիշտահականը հարցեր էր տալիս ինձ Թրանսիալի ողբերգության մասին (նա երկար ապրել էր այդ երկրում ու ֆրանսիերն էինք մենք խոսում): Հարցրեց՝ կարգացել եմ արդյոք իր «Արտ-Լալա Մահարին» պոեմը, ասացի, որ կարգացել եմ մի հատված ֆրանսիերն: Նա մտածմունքի մեջ ընկավ, ապա ասաց, «Փեաք է կարողանար հետանալ, ամենակարենորը գա է: Ահա Դուք պատմեցիք, թե ինչպիս հետացավ Փարիզը: Բայց գա էլ քիչ է ...վերջիրս ևս շատ եմ մտածել Տոլսոտի մասին, նա նույնպիս հետացավ...»: Մեզ ընդհատեցին: Ես նայում էի նրա գեմքին ու չէի կաբող կշտանալ, գա ալզեն «արեւաշող» չէր, այլ ծեր, բայց ոչ թե մարդու ծերությունից, այլ պատմության գարերից, վշտից, քարերից, արլունից...»<sup>11</sup>: Այս հետապորտթյունից էլ ահա գրված է տառակը, ապրելու, գոյաթյան մարդու բնական տեհնչանքի գարավոր վշտու ու արլունու հետավորությունից: Այս, իսահակյանը խախապիս որ, իսահակյան էր, և

<sup>11</sup> «Գրական թերթ», № 31, 1962:

նաւ նորից է հիմն ձռնում մարդան, մարդու գոյությանը՝ այս անդամ տրդեն տիեզերքի ու ժամանակի մեջ հյուլեացող մարդ ոչնչի սահմանագծից:

Փողոցի մալթին նվազած, թերևս, վերջին շանչը շնչող գերվիշ ու քաղաքապետ իշխան՝ ճոխ ու դարդարան, շքախմբով, հպարտ, երիտասարդ: Ամեն-ամեն ինչ է իշխանն այդ պահին, գերվիշը ոչինչ, մինչդեռ գերվիշը մեծ է համարում իրեն իշխանից: «Միթի՞ ևս քեզնից մեծ մարդ չիմ» — հարցնում է իշխանը. «Ինարկի՝ ո՛չ: Քեզնից բարձր գեռ շատ աստիճաններ կան: Այս, թե՞ ո՛չ» — պատասխանում է գերվիշը, և քաղաքապետ իշխանը հերթականությամբ բարձրացնում է առտիճանները՝ նահանգապետ, վեպիր, փոխարքա, ապա և դրանց բոլորի վերել կանոնած շահը՝ մարդկալին իրավունքի ու վասոքի գերազանց չափը. Այդ գերազանցն չափն էլ քիչ է գերվիշի համար, իսկ դրանից հետո արգեն չափ չկա, չափը ոչինչ է՝ շահական մեծ վասոքի ու իրավունքի համեմատաթյամբ: Եվ գերվիշի բերանով հնչում է իսահականական անսատիճան չափը՝ առօրեական ոչինչը, ապրելու, շնչելու մարդու ամենամեծ փառքն ու իրավունքը՝ աշխարհի վրա, արեի տակ, ամենաբարձրը, վերինը, անհոնը՝ նըլվագոծ ծերտությունը, վերջին շնչող անդամ մալթերի վրա, պատերի տակ:



## Ա Ր Ջ Ա Կ Պ Ո Ե Մ Ն Ե Բ

Իսահակյանը տեսկանորեն խորհել է բնության երեսովթների, ինչպես ինքն էր սիրում պսել, առեղծվածալին էտթյան շուրջը՝ Զարմանալի դաղտնիքներով լի էր թվում նրան բնությունը, որ շարունակաբար անսահմանին հասնելու անդիմագրելի ձգտում է բորբոքում և ետ քաշվում՝ անհասանելիության հավիտենական խաղերով:

Կյանքի մակընթացության ու տեղատվության անընդհատ տարերքի մեջ, Իսահակյանի պատկերացումով, ամեն ինչ մշատպես փոխում է իր տեղը, նորանոր ձևեր ընդունում, նորանոր կապերի մեջ մտնում աշխարհի հետ: Յուրօրինակ է Իսահակյանի պոեզիայում արեի, լուսնի, մարդու ժանդապարհությունը աշխարհում: Ոչ մի բան շղթաբլած չէ իր անմիջական միջավայրին, և թեքված ուսենոց մինչև մարդը դիտում ու զննում են աշխարհի բա-

նըս Մեկը մլուսի հանգեց հառնում են անչափելի միծություններ, մի կյանքի իրավունքով ծնվածը՝ անվերջանելի հավերժության առջև՝ դեմ հանդիման։ Բայց այդ անչափելի միծությունները չեն, որ բնութագրում է Խսահականը։ Նա թեթևակիորեն է ուրագագծում գրանք՝ մեկ կամ թերեւս երկու հատկանիշով։ Հականը Խսահականի համար նման հարաբերակցության հարացած ապրումն է։

Ճիշտ աղղակես էլ սկսում է նա իր «Եղնիկը» (1907) արձակ պոեմը. ընդգծված մի մանրամասով, փոխաբերությամբ։ Հեռվում հեքիաթալին մթնշաղով օծված, արևի մարող ճառագալթների միջից գծագրիվում է «մակաղած հոտերի նման» հանգչող անտառը։ Այսքանը միայն։

Մթնշաղի մեջ տեսանելին կամ շոշափելին սահում է, ամեն ինչ լողում է մթնոլորտում, զիզվում, վերածվում խորհրդագոր մի հեքիաթի։ Մթնշաղը հոսքի մեջ է առնում ձևերն ու մանրամասները, գարձնում տրամադրություն։ «Հեքիաթալին վերջալուսի» մթնոլորտի մեջ, թվում է, թե գրոշմված է անորսալին։ Եվ այդ մանրամասը ոչ թե լարում է ընթերցողին, այլ հանգարտեցնում, «մակաղած հոտերի» հետ անտառի համեմատությամբ ավելի է ընդգծվում վերջալուսը։ Պատկերը նիրհի իր համակող տրամադրությամբ երազակնության ինչոր երանգ է ստանում, և, կարծես, երազում, հեռվից նշմարվում է եղնիկը. միայնակ, տրտում, լեռների զովից ու շինչ աղբյուրներից

վտարանդիր: Ուրվագծում է հեղինակը եղնիկին երկու քնշանովք՝ մատղաշ ու խարտիաշ: Մատղաշ է եղնիկը ու չի հասցրել զեռևս մոտենալ կյանքին, երկու մոլորդին է կյանքի հեքիաժի առջե:

Եղնիկի և գլշերային անհուն խորհրդի միջն սկիզբ է առնում լսելայն բորբոքվող ինչոր մի կապ ու հարաբերություն, որի հանդեպ չքանում է ամեն ինչ, անէանում: Անբջային մի խորություն կա եղնիկի աչքերում: Իսկ շրջապատը մի պահ ասես, պահել է շանչը, զսպել ամեն մի շարժում ու շշուկ իսահակյանը մեղմում է բոլոր հնչյունները՝ լսելի դարձնելու համար եղնիկի անմոռնչ մորմոքը: Ամենորդք աիրապետողը եղնիկի հուզըն է. նրա աչքերը շոյտում են հեռու-հեռուները և երկար թարթիչների տակից մեկ կիսցվելով, մեկ բացվելով հոգու ինչոր թրթիռ բերում աշխարհին: Իսահակյանը կանգնեցնում է, ասես, ողջ աշխարհը դիտելու համար եղնիկի աչքերը: Խախտվում են չափերը, լայնանում ու խոժոռավում են եղնիկի աչքերը՝ նայելու ու ականելու բնությունը, իսկ անծիր բնությունն էլ իր հերթին ողջ հրապարակներով գարշիս ու ցոլանում է այդ փոքրիկ արարածի զգաց ցող աչքերում:

Սա էլ հենց հետաքրքրում է իսահակյանին, տեսչագին հանդիպման այս հոգեբանությունը, որը և անդրագարձվում է արձակ պոեմում, «...ուշագրավ, լովիկ նայում էր հեռու՝ անտառներով վաթաթված սարերին, ականչները լարած խորասուրդ լսում էր

անտառների խուլ և անդուլ շառաչը, որ երբեմն  
ուժիղանում էր, երբեմն բարականում՝ նայելով հո-  
վերի թափին: Նայում էր նա այնպես անթարթ և  
այնպես ինքնամուաց...»: Բանաստեղծը գեղար-  
վեստորին ահա այս հարաբերությունն է ծավալում,  
զգալուն էակի և բնության խաղերի միջև, տալիս  
ալդ հարաբերության սեփական մեկնությունը,  
դարձացնում պոեմից-պոեմ:

Խորթություն չկա, ներդաշնակություն է եղ-  
նիկի ու բնության միջև, սակայն այդ ներդաշնակու-  
թյունն ինքը չի խաղաղվում երբեք. մշտապես  
գերմլով տափնապի ու երջանկության, կարոտի ու  
վայելքի ընդմիջող ալեկոծությամբ՝ տարուբեր-  
վում է անընդհատ, ծիրում:

Հանգիստը կորցրել է եղնիկը և ինքնամուա-  
ցության մեջ ալլես չի կարող տիրապետել իրեն:  
Իսկ անտառը մերթ հանդարտ, մերթ բարկացիու-  
զարկում է նրան, խուլ շառաչով հետ քաշվում՝ իր  
հետ առած եղնիկի անհանգիստ հեքը:

Եվ, այնուամենանիվ, չի կարող պոկվել եղ-  
նիկը տարմբքի ալլ խաղից, պոկվել ու հեռանալ:  
Անթարթ նայում է նա, գամլել է բնությանը, իսկ  
բնությունը իր անհոգ խաղի մեջ մոտենում է հար  
ու հեռանում: Անվերջանալիորեն փոխանցվում են  
հակասական զգացմունքները. բնության հետ ան-  
սահմանորին ներդաշնակիւու մղումը և լիապես ալդ  
ներդաշնակությանը չհասնելու ազբումը: Իսահա-  
կանական մեծ սերը՝ աշխարհի հանդեպ մշտապես

միահյուսվել է չհագեցող կարոտի տրամադրության հետ։ Հենց այս հակասականությամբ էլ ահա իսահակյանը խախտում է ներդաշնակության վերաբերյալ բոլոր պատկերացումները, պոկելով և մի կողմ նետելով նրանից անդորրության քողը։ Անծալը մի տաղնապով է պարուրված բանաստեղծի մոտ այդ ներդաշնակությունը, երբեք այն չի հանդարտվում, հղի է ամենաալլազան խլրտումներով, լիցքով ու պարպումներով։ Եվ ներդաշնակի տեսվականորեն կենդանի այդ խաղի մեջ էլ ահա թաքնված է նրա բանաստեղծական հուզի անսպառ ակոնքը։ Գերագույն անդորրության պահին անգամ տիեզերաչափ անցումներ են խլրտում, սփռելով մորմոքի անափ տրամադրություն։ Մտաբերենք ըստ ամենայնի «անդորրությամբ» համակված «Գետակի վրա» բանաստեղծությունը։

Գետակի վրա  
Թեքվել է ուռին։

Ու նայում է լուռ  
Վազող ջրերին։—

...Երազաշխարհում  
Ամեն բան հավետ  
Գալիս է, գնում  
Ու ցնդում անհետ։

Եվ գլուխը կախ  
Նա լաց է լինում—  
Զրերը ուրախ  
Գալիս են, զնում...

Սիրո, կարստի, գգվանքի, անեղը ներդաշնակոթյան լաց է ուռենու լացը, որ բանաստեղծորեն անձնավորված մարդկացն լաց է. երազ է աշխարհը, երազորեն ներդաշնակ, բայց այդ երազաշխարհում «ամեն բան հայեա գալիս է, գնում, հավիտենական վաղքով իդաեր ու ցանկություններ բորբոքում ու անհետանում։ Ուրին լույս է, մինչդեռ անհոգ ու արախ են ջրերը»

Մարող, անէացող չէ խաճակյանական ներդաշնակությունը, երազը երբեք կանդ չի առնում, նորանում է ու նորոգվում։ Այդ ներդաշնակությունը հանգիսավոր հավասարակշռություն, դուչների միատարբ խաղաղություն չէ, իր թափի մեջ առած նրան անընդհատ տանում ու տանում է բնությունը։

Դիմ առ գեմ կանգնած եղնիկի ու անտառի միջև սահղօված լարվածությունը գնալով ավելի առժգին է դառնում։ Բնությունը բանկվում է արհավիրքով. «...անտառում դարսվոր կաղնիներն ու վայրի ընկապենիները ճակատում էին հողմի գեմ՝ աղմկում և գոռում»։ Ծառանում է բնությունը, ընդգում են նաև եղնիկի հույդերը։ Եվ վորթորիկու այդ պութիման միջից ընդուստ ելնում են հարսդատ հնչուններ. եղնիկը «...ականջ էր գնում նա անտառի հոռիկու շառաչին, որ խոսում էր նրա հետ մայրենի լիզվով»։ Բնության ձգողական այս առժին է, որ չի պիմանում եղնիկը, մի վորքիկ վորքիկ զգացող արարած, որ խորհրդանշում է

մարդկալին հավիտենական մղումն ու վիշտը։ Պոկվում է տեղից եղնիկը և նետվում, կորչում խավարում, մինչդեռ ներդաշնակի այդ ցնցումից բընությունը լցվում է նորանոր կարելություններով, վերափոխվում նոր շարժումների ու կյանքի։

Անվիրչաննելի այս նորացումը հավասարակըշումն է ներդաշնակությունը, լցնում է այն, բորբոքում, և այդ անհանգստառթյունը սերում է նոր ձևեր, դուդորդություններ, գույներ ու հնչյուններ։ Ներդաշնակի շարժման և ոչ թե կայտնության մեջ էր տեսնում Դյութեն նորաստեղծումների անսահմանությունը։ Շարժման, պատուի, հնչյունների անլուելի վաղքից էր Հայնեն քաղում հրապորիչ մեղդիներ։

Ծովը շաշում, ճարճատում է և ռռնում,  
Խոլ ձայների գժանոց է կարծես թե,  
Եվ մեջընդմեջ ես լուսում եմ պարզորոշ  
Տավիրի ձայն դյութական,  
Երգ՝ լի բուռն տենչանքով,  
Երգ՝ հոգեմաշ և միշտ սրտեր բղկտող,  
Ու ես ահա ճանաչում եմ այդ ձայնը։

Դյութեի ու Հայնեի համար ներդաշնակի գիւնամիկան իր մեջ թաքցնում է հրաշաղեղ բազմապիսի գույներ ու երանդներ։ Կարող է նաև միանդամայն օանշշուկա, անձայն լինել այդ գիւնամիղմը, անմոռնչ կարելությունների մի վիճակ, որին իր բանաստեղծական տարերքով հակված էր իսահակլանը.

Վաս երկինքը լուռ գիշերով  
Երկրի կուրծքը համբուրեց.  
Աստղ-աչքերը լցվան սիրով,  
Օլկիանոսը խոր երգից  
Ուր է փախչում հոգիս անհուն  
Եյս աշխարհիս իրերից  
Եվ իրերի անդրաշխարհում  
Ի՞նչ է պարում, տենչում նա...

Գլոթեի ու Հայնեի մոտ ներդաշնակը իր գիշենամիզմով արտահայտվում է հնչյունների, զուգորդությունների պոռթկումով։ Ներդաշնակի զգացման իսահականական յուրահատկությունը ափելի ցցուն է երեսմ, երբ համեմատում ենք այն Հայնեի պոեզիայի հետ։ Հայնեական ներդաշնակի գիշենամիզմը արտահայտվում է աշխարհի, բնության հախուսն, խոռվաճույզ պահերի բանաստեղծականացումով։ Կթե գիշեր է՝ անպայման լի է անհանգիստ խոռվաճով, քամի է եթե, ապա Հայնեն սիրում է խելագար սամումը, որոտ, հեղեղութեանականը ափելի հակված է բնության խաղաղ՝ հովի, սյուքի ու զեփյուռի պահերը։ Հայնեական ծառերը փոթորկից գալարվում են, իշեցնում կատարը գիտին, ապա երկինքը խոյանում։ Իսահականական ծառ ու ծաղկանքը օրորվում են, նազում ու շուրջում։

Իսահականական ներդաշնակի գիշենամիզմը խայտում է, ծիում, հայնեականը՝ հորդում ու պոռթկում, Իսահականը մեղմում է, Հայնեն բորբոքում։ Մեղմություն, սակայն, որ երբեք թմրեց-

նող չէ կամ քնաբեր: Սրտի անդադրում տրոփիլոն կա այդ մեղմության մեջ, որ բնելքելվում է բնության գաղտնախորհուրդ կյանքի հանգով ու չափով: Անդորրը անհարիր է իսահականական մեղմությանը. լոին է բանաստեղծի ապրումը, բայց և երբեք չի նվազում կամ մարում:

Պոռթկացող չէ իսահականի աշխարհը, միաժամանակ և անդորրը չունի այն, որտեղ ամեն ոք և ամեն-ինչ ելել է, ասես, գոնիլու իրենը.

Աղբյուրի մեջ մի մարալ  
Ճուքն է տեսել եղնիկին—  
Ու ման կուգա միալաբ  
Մուրիկ-մուրիկ եղնիկին:

Այն եղնիկն էլ երազին  
Մարալի ձայնն է լսել.—  
Ու ման կուգա մարալին  
Մուրիկ-մուրիկ զօբ-զիշեր...

Անապատներում ճակատը կիղելով գնում է և իսահականի ծերունի գերլիշը, գնում է երջանկության խորհուրդն իմանալով՝ «Երջանկության իմաստը» (1910). Նեղոսի ափերը, Սինայի ժայռեղին գագաթները կտրելով գնում է, անցնում աշխարհի մի ծալրից մյուսը և, սակայն, մնում անպատասխան: Եվ ահա եկել է նա, արձանացել եգիպտական անապատի անեղբ լոռության մեջ բազմած սփինքսի առջեւ: Համակ լոռություն է, անդորր՝ «գեղին» լոռություն— ինչպես ասում է իսահականը: Որոշա-

կի գտում է կատարվել, անշուշտ, գտնելու համար այդ ռդեղին լոռւթյունը, արտահայտելու դերվիշի համառ երթի, նրա կուտակված մունջ, սրտամաշ ապրումների վերջին պրկումը: Համակ լոռւթյունը շիկացել է, «դեղնել» և պատրաստ է արդեն պարթելու: Խանձիած ու ալրված անապատի օրինատալիստական արտապատկերում չէ սա, ինարկե, բընության հետ Խսահակլանը երանգավորում է իրենը, իր ապրումը, աշխարհի, բնության մեջ մուծելով, ներարկելով իրենը, սեփական հուզդով երանգավորելով տեսած, ընկալածը: «Սիրտն է, որ նայում է աշխարհին,— գրել է Խսահակլանը.— աչքը նայում է, սիրտը տեսնում, զգում»<sup>12</sup>: Նայելու ու տեսնելու այս հարաբերությամբ էլ ահա լոռւթյունը գառնում է դեղին: Ճիշտ այնպես, ինչպես, ասենք, «Թափկիցին տերեները» բանաստեղծության մեջ.

Թափկեցին տերեներն աշնան ծառերից՝  
թոշնա՛ծ ու դալ՛ւկ:

Թափկեցին երգերս բեկված իմ սրտից՝  
տրտո՛ւմ ու թալո՛ւկ:

Թափկեցին աստղերն անհուն երկնքից՝  
տխո՛ւը ու անփա՛յլ,  
— Թափկեցինք, արցունքներս, հոգուս խորքերից՝  
անհո՛յս ու մռա՛յլ...

Միմյանց ստվերներն, ասես, լինեն աշնան թոշնած տերեներն ու բանաստեղծի տխրությունը,

<sup>12</sup> «Գրական թերթ», 1962, № 42:

միջնորդություն չվերցնող, իրար անմիջականորեն բեկրեկող։ Բնությունը հուզզով երանդափորելու լուրահատկությամբ էլ լուռթյունը գարձել է ոչ թե տանջող, այլ գեղին, ոչ թե գեղին անապատ, այլ լուռթյուն։ Խաղացկուն շողքի, ստվերի նման նիրթափանցված են բանաստեղծի հոգու ու բնության ելեչչները։

Քար լուռթյունն է անհամբեր ձայնի, պատասխանի սպասող գերվիշի պատասխանը, և գեղինի հետ այդ լուռթյունն արտեն վիճակ է գառնում՝ ծանր ու տանջող։ Օրեր, գիշերներ են անցնում, պատասխան չկա, և գերվիշը նորից է աղաջադին դիմում սփինքսին։ «Մարդս խանձարուրից մինչեւ գերեզման անպարտելի հուլսերով ձգառում է երջանկության, սակայն առանց իմանալու՝ թե ի՞նչ է այն», — գիմում է ու թախանձում պատասխան։

Երջանկությանն ընդգառաջ է գնացել ծեր գերվիշը, նորանոր ծիր ու հորիզոններ են գծագրվել նրա հայացքի առջե, համասորեն մղվել է նա այդ հորիզոնները և գարձյալ չի գտել խորհուրդը երջանկության։

Խսահայքանը աշխարհի եղբին է հասցնում գերվիշին, հետեւում թողնելով ամեն ինչ, և հանգիպեցնում առեղծվածին դեմ առ դեմ, ճակատ առ ճակատ։ Կրկին իրար առջե են ահա անչափելի մեծությունները։ մի կյանքով ծնված գերվիշն ու հավիտենականության խորհուրդը, ի սկզբանե մինչեւ վերջ անհղբականն ու անսահմանը, հենց այն, ինչ

գեղարվիստորեն իմաստավորված է «Սֆինքս» բանաստեղծության մեջ.

Տիեզերքի մեծ սփինքսն է անհուն.  
Անսկիզը է նա, ժամանակից դուրս,  
Եվ հավերժ անմահ:  
Հարցեր է տալիս ամեն մարդու նա  
իր ծագման մասին և իր էռթյան,  
Կյանքի և մահվան...

Նույն այս սփինքս-անեղբության շուրջերով  
էլ ահա պատասխան է տրվում զերսիշին. «Գնա՛  
և պատգամիր աշխարհին հանուր՝ հարավին, նույն-  
պես հյուսիսին, արևելքին, նո՞ւյնպես արևմուտ-  
քին՝ երջանկության իմաստը — չպետք է զգալ,  
չպետք է խորհել, չպետք է կամենալ, այլ միայն  
քարանա՞լ, քարանա՞լ, քարանա՞լ...»:

Քարանալու այս պատգամը, թերևս արտաք-  
նապես դիսոնանս թվա իսահակյանական մշտապես  
շարժուն ներդաշնակության մեջ, բայց դա միայն  
առաջին հայացքից: Իսահակյանի մոտ Սփինքսը  
կյանքի ու կինդանության հավիտենական կայտնու-  
թյան հաստատումն է, շրջապատող աշխարհի այն  
անվերջանելի բազմազանության հաստատումը, որ  
Գլոթին ընկալում էր աստվածաբանական որոշ  
հրանգով.

Երբ միհնույնը անհունում  
Նույն շրջապարձն է միշտ անում.  
Եվ կամարներն անթիվ, անվերջ  
Սերտ ներճյուսկում են իրար մեջ.

Իրերը երբ, մեծ թի չնշին,  
Շարժվում են խոլ՝ կյանքի տենչից, —  
Աստըծո մեջ երանավետ  
Խաղաղություն է հար, հավետ:

Իսահականի համար երջանկությունը կյանքի  
շարժման, հարատե հորձանքի հավերժական գոյու-  
թյան մեջ է, որ գլոթեական լավատեսություն է:  
Այդ շարժումը մշտապես ճաշակելու անհուն տեն-  
չանքն է, որ տանջել է մարդկությանը, ինչպիս և  
Իսահականի հերոսին՝ գերմիշին:

Առեղծվածին տիրանալու երջանկությանն  
հասնելու նույն ալդ հոգսով ու տենչանքով էր  
կլանված իր ժամանակին Հայնեն:

Գնում էի, և իմ առաջ  
Բացվեց հանկարծ մի լայն բացատ.  
Եվ բացատի մեջտեղ կանգնած  
Մի հին դյակ բարձրաճակատ...

Դարրասի մոտ կար մի սփինքս՝  
Ե'վ գեղաշուք, և' ահազին,  
Թաթերով ու մարմնով՝ առյուծ,  
Սակայն գեմքով և կրծքով՝ կին.

Զքնաղ մի կին, հայացքի մեջ  
Վայրի տենչեր կային վառված,  
Ու սրտատրով դյութում էին  
Նրա շուրթերը կամարված...

Արձանն հանկարծ կհնդանացավ,  
Հեծեց քարը խորին ցավով  
Եվ համբույրիս բոցերն ըմպեց  
Նա անհագուրդ մի ծարավով...

Եվ հաճույքով, կրքով արբշին՝

Նա իմ շունչը խսպառ ծծեց.

Առյուծային ճիբաններն իր

Իմ խեղճ մարմնի մեջ միբճեց:

Անո՞ւշ տանջանք, բերկրալի ցավ,

Անսահման վիշտ, բերկրանք անվերջ.

Համբույքը ինձ կյանք էր տալիս,

Կյանքս քամող թաթերի մեջ...

Եվ երգում էր սոխակն. — «Ո՞վ սեր,

Սֆինքս, ինչո՞ւ համար այդքան

Մահվան տանջանք ես զու խառնում

Ամեն բախտի, երջանկության:

Դու լուծիր, զո՞ւ, չքնազ սֆինքս,

Առեղծվածն այդ զարմանալի,

Որի մասին խորհում եմ ես

Արգեն քանի հազար տարի»:

Մահացու է հավիրժության — սփինքսի համբույքը: Կյանքի անափ շքեղությունն ու առատաձևությունը հայնեն հաստատում է այդ ամենը մինչև վիրշին կաթիլը վայելելու ու ճաշակելու անհնարինությամբ, «կրակն մի փորձություն», որին անկարող է զիմադրել մարդը: Հայնեական տառապանքը հախուռն է, իսահամկանինը՝ հանդարտ ու լիին, սակայն, և՛ մեկի համար, և՛ միւսի դա ոչ թե աշխարհից պոկվելու, այլ աշխարհը ամբողջովին, «ակունքից» և «վերջից» դժալու ու ճաշակելու տառապանք է: «Բերկրալի ցավ է» անվանում դա հայնեն, ցավով շղթայված քաղցրություն:

Իսահակլանին երբեք չի գրավում ներդաշնակը առանձին, միայն իր համերաշխությամբ ու անգործով, և կոնտրաստայինը՝ ընդգրումով կամ պոռթկումով:

Այս տեսակետից հետաքրքրական է Ալեքսանդր Բլոկը, իսահակլանին ժամանակակից բանաստեղծական մի խոշոր անհատականություն, որը սակայն, խորապես տարբերվում է իսահակլանից աշխարհի ընկալման հենց արև տեսանկունից: Բլոկի պոեզիան մեծապես առնչվում է աշխարհի կոնտրաստների ընկալման հետ: Պատահական չէ ընդգծված գույների նրա նախասիրությունը. նա ամբողջովին կլանված է գույների բախումով, և առհասարակ գեպի աշխարհի կոնտրաստներն է հակված բլոկան բանաստեղծական տարերքը: Նրա կոնտրաստները՝ տրամադրությունները, գույները, երանդները որպես կանոն անշատված, մեկուսացված են ալ, «օտար» հընչուններից.

Дым от костра струею сизой  
Струится в сумрак, в сумрак дня.  
Лиши бархат алый алой ризой,  
Лиши свет зари—покрыл меня.

Բլոկան երանգի ճնշեղությունը նվազող տոնախնության մեջ է: Նա երանգը չի խտացնում բայ և հնչուն նրբերանգների ու անցումների գուգորմով: Մի բան, որ նրա համար գրելածն էր, նշապես և գեղարվեստական մտածողություն: Բը-

յոկի աչքում աշխարհը բաժանված է, զատշատված, անցլալի ու գալիքի, և դրանց մեջ էլ ճինց լուծվում են նրա բոլոր տրամադրություններն ու տպավորությունները, գույներն ու ճնշերանդները: Դրանցից գուրս նա այլ բան չի տեսնում, և եթե տեսնում է, տպա չի ընդունում: Բլոկան բանաստեղծական թիման բնելորված է կլանքից, որպես նրա մեկ, բայց ընդգծված կողմի արտահայտություն:

Արվեստագետների մի այլ խումբ հակառակ կոնտրաստների արվեստի գերադասում է ներդաշնակի արվեստը, վերջինիս անաղարտ, զուարյուն տեսքով: Լեիտանի վրձնի տակ լճակը ներքեից շունչ է հաղորդում անգամ ծառերի կատարներին հազիվ նշանակող տերեւներին: Բնության հանդեպ խորապես նշրագգաց նկարիչը, ասես, խնամքով շոյում է բնանկարը, հանկարծ չխանգարելու համար նրա աշնանային նիրհը: «Դեղանկարչությունը, — գրում է Լեիտանը, — վրձինի խաղ չէ, այլ ճշմարիտ վերտարերմունք ու երանդների ներդաշնակություն»<sup>13</sup>:

Իսահականի մեծությունը, ինարիկե, ներդաշնակն ու կոնտրաստավինը միահյուսելու մեջ չէ: Էականն այստեղ ընդգրկումը չէ, տռարկաները լայնությամբ վերցնելու կարողությունը: Բոլոր-

<sup>13</sup> И. И. Левитан, Письма, документы, воспоминания, М., 1956, стр. 217.

վին այլ բնուլիթի է տարբերությունը Բլոկի ու Լեմիտանի համեմատությամբ։ Իսահակյանը աշխարհը չի մասնատում ու մանրամասնում։ Երբ Բլոկը ողջ բազմազանության ու անցումների ամբողջությունից առանձնացնում է գլխավորապես կոնտրատաները, ապա, նա իր սակագծագործական ուշադրությունը կինտրոնացնում է կյանքի այս կամ այն որոշակի հատվածի վրա։ Նույնն է անում նաև Լեմիտանը՝ ներդաշնակի տեսանկյունից։ Հարցն այստեղ չի վերաբերվում մեծ կամ փոքր չափերին և նույնիսկ դրանց հանրագումարին։ Դա էտպես ոչ մի չափով չի փոխում նրանց գեղարվեստական մոտեցման ու ընկալման բնուլիթը—հավաստիությունը իրականության որևէ հատվածին։ Այս ամենը նոր չէ, ինտրիկի, և հնագույն արմատներ ունի կուլտուրայի պատմության մեջ։

Իսահակյանը աշխարհի այս կամ այն հատվածի ընկալումը փոխանցում է աշխարհի ընդհանուր հարաբերություններին, որտեղ, ինչպես տեսանք, հարմոնիան փոխանցվում էր կոնտրաստների, կոնտրաստը՝ հարմոնիայի։ Փոխվում է այստեղ դրողի և՛ զերքորոշումը, և՛ վերաբերմունքը երևույթների հանդեպ։ Շրջապատը, ասես, վերակառուցվում է նոր ձևով, անդադրվում են հատկանիշները, վերածնվում կապերն ու մեծությանները։ Իրենց բոլորովին այլ կողմերով կարող են ներկայանալ Իսահակյանին ու տպավորվել նրա զգայական աշխարհում անապատը, մարդիկ, ժառերը, սֆինքսը,

կամ զելիուռը: Երևութները, առարկաները նա  
բերնաթափում է նրանց սովորական սահմանա-  
գծի կաշկանդումներից և բացում նրանց փոխազ-  
դեցությունների կանքը: Բաղմազան ելեջներով,  
փոխանցվող պատկերներով, գույնների, ձևերի փո-  
փոխակի խաղով, սիմֆոնի ճկուն, գինամիկ անցում-  
ներով նա հաստատում է ոչ թե երևութիւ արտա-  
քին հավաստիությունը, այլ կանքի, բնութան  
երևութների շարժուն հարաբերությունները,  
կամ, ինչպիս ինքն էր սիրում ասել՝ աշխարհի  
բանը: Իսահականի աչքում ամեն ինչ կապակցը-  
ված է մեծ շրջադարձով, իրականությունը նրա համար  
մասնատված չէ ու բնկորված: Այսօրինակ ընկա-  
լումով իր իրավունքն է հաստատում աշխարհի  
ընդհանուր եղնությունների ոնալականությունը:

Նմանօրինակ ունականության հաստատումն  
էր Հայնեի պոեզիան.

Я разгадал тебя, я разгадал  
Устроиство мира,—

Ինչքան ճիշտ է բնութագրում իր արվեստը  
Հայնեն:

Եթե փորձելու լինենք հեռուն գնալ, ապա  
դժվար չի լինի նմանօրինակ ընկալման սաղմեր  
որսալ անտիկ արվեստում: Հին հույներն առաջին  
պատկերացումներն էին մշակում աշխարհի վերա-  
բերյալ, բայց և չէին բավարարվում տեսածոգա-  
ցածով, ձգտում էին հասկանալ գոյի «կերտվածքն»  
ու «բնակորությունը»: Իսահակյանական ընկալումն

իր բնուլթով խոր արմատներ ուներ մարդկության  
գեղարվեստական զարգացման պատմության մեջ:

Ավելի շոշափելիորեն պատկերացնելու համար  
հրեռութների խաճակալանական ընկալման արդ լու-  
րահատկությունը տեսնենք թե նույն, այսպիս  
ասած, թեման ինչպես է մշակում նա, և գեղար-  
վեստական ինչպիսի եղանակի է ավելի հակած  
Աւ, Բլոկը:

Ամենք, աշունը:

### Բ լ ո կ.

Осень поздняя. Небо открытое,  
И леса сквозят тишиной.  
Прилегла на берег размытый  
Голова русалки больной.

Низко ходят туманные полосы  
Пронизали тень камыша.  
На зеленые длинные волосы  
Упадают листы, шурша  
И опушками отдаленными  
Месяц ходит с легким хрустом и глядит,  
Но, запутана узлами зелеными,  
Не дышит она и не спит  
Бездыханный покой очарован.  
Несказанная боль улеглась.  
И над миром, холодом скован,  
Пролился звонко—синий час.

### Ի ս ն ա կ յ ա ն.

Աշնան ժաղիկներ,  
Դալուկ ու տիուկ,

Դողդոջում եք հեզ  
 Դաշտերում թափուր:  
 Զեր աչերի մեջ  
 Արցունք կա տրտում,  
 Աւշացած երադ  
 Զեր քնքուշ սրտում:  
 Շուտով կը շաչե  
 Հողմը բքաբեր,  
 Կը թոշնիք չապրած  
 Աշնան ծաղիկներ...

Բլոկկան աշունը արտահայտում է նիրճն ու  
 հանգչումը: Իրար հևտեից հորդող ապրումների նը-  
 ման՝ աշունը, կարծես, հոսում է ինքն իր մեջ՝  
 մռացած, որ գարնանալին ջրերի ուրախ կարկա-  
 չլուն կա, ժպիտ կա առնասարակ, անալի հեռու-  
 ներ: Աշնանալին զմալլանք միախ, աշունքվա տրա-  
 մադրություն, հիացումի անշունչ անդորր: Մինչ-  
 դեռ իսահակլանական աշունը «օրորվում է» կյան-  
 քի հարատե փոխակերպումներում: Դեռևս երեկվա  
 երազն է, ուշացած երաղը՝ դողդոջ բեկրեկվում, և  
 ահա շտապում է մի ալլ նորակերպություն՝ սպառ-  
 նում է բքաբեր հողմը: Իրենց ափերի մեջ չեն  
 մնում ոչ աշունը, և ոչ էլ ծաղկունքը աշնան, նը-  
 րանք բնության մեծ «շրջագալության» ոլորտն  
 են առնվում, որից և արտմություն է ծնվում, և  
 կյանքի երապ:

Բլոկն ռաշնանացնում է աշխարհը, ինչպես իր  
 բանաստեղծություններում Վահան Տերյանը: Իսա-  
 հականը, եթե կարելի է այսպես ասել, աշունն է

դուրս բերում մեծ աշխարհ։ Բլոկի նախասիրությունը կոնտրաստն է, դրանով էլ ավարտվում է բանաստեղծության իմաստը, ասենք, աշունը իր տրտմաթախիծ տրամադրությամբ։ Իսահակյանի համար այդ սահմանագիծը, պատճեցը գոլություն չունի, նրա կոնտրաստները ներդաշնակում են, ներդաշնակը հակազրվում, և այս փոխանցումների մեջ է տրամադրության, խոհի բուն ընթացքն ու էռթյունը։

Իսահակյանի դիտած երկուլիթներն ընդգրկվում են կլանքի ու բնության ընդհանուր հատկություններով։ Հեքիաթ-աշխարհի գաղտնիքների հունոյ է «թեքվել» ուժնին. «թեքվել» է ամեն բան նաև եղնիկի համար, հետեւում թողած կյանքի առօրյան եր այս կամ այն դրվագով, գիմաստվերի մանրամասնով. «թեքվել» է և գերվիշի ճակատագիրը, «թեքվել» է ամեն բան՝ նոր հարաբերությունների մեջ մտնելով աշխարհի գոլության եղանակների ու ձեռքի հետ Ոչ մի բան չի առանձնանում, չի դատվում կյանքի այդ ոլորտից։ Մասնաւելը միշտ էլ խորթ մնաց Իսահակյանի արվեստին։ Նրա պատկերների մասին երեք չես կարող ասել, թե սա աշտան է՝ հատված իր բոլոր կողմերից կամ լուսին է սա։ Մահմաններ չեն գնում Իսահակյանը, կամ չափագրում, ապրեցնում է նա երեսլիթները կենսականության բնական արտահայտությունների մեջ։

Շրջանցելով առարկաների տարածականությունը, Իսահակյանը վերանում է նաև իր ստեղ-

ծագործություններում շատ բան «բնակեցնելու» մտահոգությունից։ Նա կարող է դրել մի գարնան մասին ու մի արագիլի։ Առաջան իստիճականական գարունը չի գտնի ու մնում, «կանդնում» ու «սպասում» մանրազնին բժախնդիր պատկերավորման։ Գալիս է ու գնում՝ ինելքաճան անելով արագիլին։ «Սգավոր արագիլի» իդն էլ հենց դա էր. գարունը դար ու մնար, և ինքը հսկա թեկրը փռած թռչեր, լակ-լակ աներ, շյուղ-տաշեղ հայաքեր բերեր իր բունը կամ ձագուկներին թեին առած՝ թռչել սովորեցներ։ Բայց իստիճականի «գարունը» չի որսվում. հատնում չունի գարունը, բոլորում է անընդհատ, տնվերջ վերածելում՝ մեկ երշանկությամբ շնչահեղձ անում արագիլին, մեկ գատապարտում սգավորության։ Իր ոչ մի տեսքով գարունը կանգ չի առնում, և բոլոր գարունների հետ է արագիլի աչքը, ու նա չի կարող որսշել, թե դրանցից ո՞րն է իր գարունը, մինչդեռ վերջինս գնում է ու գնում, փոխվում ու փոփոխում արագիլի բախտը։ «Սգավոր արագիլը» (1912) անմիջականորեն արձագանքում է «Ամեն գարունքին» բանաստեղծությանը՝ գրված 1911 թվականին, թերևս, ստեղծագործական նույն տրամադրության օրերին։

Ամեն գարունքին՝

Արագիլն ուրախ կիշներ մեր ծառին.

Մանուկ ականջիս բարձը կը կանչեր, —

«Դուրս արի խաղանք, ծաղիկ եմ բերել»։

Ամեն գարունքին՝  
 Արագիլն ուրախ կիշներ մեր ծառին.  
 Պատանի սրտիս բարձըր կը կանչեր, —  
 «Դուքս արի՝ թռչինք, երաղ եմ բերեց:  
 Ամեն գարունքին՝  
 Արագիլն ուրախ կիշնի մեր ծառին,  
 Ու նորեն կերթա, ու նորեն կուզա,  
 Բայց, ա՛խ, ինձ համար էլ երաղ չկա...

Արձակ պումում արագիլն է գալիս, բայց  
 ալես չկա անցած տարվա գարունը, բանաստեղ-  
 ծության մեջ արագիլն է գալիս գարնան հետ, և  
 չկա արդեն խաղ ու թռիչքի սպասումը:

Բայց գարունների մեջ իր վերջին գարունը  
 փորձեց պահել Սաագին («Սաագիի վերջին գա-  
 րունը», 1923):

Իսահակյանը գանդապեցնում է Սաագիի վեր-  
 ջին գարնան ընթացքը: Հանդարտ ու անշտապ  
 Սաագիի աչքի առջևից շարվեցարան անցնում են  
 ահա գարնան հրապուցները, մեկը մյուսից թո-  
 վիչ, մի պահ, տսես, հապաղելով, տրվում նրա  
 փաղաքշանքներին, և ապա անհետանում: Ինքն էլ  
 իր հերթին ընդառաջ է գնում հրապուցներին՝ մի  
 անգամ ևս ճաշակելու տեսչով, տեսնելու, շոշափե-  
 լու: Ահա նա իշխում է պարտեզը նորից ունկնդրե-  
 լու բլրունների երգը, վայելելու գարնան հրաշալիք-  
 ները: Լսում է, և ապա խլանում է ձայնը, անէա-  
 նում է երգը. հետո հայացքը գրավում է Շիրազի  
 գաշտը, որ «մանկության շնորհներով ու վարդե-  
 րով պճնված՝ վաղորդյան նիրճն էր առնում՝ պա-

բուրված բուրալից ճերմակ շղարշներով։ Նիրազի դաշտն էլ է հետ քաշվում, և կարոտագին տենչան-քով Սաադին վարդենու նոր բացված կարմիր-կա-նաչ կոկոնն է շոշափում գողղոց մատներով, թը-վում է, շշնջում կոկոնի ականջին, ապա թողնում նաև կոկոնը. այս համաչափ ու գանդաղ շարժման մեջ մեկ էլ, կարծես, սառչում է Սաադու միտ-քը. շուրջն ամեն ինչ հայտնվում ու աներեւթա-նում է և արձագանքի պես լսվում է միայն հալոնվելու ու անհետանալու կլանքի մշտատե դոփիունը։ Դոփիունն է ուղեկցում Սաադու ապ-րումներին. անհագուրդ է մնացել կարոտը, բայց գալու ու գնալու դոփիունն է լսվում։ Դեռ «երա զի աչքերով և ականջով երազի» նա փափա-դում է տեսնել ձեւերն ու իրերն աշխարհի, բայց դոփիունն է լսվում, գես ողին անհայտ ոլորտների «երգերի ու լուռթլան» հետ է, բայց դոփիունն է լսվում՝ աշխարհ գալու ու գնալու դոփիունը։

Նորից բնականորեն իրար են միահյուսվում մարդու ճակատագիրն ու բնության «սովորու-թյունը»։ Անսովոր վիճակի մեջ է Սաադին. իր մարդկալին հուզղերով, սիրով ու սպասումներով կանգնել է գեմ հանդիման հավիտենական կարե-լությունների առջև։ Ընդվզի արդյո՞ք նրա գեմ, մերժի՞, թափի՞ իր սրտի դառնությունը... չէ՞ որ գրա մեջ է իր կլանքի իմաստը. համերաշխի՞... կարող է արդյո՞ք Սաադին՝ վայելքների գեռ այն-քան ծարակ։ Ի՞նչ անի Սաադին։ Ոչ մի կերպ չեն

դատվում իրարից այս արամագլությունները։  
Իրար հետ խոսք են բացում Սաադին ու հավերժությունը, և դա մեկ փաղաքուշ մրմունչ է լինում,  
ապա վշտուս նախատինք, մեկ համերաշխ զրուց,  
և մեկ էլ խռովքով լի վեճ։ Երերում է Սաադու  
հոգին հույզերի այդ ալեկոծությունից, արբանում,  
սուզվելով տեսիլային մի պտույտի մեջ։

Դարնան դանդաղ ընթացքը հետզհետեւ վարարում է, սլանալով—սլանում են պատկերները։  
Եվ տեսնում է Սաադին։

«...աշխարհը իր հոգու մեջ, ինչպես երազի  
մեջ մի երազի»։

Ակնթարթ՝ երերում է նոր տեսիլ։

«Տեսավ Հնդու խաղաղության գետերը որբազան լոտուներով օծուն»։

Չքանում է սա, շտապում է մլուսը։

«Տեսավ իմաստուն փղերին, որ խորհում են  
մթին ջանգալների մեջ»։

Կախարդում է, անհետանում։

«Եվ Դեմիկի սոկնդիավակ ապարանքների մեջ  
սիգաճեմ աղջիկներին տեսավ՝ գիշերագեղ մազերի  
մեջ կարմիր նունուֆարներով»։

Տեսիլների պտույտը թափ է առնում։

«Տեսավ Թուրանի մրրկաշունչ տափաստան-  
ները և մրրիկների մեջ խոյացող ամենի հելուզակ-  
ներին՝ կալծակի թրերով»։

Արագանում է անընդհատ, արագանում։

«Տեսակ նույնպես անապատը բոցակեզ, բնդվինների նժուլգների վաղքը որարշավ. առյուծների հետևից՝ արծիւնների թեերի տակ», «և երկուդած ուխտավորների անծալը քարավանները տեսավ. աղոթքով ու երգով Մեքքայի դարբասների տռաջ նրանց ծունկի գալը»:

«Եվ տեսակ Մորա աշխարհի հնագեղ հրաշքները և կապույտ ծովերի ծփուն բյուրեղը Եվ Դամասկոսի թափիշ աղջիկներին...»:

Խենթանում է Սաադին Հնդու գետերի, մթին շանգալների, Դեհլիի սիդաճեմ աղջիկների, հնագեղ հրաշալիքների փայլից: Ասես, վալսպուրդյան գիշերների խելանեղ զվարճություն լինի. ցատկուտում են հրաշալիքները, նաղում իրենց հրապուցներով, և մեկ էլ կորչում, անէանում. վաղքով գալիս են նորերը, և ցնորական պառլատներով կրկին հանգչում՝ խելահեղորեն դալարելով իրենց հետ Սաադու հուլերն ու մտածումները: Եվ ինչպես Ֆառարա, Սաադին նետվում է առաջ, փորձում մի պահ որսալ, տիրանալ ամենին: Պարզում է Սաադին ձեռքերը, և անա ուր որ է կհամնի ըղձալի բնութիւնը, իսկ սա մեկին, աննկատ փոխվում է, ծածկվում մի նոր անծանոթ շղարշով: Մուժի մեջ, կիսարթուն, մեկ էլ Սաադին հանկարծ շանթահարվում է. կարծես առաջին անգամ է տեսնում աշխարհը, փորձում է մոտ գնալ այն ամենին, ինչ հենց նոր պատկերացել էր իրեն,

բայց արգեն այն չէ իր տեսածը: «Եվ ամեն օր նայում եմ աշխարհին և ամեն օր դարմացած, կարծես, առաջին անգամն եմ տեսնում աշխարհը.— աշխարհը՝ առօրյա և միշտ հիասքանչ, աշխարհը՝ հնօրյա և միշտ նորաստեղծ...»:

Իր կյանքի մայրամուտին է կանգնած Սաադին, իսկ աշխարհը լի է նոր սաղմնավորումներով ու ծնունդներով: Նա տառապանքով է զգում, որ չի կարող հասնել իր տեսիլների անվերջանելի նորոգումներին, որ կամաց կամաց հետ է մնում, մինչդեռ կյանքը՝ անընդհատ գալար ծիլեր է նետում, նոր հոսանքով գալիս ու դնում: Հետ է մնում Սաադին և արգեն իրենից բնիված ու հեռացած նշմարում այն ամենը, ինչ երեռում է իրեն, նայում է մեկ, ասես, արթմնի, մեկ երազում՝ ներսուղված անհուն տխրության մեջ:

Այս մաալ խոհերի մեջ Սաադին հանկարծ նկատում է առջելը երկու կարմրատոտիկ տատրակ, որ իրենց կարուն էին առնում մարգերից ու միմյանցից. «Երկու տատրակ, որ կարմիր տոտիկներով շրջում էին կանաչ մարգերի վրա, քաղցր գվաղվալով»: Փայլատակում է Սաադին. տխրությանը, Սաադու մեծ տխրությանը, անտեղյակ իրենց ուրսիս վայմելքով են տարված տատրակները. մի պահ գալար են առնում Սաադու ավըրումները, ամենից վերացած նա գորովանքով նայում է աշխարհի այդ անմեղ, ինքնաբուխ ուրախությանը ու հիանում: Իր վաղեմի բոցկառմներն է

մտաբերում ու հիշում, և նրա հոգին շուռ է գալիս դեպի նորեն հարություն առնողը:

Սաադու տրամադրության տեականության պատրանքն է ստեղծում հսահակյանը: Փոխվել են միայն կյանքի սիրո ու կարոտի տրամադրությունները, հոսանքը նույնն է, և այն՝ ինչ վիշտ ու տառապանք է գարձել Սաադու համար, տառրակների համար զվարճալի խաղ է: Եվ մտառանշելով—մտառանջում է Սաադուն բնության մեծ առեղծվածը:

«— Աշխարհը գլխիվայր հոսում է, քարքայվում է ու ձեալուծվում, և ի՞նչն է, որ նորից կերտում է ու կազապարում այս հոյակապ աշխարհը, և մեր հոգու շուրջը փոռում այս հրաշքն ու հեքիաթը:

Ո՞վ ստիպեց եղնիկին, որ պապակ սրտով մագլցի սեպ ժայռերը՝ եղջուրները քարերին փշրելով տարիալից մոնչյունով թափուտները թինդ հան:

Ո՞վ ստիպեց, որ վարդը ճեղքե իր զըմբուխայ զրահը և բուրի հեշտագին:

Ո՞վ ստիպեց մարդուն, որ անհայտից բխե ձե ու հոգի առած՝ մտածելու և տառապելու համար. զգալու հուրը մեղ ալրող ըղձանքի և չիափագի երբե՛ք մեռնելու:

Հարցերի տարափի է տեղում Սաադին, ու չի դառնում պատասխանը: Եվ ումնի՞ց արդկոք պա-

տասխան առնի, թե ինչո՞ւ է դա իր կյանքի վերջին գարունը, չէ որ գեռես ինքը կյանքի կարոտ է, անհագ ծարավ: Մարդկային անոքող, անկիղծ հառաջանքն է թրթոռում նրա գունատ շրթունքներին: Սաադին փորձ իսկ անգամ չի անում թոթափելու իր վրայից մարդկային հարազատ էությունը, վերանալու և տիեզերանալու ճիգ: Անսահմանն ու հարատեն է փափագում ճաշակել մարդկային իր շոշափելիքով, տեսողությամբ, իր շնչով ու զգացողությամբ: Մարդկային վիշտ ու ցավ է մաշում Սաադոն, բայց մարդու մեծ՝ տիտանական վիշտ ու հոգս: Նրա սիրտը անափ մի գորովանքով է հեղեղվում ծով հուզելով, որին այս տնգամ էլ շունչ է հաղորդում նազիաթը՝ «հրաշք աղջիկը Շիրազիա»: «Նազիաթի զինեվիստ շրթերը և և հուլանի թևերի լուսն ու կրակը շատ անգամ արևադարդիկ էին դարեւոր Սաադիի անքուն գիշերները»: Արևագարդիկ էին, բայց էլի աչքը նազիաթի հնատ էր:

Վարդերի մինչով, բույրով ու երդով է հայտնը վում նազիաթը, միախառնելով հողեղմնն ու անըրաջայինը Սաադու աչքում: Բուրմունքի քուլա է ձգվում նազիաթի վարսերի հյուսքից, գրկախառնը վել նո, ասես, նրա քնքշանքն ու Շիրազի մեղմ, անուշ սյուքը: Հեռավոր օրերի երազից Սաադու առջև ծունկի է գալիս նազիաթը, և Սաադին, սակայն, չի կարողանում ալևս դողդոց ձեռներով բռնել իր սիրուհուն: «դողդոց մատներով շոլեց

Նազիտիթի երազաբուլը վարսերը»: Շորշովն է միայն առնում Սաադին, ի վիճակի չէ այլև ամուր բանել, գրկել ու հավերժորեն պահել գարունը, իր նազիտիթին...

Եվ հրաժեշտ է տալիս Սաադին՝ աշխարքին՝ մարդկացին կարոտի ու տիրության ամենավեհ ապրումներով.

«...Սաադին հոգու խորին հատակից նալից մեկ՝ իր շուրջը բանկած հեքիաթ-աշխարհին, մեկ՝ իր առջեղ՝ լուսաժպտուն հրաշք-աղջկան, և դգաց տաք արցունքի մի կաթիլ իր հին սրտի մեջ, և բռնելով աղջկա փոքրիկ ձեռքը, համբուրեց ու դրեց լացող սրտի վրա՝ տահլով...

«Ծնվում ենք ակամա, ապրում ենք զարմացած, մեռնում ենք կարություն...»:

Իր հերոսի հետ իսահակյանն է խորհում, մըտրում աշխարհի այդ տարօրինակ «խառնվածքի» շուրջը, որ շաազորեն պարզեւում է, զարմացնելով զարմացնում ու հետ քաշվում՝ թողնում կարություն:

Մեծ մտերիմներ են իսահակյանն ու իր արձակ պոեմի հերոսը, և իդուր չէ, որ նա ընտրել է հենց Սաադուն, արենելքի խոհուն բանաստեղծին, աշխարքի ու կյանքի սիրահարին, որ նրա համար «Գյուլիսատան» էր՝ ծաղկաստան, միաժամանակ և անհղուական կարոտի ու տենչանքի ակրոնք՝

իր շքեղ պարգևներով ու անվերադարձ կորուստներով:

На разноцветной скатерти жизни,  
Мы съели всего один кусок, и нам  
сказали: „Довольно!“

*Արում է Սաադին «Դյուլիստանում»:*

*Այս «հոգսը» մտատանշել է ոչ միայն Սաադին, այլև Թիրդուսուն.*

О мир! Бесстыден и погубен ты,  
Сам вскормишь, воспитаешь, и сам же убьешь

*Արագավազ ժամանակի դիմ է ծառացել և  
Լի-Թալի-Պոն՝ չին մեծ բանաստեղծը, — ժամանակ,  
որն իր վաղքի մեջ ժամանակ չի թողնում մարդուն հագինալու կանքից.*

...Остановить бы  
Шестерых драконов  
И привязать их  
К дереву фусан.  
Потом, небесный ковш  
Вином наполнив,

Поить—чтоб каждый  
Намертво был пьян  
Хочу ли  
Знатным и богатым быть?  
Нет,  
Время я хочу остановить.

*Արևելյան պոեզիայի մեծ ներկայացուցիչներին հնում, ինչպես և նոր ժամանակներում միշտ էլ զբաղեցրել է բնության հետ այս «մտերմության» ու «օտարության» ֆառստին տանջող ցավը:*

*Այդ ապրումների ոլորտում է ներկայանում և  
իսահականի կերտած չին բանաստեղծ Լի-Թալի-*

Պոն: Լի-Պոն փոխել է իր սովորական ռառնչությունները՝ աշխարհի հետ նա կանգնած է բնության մեծ խաղերի միջև։ Այսպես, ինչպես եղնիկը հեռու իր միջավայրից մոլորդել է բնության ներդաշնակումների և կոնտրաստների անցուղիներում, Սաադին սուզվել աշխարհի կարգ ու բանի մեջ, դերվիշը արձանացել մեծ առեղծվածի առջև...

Ալգլիսին է իսահականի արվեստը. նա մարդկային հուլզերն ու խոհերը բեկում է աշխարհի «շարժուձների», նրա ընդհանուր եղելությունների մեջ, չմասնաւոելով, չտրոհելով աշխարհը։

---

ԼԵԳԵՆԴԻՑԻ

*XIX* դարի վերջերից հայ գասական գրականության մեջ մի արտակարգ հետաքրքրություն է նկատվում հայ ժողովրդի և առհասարակ մարդկության ստեղծած լեզենդների հանդեպ։ Բացատրել այլ հետաքրքրության պատճառները, նշանակում է անդրագաւնալ գրականության, հատկապես պոեզիայի զարգացման օրինաչափություններին, բուն էությանը, իր անսպիսի ներկայացուցիչներով, որպիսիք են Թումանյանն ու Խոահակյանը։ Աղդալին ու համամարդկային լայն և խոր ոլորտ էր թևակոխում հայ բանաստեղծությունը և այդ ճանապարհին անկարելի էր անտարբերությամբ անցնել լեզենդների, ինչպես և առասպիշների, զբուցների, առակների, էպոսի, հեքիաթների կողքով։ «Ամեն մի աղջի բանաստեղծություն, — հայու-

տում էր մեծ թումանյանը, — ժողովրդական լի-  
գինդներով, աղջային սգու ստեղծագործություն-  
ներով է զորանում ու ինքնուրույնության կնիք  
առնում, հաստատվում, առաջ գալիս, որպես մի  
ամբողջ ժողովրդի խոսք և գրանով էլ դառնում  
պատկառելիք<sup>14</sup>: Մի ուրիշ առիթով թումանյանը  
նկատում է, որ առասպելների ու լեգենդների հերոս-  
ների արտահայտած տեսչանքը ոչ թե մի անհա-  
տի ցանկություն է «այլ մի ժողովրդի, որ առաս-  
պելի մեջ արտահայտել և գրել է անհատի որը-  
տում»<sup>15</sup>:

«Անհատի սրտում ճամաժողովրդականը, ճա-  
մաժարդկային—սրանով է ճապուրել թումա-  
նյանին Փարվանա զստեր լեգենդը, որի ատաղձի  
վրա խտացրել է նա իր ժողովրդի ճավերժական  
սիրո տեսչանքը՝ որպես մի ամբողջ ժողովրդի  
պատկառելի խոսք ու իմաստություն: Եվ ինչո՞ւ  
միայն «Փարվանան»: թվարկել թումանյանի օգ-  
տագործած լեգենդների, զրուցների, առակների,  
առասպելների շարքը, նշանակում է մեջտեղ լև-  
րել բանաստեղծի ժառանգության մի զգալի մասը:

Լեգենդային «պատկառելի» իմաստության  
հունը թումանյանն ու հսահականը չեն լքել իրենց

<sup>14</sup> «Թումանյանը քննադատ», Հայոցետհրատ, 1939,  
էջ 77:

<sup>15</sup> Նույն տեղում, էջ 25:

ստեղծագործական մեծ ճանապարհի ընթացքում, և դա եղել է խորապես գիտակցված, սկզբունքալին վերաբերմունք և մեկի կողմից, և մյուսի: Ժողովրդական իդեալների ու ձգտումների գրականություն էր նրանց ստեղծագործությունը, որ չէր կարող ստեղծվել առանց այդ իդեալների ու ձգտումների բուն ակունքի: Ժողովրդական ստեղծագործության:

Ավելի վաղ չափածո լեգենդներ, մի փոքրուշ, չափածոյի կողքին, իսահակլանական արձակ լեգենդներ. առաջինների մի գդալի մասը գրված աղքալին ավանդության կամ ավանդավեպի հենքով. «Իրիցկնկա աղբյուրը», «Մալրը», «Մորսիրտը» և այլն. մյուս խումբը առնված արևելքի ու արևմուտքի ժողովրդական ավանդության հարուստ գանձարանից, բայց և իմաստավորված սեփական ժողովրդի դարերի ճանապարհ կտրած իմաստության դիտակետից:

Իսահակլանի չափածո լեգենդների մի մասի ոգին, արամադրությունների խոհական շեշտով հանդերձ, առավելապես հուզական-զգացմունքալին է՝ «Մորսիրտը», «Մալրը», «Միրահար Նաղոն», «Լելի և Մեղլում», «Ասպետի սերը»: Արձակ լեգենդները իրենց խոհական բնույթով մհծապես աղերավում են Իսահակլանի չափածո լեգենդների մյուս խմբին՝ «Հալրենի հողը», «Ավգուստինոսի տեսիլքը», «Աթթիլան և իր սուրը», «Ակրատեսը», «Հրեական առասպեկը», «Հոռտն ու հովիվը»:

Խմբավորումն, իհարկի, պալմանական է, քանի որ  
երկու գեղքում էլ նույն է լեզենդների մշակման ու  
իմաստավորման ելակետը, լեզենդի էռթյան բա-  
նաստեղծի ըմբռնումը։ «Լեզենդները, առասպել-  
ները, — գրում է Խսահակլանը, — ցանկությունների  
արդյունք են Մարդկային տեսիլները, ձգտությունները  
առասպելների, լեզենդների մեջ գտնում են իրա-  
կանացում, բովանդակություն, վարձատրություն։  
Այն, ինչ չի կարելի աշխարհում նյութապես իրա-  
կանացնել, իր կենսագործումը ուրեմն, գտնում է  
երազների, տեսիլների, լեզենդների, առասպելների,  
պոեզիայի մեջ։ Դրանով, դրանց միջոցով տենչա-  
ցող հոգին հանգստանում է ու բավարպվում»<sup>16</sup>։

Եվ իսկապես, էլ որտեղ կարելի էր իրականաց-  
նել հավիտենապես շնչելու ու ապրելու Մասդիի  
անհուն տենչանքը, էլ-Մամանի ու Բամբիշի  
հավիրժական սիրո երգումը։

— «Եղիորտակեմ կամարները երկնային,  
ես չեմ թողնի, ես չեմ թողնի՝ զու մեռնիս.  
Եվ կվանեմ, և հնազթեմ չար մահին,  
ես չեմ թողնի, ես չեմ թողնի՝ զու մեռնիս։»

Լեզենդում, իհարկե, միայն լեզենդում, ըստ  
որի օճն արդեն էլ-Մամանի ոսկորների փոշին էր  
սրբում, բայց էլ-Մամանը նորից պիրկ գրկած  
բամբիշին սառած շուրթերով գարձյալ նույն եր-  
գումն էր շշնջում։

<sup>16</sup> «Գրական թերթ», 1969, № 44։

Ե՛վ Թումանյանի, և՛ Իսահակյանի նախառից  
բած լեզենդները որպես կանոն չեն պատկանում  
լեզենդների այն տիպին, որոնց հաճախ ժամանա-  
կը մաշում է՝ անիրականալին դարձնելով իրական,  
ինչպես, առենք, XX դարը վարչից թուղթ Իլարի  
հալտնի լեզենդի հետ: Սովորական, բայց մարդ-  
կության գոյությանը մշտապես ողևկցող կլանքի  
լեզենդն է նրանց նախընտրած ոլորտը, ձգտումնե-  
րի ու երազանքների այն առօրմականը, որ նոր  
բովանդակություն ստանալով հանգերծ, կրկնվում  
է մարդկային ամեն սերնդի հետ, ասես, պարա-  
պում, և նորից ու նորից հատնում հետաները, վո-  
խակերպվում, բայց և տեսականորեն շարունակվում:

\* \* \*

Փոխաբերական իմաստ ունի Իսահակյանի  
«Շիգհար» լեզենդը (1907). այն կարելի է ընկա-  
լել բազմապիսի առանձնահրով, բայց, թվում է թե,  
բանաստեղծի ստեղծագործական աշխարհին ա-  
մենից հարազարը այն առումն է, որի մասին ու-  
զում հնք խոսել: Աշխարհի ճանաչումն էլ իր լե-  
զենդն ունի—մոտավորապես ոտք է «Շիգհարի»  
իմաստը, մի զարգացմաք, որ մշտապես հետաքրքր-  
րել է նրան առաջին հերթին հենց որպես արվես-  
տագետի: Կան բախտավորներ հենց արվեստում,  
որոնց համար այլպիսի լեզենդ գոյություն չունի,  
և դրաբերին ու պարզ է ամեն բան: Նույն արդ բախ-

տավորնելին է մատնացուց արևի Զարեհցը իր  
քառյակում.

Այս, նայե՛ք, այդ մարդը, այդ հիմարը,— նա  
տեսնում է լոկ այն, ինչ տեսնում է.

Հավասում է նա, որ սա թուղ է, նա տեսնում է  
լոկ այն, ինչ տեսնում է.

Դու ծաղրի՛ր նրան, իմաստո՛ւն, զու տեսնում ես  
անումն ու ընթացք,

Եվ գիտես, որ ընթացք է աշխարհը,— նա  
տեսնում է լոկ այն, ինչ տեսնում է:

Միծ իսահականը դժվարանում էր բացար-  
ձականացնել իր տեսածն ու իմացածը. «Լոկ այ-  
սը», կամ «Լոկ այնը» օտար էր նրա պատկերա-  
ցումների ու ըմբռնումների աշխարհին: Աճումն ու  
ընթացք պեղելու հակված գեղագնտի նրա հայց-  
քը մերժում էր, բացասում իրերի, երեսը թնդի  
«մի տեսքի», թող այդ տեսքի անհամար դրսեռ-  
լումներով, բայց «մի տեսքի» պատկերացումը:  
Նրա աչքում հայտնությունների հնարավորությամբ  
ամեն ինչ անսատնման է, աշխարհի ամեն մի ան-  
դրադարձում հղի անթիվ նորածեռթյաններով:  
Իսահականական ձմռան պատկերը կյանքի գար-  
թոնըն է թաքցնամ իր խորքում, կյանքի հեքիա-  
թը գրաւր-բլուր» ձեհրով է «անդուլ ու անխոնջ»  
պատմվում:

Ամենատարբեր երանդներով ու կողմերով կա-  
րակ է բեկվել նայն երեսը արվեստում: Էլ որպի-  
սի նրբերանգներով չի հաղորդվել, առենք, գարնան-

զգացումը պոեղիայում։ Սակայն դա հաճախ սկսվել ու վերջացնել է գարնան լոկ մի արտահայտության պատկերումով։ Եվ, եթի այդ գեղքում ընկալվում է անհամապարփակ գարնան մի պահը, ապա իսահակյանը հաղորդում է գարնան փոխակերպումների անհամապարփակությունը։ Իսահակյանական գարունը անցումի չապասված տրամադրություններով ու հույզերով է հղի, և լոկ այս չէ, կամ այն։ Նաոչ թե գարնան բանաստեղծական արտահայտություններն է քաղում ու խոտացնում, այլ նորաձեւվությունների ու հայտնությունների հարստությունը։ Փոխակերպումների հնարավորության տեսանկյունից է բանաստեղծը ընկալում կյանքն ու երեւվութները, և հենց դրա մեջ է ահա նրա արվեստի ընդգրկման ու խորության գաղտնիքը։

Անսովոր, իսկապես որ միայն լեզենդներում իրականացվող հունով է տարել իսահակյանը իր հերոսին՝ Շիդարին, բաց անելու նրա առջև նորաձեւթյունների հնարավորության անսահմանությունը։

«Թափառական Շիդարը վեր բարձրացրեց մասզբաղ աչքերը, որոնց վրա արևակեղ ճակատի խորունկ խորշումներն էին իշել։

Եվ տեսավ զարմանքով, որ ա'յն գաղեմի ծանոթ ծովը, որի շառաչուն ափերով ինքն անցել էր մի քանի անգամ իր գարավոր թափառումների անկայուն ընթացքին, հիմա մի ծարավուտ և տառասկոտ անտպատ է դառել։

Եվ տեսավ, որ նախկին ծովի կանաչ ալիքների վոխարեն, որոնց վրա նավերն էին օրորվում փետուրի պես, — հիմա ավաղի դեղին ալիքներն են գտլարվում անապատային առյուծի բաշերի պես:

Եվ նավերի վոխարեն դանդաղ քայլում է կարավանը խուլ զողանջումով:

Երկաթեղեն ուներով մոտեցավ նա կարավանի պետին և խոլածայն հարցրեց.

— Քանի՞ ժամանակ է, որ ալստեղ անապատ է գոյացել.

— Խե՛ղճ ծերուկ, խելքդ թռցրել ես, — բարձրաձայն ծիծաղից առաջնորդը,

— Ճիշտ եմ ասում, անծանոթ բարեկամս, տարիներ առաջ, երբ անցա, այստեղ մի անեղը ծով կար, իսկ հիմա — անջուր անապատ:

Եվ նրա ահաղեցիկ ձայնը գալիս էր դարերի մոալ խորքերից:

— Սակայն քո աչքերից չի երեռում, թե դու խելագար ես: Բայց ի՞նչ անհասկանալի բաներ ես ասում: Մեր պատերի պատերի պատերը անցել են այս տեղով, ու նրանցից էլ շատ առաջ շատերն են անցել, իսկ այս անապատն աշխարհի սկզբից կար ու կմնա...»:

Անցնում են դարեր, և իսահակլանը իր հերոսին նորից է շառաջնորդում նույն վայրը.

«Երբ մոտեցավ ծանոթ վայրի սահմաններին՝

տեսավ, որ երեկուա ամալի անապատում հիմա  
մի մարդաշատ քաղաք է հսում:

Մոտեցավ քաղաքի մեծ դռանը և միամտու-  
րեն հարցրեց գոնապանին.

— Ի՞նչ շտառ շինեցիք այս քաղաքը:

Գոնապանը շատ տարօրինակ գտավ այս  
հարցը:

— Ինչպես թե... շինեցինք: Վաղուց, վա-  
ղուց գոյություն ունի այս քաղաքը. մեր պապե-  
րի պապերի պապերը չգիտեն անգամ, թե ո՞վ և  
ե՞րբ ձգեց այս քաղաքի հիմերը: Այս քաղաքն  
այնքան էին է, որքան աշխարհը:

Մուլներով լիցուն աչքերը մեծ թափառա-  
կանը նեանց քաղաքի վրա — փողոցներում և շու-  
կաներում խոնվում էին ալրեր, կանալք և երեխա-  
ներ:

Ոմանք աճապարում էին մտահոգ, ոմանք  
արեի տակ զվարճանում էին անհոգ, և երեխաները  
զվարթ խաղ էին անում աղբյուրների շուրջը:

Կանալք՝ պճնված վարդերով ու գոհարներով,  
հրապուրում էին ալրերին. և նրանց երազան  
հայացքները սիրո անվախճանությունն էին իուս-  
տանում:

Հրապարակների վրա պերճախոսները որո-  
տում էին հավերժական ճշմարտի և գեղեցկի  
մասին, մարդու աինգերական արժեքի և նրա  
գերագույն նպատակների մասին...»:

Նորից մի դաժան ծաղը գալարվեց՝ անապատի օձի պես՝ Շիդարի մթադին շրթների վրա.

«Ա՛յն թռչող վայրկյանը, որ մարդիկ կյանք են անվանում, հավերժական է թվում այս խեղճերին... Սակայն, ո՞վ փրկարար պատրանք... Իրենց խխտնցից տիեզերական օվկիանի խորհուրդներն են լուծում և օրենքներ են սահմանում անհունին և անսահմանին...»:

Եվ ինչքան որ գնում է Շիդարը նույն վայրը, այնքան անգամ էլ նորակերտված է տեսնում այն.

«...քաղաքի տեղը հիմա փուլում է մի դաշտավայր՝ ծաղկավետ և գարնանագեղ: Գետակի ափին պարում էին ու երգում նորաբողբոջ աղջիկները: Եվ հովիվը արածացնում էր խաշների հոտը սրնդի վայրալների տակ:

— Ո՞ւր գնաց այստեղից քաղաքը, — հարցրեց նա հովվին:

— Ի՞նչ քաղաք, — ապշեց հովվիվը:

— Տարիներ առաջ իսկ և իսկ այս կողմերն էին մի մարդաշատ քաղաք էր եռում այստեղ: Նրա մասին է խոռըս...

— Հովվիվը քարեկտրած նայում էր Շիդարին:

— Ե՞րբ առաջ եկավ այս դաշտը, — հարցրեց Շիդարը:

— Ի՞նչ սարապիկի բաներ ես ասում. եսքեղ չեմ հասկանում... մեր պապերի պապերի

պապերը, և էլի առաջ, ալստեղ իրենց հոտերն են արածացրել: Այս դաշտը կար աշխարհի սկզբից և կմնա...»:

Զարմանում են Շիդհարի վրա, զարմանում է և Շիդհարը: Այն ամենը, ինչ կա և տեսնում ենք՝ եղել է ու կա, աներեր ու մնայուն— ասում են Շիդհարին. մոլորությունն է դա՝ մտածում է Շիդհարը: Վեճին միջամտում է Խսահակլանը և չի հակադրում, մերժում մի հայացքը՝ մյուսով: Լեգենդում անկեղծ է հնչում և պապերի պապերի վկայակոչությամբ տեսածը, և Շիդհարի անհամաձայնությունը դրա հետո: Երկու կողմն էլ իրավացի են լուրովի: Տեսնում է քարավանապետը անապատը ռծարավուտ ու ատառամկոտ», դեղին ալիքներն ավազի և համարում դա սկզբն ու վերջը աշխարհի: Շիդհարն էլ տեսնում է անապատի վերածեսումը մարդաշատ քաղաքի, ապա ծաղկավետ ու գունագեղ դաշտավայրի: Եվ Խսահակլանի լեգենդում տխուր հեգնանք են հարուցում ինչպես ամեն ինչ բացարձակացնելու առաջին պատկերացումը, նոյնպես և եղած-չեղածի անկայունության հաստատումը: Այս երկու միաւկողմանի հայացքն է հաղթահարվում Խսահակլանի արվեստում: Նա սինթեզում է կենսական հավաստիությունն ու աշխարհի ընդհանուր եղելությունների զգացողությունը: Անապատը, քարը, գարունը ոչ միբաժ են գառնում և ոչ էլ անշարժանում իրենց որևէ տեսքով: Խսահակլանը մեծ շրջապը-

տույտի մեջ է դնում երեսլթները, և նրանք երբ չեն առանձնացվում ու բացարձակացվում: Սա էլ հենց պայմանավորում է նրա ստեղծագործական կան և լակետը: Արարատը, օրինակ, նա երեք չպատկերեց մուժի մեջ, լուսագեմին կամ մայրամուտին, այսինքն չստեղծեց Արարատի բազմազան տեսքերի գեղարվեստական վերաբարության ինչոր քանակ: Արարատը նա դիտեց «Ռավիննալում», կը անքի անհատնում երթի ու ընթացքի մեջ, գոյտթյան փոփոխվող կապակցությունների ոլորտում.

Արարատի ծեր կատարին  
Դար է եկել վայրկյանի ոկես,  
Ու անցել:

Անհուն թվով կայծակների  
Սուրն է բեկվել աղամանդին,  
Ու անցել:

Մահախուճապ սերունդների  
Աշքն է դիսկել լույս զագաթին,  
Ու անցել:

Հերթը հիմա քոնն է մի պահ.  
Դու էլ նայիր սեղ ճակատին,  
Ու անցիր...

Աշխարհի, բնության մի ձեի բազմազանությանը իսահակլանի արվեստում փոխարինվեց ձերի բազմազանությամբ:

Աշխարհի լեզենդներից մեկն էլ իսահակլանի համար նրա ճանաչման լեզենդն էր, հավիտենա-

պես նորոգվող ու հարատեղող, և նա այդ լեզենդի վերաբերյալ գեղարվեստական նոր խոհեր բերեց իր արտիստութիւն:

\* \* \*

Լինում է և այնպիսի լեզենդ, երբ մարդ հավակնում է ներկայանալ որպես իմաստոթյան տիւրակալ: Հալածող մի ցավի պես է կպչում արդ քմահաճույքը մարդոց ու պոկ չի գալիս ոչ մի ուժով: Ցկարամատոթյան մեջ, կարծես, անապ պար է բռնում մտքի կարծեցյալ ամենակարողությունը: Այս ցավով է տառապում տիհա իսահակյանի Բողոքիխանը («Ծի-Հոռնդ-Ծի Բողոքիխանը», 1907): Մի այլ տարբերակն է սա «քաշոթյան» միահեծան Քաջ Նազարի և նիղակներ ճոճող «ամենափրկիչ» Դոն-Քիշուուի:

Սա էլ տառապում է մի ուրիշ մոլոցքով. այն է՝ ամբարել իր մեջ բանականոթյունն ի սկզբանե մինչև վերջ, մենաշնորհ հաստատել անցած ու գալիք բոլոր ժամանակների մտածելու, դատելու, հասկանալու կարողության վրա: Պարզսիրու ու բարեհոգի չե, սակայն, սա Դոն-Քիշուուի և որոշ առամով էլ Նազարի պես. «վաքքը ինչ» տարբեր է իր խառնվածքով, նյարդավին է, նեղոսիրու, պատժված մոալլության անբռնելի ախտով, կյանքը կարծես դիասվորյալ խլնլ է նբանից ուրախանալու կարողությունը, որպեսզի լիաթոք ու կոչտ ծիծաղի նրա վրա:

Շատ անխնա է զարվել արևելքի իմաստոն լիգինը, և նրա հետքերուի՝ իսահակյանը այս Բողդիկիանի հետ: Այսպիս կոչված «ներքին» կոնտրաստի հնարանքով, խախտելով մարդկալին բնական համաշափոթյունը, գրաղը նրան գրել է, քիչ է առեւ, զավեշտական վիճակի մեջ: Հիպերբոլիկ չափունի մալոցքը, մինչդեռ չնչին է մարդկալին «տարողոթյունը»: Բողդիկիանի ողջ անձը աննկատելի մի հավելված է զարձել նրան հյուծող ախտի, և ստացվել է ինչ-որ տձեւ մի բան: Խոժոռոթյունից անհետացել են մարդկալին զիմագծերը, և մոայլոթյունը տարերքի չափ է ընդունել. «աչքերի մեջ մրրկում էր զալրացկուս Դեղին ծովը, անդուլ ճանկառմ է Զինու ափերը», ճակատին դալարվում էին «Գորի անապատի օճերը», մտատանջ է ու դժնատենիլ «ինչպես մթագին ամպը, որ շանթ ու որոտ անի կրծքում խտացած»:

Այսպիսի պատիժ էլ է լինում, և իսահակյանը այնքան է «ավել» Բողդիկիանին, որ սա թաղվել ու անհետացել է ստացածի մեջ: Սպանել ու ոչընչացրել է նրան վեճխարբացնելով: «Հոկա» է Բողդիկիանը, բայց չի հբռում. չեղալ, սուտ մի մոնումենտ է, ասես, և սա ծաղր է կյանքի քառողինեկում ստեղ-ստեղ հայտնվող իմաստության մենաշնորհի հավակնորդների հասցեին:

Բոտ որում լիգինդում հեղինակը չի ծիծաղում, և չի ծիծաղում նաև ընթերցողը: Միայն թե իմաստության միահեծան տիրակալի գիմակի տակից՝

մեկ մի կողմից, մեկ մլուս, անվերջ ցցվում է «իմաստունի» նրա խսկական գեմքը, և մատնում ճշմարտությունը: Իսկ ինքը, անտեղյակ սեփական գեմքի գալագրաթյանը, շարունակում է իր տխուր կյանքի լիգենդը և պրծուն չունի դրանից: Ոչոք, սակայն, չի ծիծաղում, և ահարեկված են բոլորը. իսկ Բողդիխանին ուրվականի պես հետապնդում են սեփական անձի հարոցած մղձավանշային ժպիտները:

Զինական աշխարհի գիտուններին ու իմաստուններին ծնկի բերած իր առջև՝ Բողդիխանը բռնությամբ ուղղում է մեկն մարդարեանալ, ստանալ անիմանալի բոլոր «ինչուների» պատասխանը. «Ասացեք, ինչո՞ւ համար է ապրում մարդը, ի՞նչ է կյանքի նպատակը, որտեղի՞ց ենք գալիս մենք, ո՞ւր ենք զնում մենք, ի՞նչ է նյութը, ի՞նչ է ուժը, և ինչո՞ւ են դրանք, պատասխաննեցեք ինձ: Ասացեք, ի՞նչ է տիեզերքը, ինչո՞ւ ստեղծվեց նա, ե՞րբ է նրա սկիզբն ու վախճանը, և վերջապես, ի՞նչ է ժամանակն ու տարածությունը, և ինչո՞ւ են դրանք...

...— Դո՛ւ ասա, ո՛վ ծերով, որ ավագն ես գիտուններիդ մեջ,— գիմեց նա ամենից զառամլալին»:

Եվ անգամ արևելյան ծածովկ հեգնանքն ու հնարամտությունը չօգնեցին. «—Այս դու մեղնից բյուր անգամ լավ գիտես, ո՛վ մեծոց Բողդիխան, դու՝ արքաների արծիվ, որ երկնքի որդին ես և

արևից իջած,— երկուզագին պատասխանեց ծերունին»:

Գիտունի շոցիչ խոսքը ոչ միայն չի փարաւում, այլ նորից է բորբոքում Բողդիխանի բացվերքը. վայելում է արդյո՞ք իր անձին ու գուռքին չլուծված հարցեր ունենալու Խեղկատակ է գարձել նրան «իմաստունի» կեցվածքը, և չի կարող ներել նա իրեն ու աշխարքին, որ ինքը կարող է չիմանալ, մինչդեռ պարզելու ու լուծելու որքա՞ն հարցեր կան: Սարկանալով իր մոլուցքին, կրակն է ընկել, այլև ինքը՝ ինքը չէ—Բողդիխանը չկա. կան միայն ահարդկու գոռգոռոցներ ու որութ, խոցված փառասերի նյարդայնություն:

Վերջնական, բացարձակ իմաստությունների տիրելու մորմոքով է խանգարված այս թշվառականը և գարձի չի կարող գալ ոչ մի գնով: Անհուսալի է գրությունը: Ու այս ամենը ծիծաղելի է, որովհետեւ շատ է լուրջ: Շատ է հիմնավոր ու անկեղծ հավատացել նա իր կոչմանը, որպեսզի չարժանանա կանքի ծաղրին:

Իսկ կարող է նա առհասարակ լսել որևէ խորհուրդ.

«—Երկնքի որդի, ամենաբարի ողի, տեր մեր կյանքին ու մահին, սուրբ է քո կամքը և քո տենչը գեպի իմացականությունը՝ նոլիրական, բայց ինքը՝ մեծն Սաքիա-Մոնին՝ Հիմալայը խոկման, ինքը մեծն Լառծեն, ինքը՝ մեծն Կոնֆուցիոն, որոնց բերանով ինքը՝ ժամանակի և տարածության,

հավերժության և անսահմանության աստվածն է բարբառում, — նրանք նույնիսկ անկարող եղան բարձրացնել տիեզերական անհասանելի գաղտնիքների վարագույրի ամենաչնչին ծալքն անգամ...»:

Բայց ոչինչ չի ուզում լսել Բողդիխանը. նըրան չի հասնում ոչ մի ճշմարիտ ձայն, գլխովին կլանված է աշխարհը և սերունդներին անհարց թողնելու մոլուցքով:

Յուրօրինակ է և այս Բողդիխանի վերաբերմունքը իրականի, ունալականի հանդեպ: Պարզսիրտ Դոն-Քիշոտը ոչ մի կերպ չկարողացավ տեսնել իրականը, Նազարին այն ներկայացավ իր Փարսով, իրականին անգետ է մնում և Բողդիխանը: Հենց արդ անդիտության պատճառով էլ նա ենթագրում է, թե հնարավոր է և ինքը կարող է թեկուզ զոռով, ունալականությունը խցկել իր մտքի պատճանի մեջ: Եվ ապարդյուն են անցնում նրան իրականին մոտեցնելու դիտունների բոլոր ճիգերը. «Եթե արքան ստրուկներիս՝ կարողանա գտնել հրեղեն, թևավոր նժուրդին, որը եթե կարողանա լույսից և մտքից ավելի արագ՝ մի հաղարերորդական վայրկանում հասցնել արքավին հեռավոր արեգակին և անցնել այն կողմը և նույն թափով անհամար, անհամար, անհամար վարեր արշավել տիեզերական տարածությունների միջով, այն ժամանակ մի մազ անդամ առաջ գնացած չի լինի»:

արքայի գահութքի մոտից... այդքան ահագին է և անընթանելի տիեզերքը...»:

Սա արգեն երբեք չի կարող նա հանդուրժել, և սեփական անճարակոթյան սարսափը փարատելու համար մեկը մշտակի հետեւից զլխատում է խորհող մարդկանց, բայց նորից է զգում, որ դա էլ քիչ է, և ամբողջ երկրով մեկ հրովարտակ է արձակում՝ արգելում մտածել: Սակայն արդ էլ քիչ է... Դաժան է լինում նրա վախճանը՝ Բողդիխանը տանջաման է լինում սեփական մոլոցքից:

Ժողովուրդները շատ են ծաղրել նման բախտախնդիրներին, ուղարկի կամ այլարանորեն անխընա ձաղկել բանականությունը մեկ զլխի մենաշնորհ համարելու մարմազը: Չափաղանց սրամիտ է այս տեսակիտից «Խեցգետինը և աշխարհի իմաստությունը» նիգերական հեքիաթը: Խեցգետինի խելքին է փչում, որ վատ չէր լինի, եթե ինքը տիրանար աշխարհում եղած-չեղած բոլոր իմաստություններին և լիներ միակ իմաստուն արարածը երկնքի տակ: Այնպիսին, որ նույնիսկ արքան ու նրա խորհրդականները իրեն դիմեն, երբ հարկ զգացվի լուծելու այս կամ այն հարցը: Զէ՞ որ դա շատ ձեռնտու բան է:

Եվ խեցգետինը սկսում է իմաստություն ժողովել: Ինչ հաջողվում է գտնել, նա խցկում է մի գլմաշշի մեջ և ամուր փակում խցանով: Երբ խեցգետնին թվում է, թե ինքը արգեն հավաքել է այն ամենը, ինչ կա, որոշում է շիշը կախել ամենա-

բարձր ծառի կատարին, որտեղ ոչոք չի կարուզանա բարձրանալ: Խեցգետինը շշի վզին թել է կապում, ծալրերը հանդուցում և գցում վիզը, այնպես որ շիշը կախվի փորից: Հետո փորձում է բարձրանալ ծառը և նկատում է, որ անհնար է. շիշը խանգարում է. խեցգետինը փորձում է և ալսպես, և այնպես, ոչինչ չի ստացվում: Հանկարծ նա թիկոնքից ծիծաղ է լսում, շրջում է խեցգետինը և տեսնում որարդին:

Սիրելի՛ս,— տսում է նա,— եթե արքան շատ ես ուզում բարձրանալ ծառը: Լավ կանես շիշը դցես մեջքիդ:

Լսելով մի ալսպիսի բանական խորհուրդ, խեցգետինը վերջապես համկանում է, որ աշխարհում իմաստություններ էլլի կան, մինչդեռ ինքը մտածում էր, թե իմաստությունը ամբողջովին իր շշի մեջ է: Եվ նա այնքան է վիրավորվում, անտեղի կորցրած ժամանակի համար, որ վիրցնում է շիշը և զարկում գետին: Շիշը ջարդվում է, իմաստությունը վեշրվում մանր կտոռների, ցրվում ու տարածվում աշխարհով մեկ...

Սա չէր ուզեցել իմանալ Բողդիխանը, մինչև վերջ էլ խելքի չէր եկել նա ու դարձել էր աշխարհին ծանոթ բողդիխանության հիվանդության լեգենդային խորհրդանիշ: Հետեղական էր Իսահակի այդ ցավի հանդեպ իր վերաբերմունքի մեջ, և բնորոշ է, որ շորջ քսանհինդ տարի հետո նա հարկ է համարում կրկին անդրադառնալ դրան,

ստեղծելով «Ավգուստինոսի տհսիլքը» (1932) չափածո լնդինդը, մի փոքր այլ պլանով, ինարկե, ավելի դրամատիկական շեշտիրով, քան երգիծական, բայց և գաղափարական նույն ելակետով ու միտումներով: Տիեզերքի հրաշքների իմացությանն հետամուռ Ավգուստինոսի և ծովից «պստիկ ավտով» ավազի տաշտակի մեջ ջուր փոխազբարդ մանուկի բանաստեղծական գուգաճնուով մի կողմից ընդդեմում է իմացությամբ ժամանակի ու տարածության հետ չափվելու մարդկային բնական մղման անկեղծությունը, մյուս կողմից դրա անհնարինությունը: Մանկական խաղի ու խոսակցության անմիջական ձևի մեջ խտացվում է դրամատիկական մեծ հնչեղություն ունեցող բովանդակություն, և դա էլ, երկի հինգ այն է, ինչ կոչում ենք խահականական արվեստի խորություն ու սպառություն:

\* \* \*

Կյանքի բնական ամեն մի թրիթիռ իսահականի համար միշտ էլ թանկ է հղել ամեն մի օծանուակշո» բարոյախոսությունից կամ քարոզից: Եթե կարելի է այսպես ասել, զերին աստիճանի կիրթ են հղել իսահական ստեղծագործողի և կյանքի հարաբերությունները: Նա երբեք չի փորձել բռնանալ աշխարհի վրա՝ հարմարեցնել իր նախաստիրություններին, կաղապարել կամ պարսպապահել այն: Տրամադրությունների, դգացմունքների «մի-

նատնաեսից հոգեբանությունը մանր ապրում էր նրա աչքում։ Այս իմաստով միակողմանի են թշվում Իսահակյանի վաստակը մեկ տրամադրության հետ կապելու գրականագիտության մեջ իշխող միտումները, հավասարապես ինչպիս հոռետես, նույնպես և պայծառատես հոչակելու տեհնդենցները։ Եվ սա նրա ստեղծագործական զարդացման բոլոր շրջաններում։ Ինարիի, Իսահակյանը այնպիսի արվեստագիտ է, որ կարող է նման բնիւններում մոլորեցնել մարդկանց, այնքան լայն հնընդգրկումները, որ նրանց ամբողջականությունն անտեսելու դեպքում, ակամալից կարիլի է հանդել ծայրահեղությունների։ Իր աշխարհադրացողությամբ նա հասել է կլանքի, կինսականության անհամապարփակության, նրա ներդաշնակության ու ամբողջականությունը ընդհանուր առմամբ չի խախտվել նրա ստեղծագործության մեջ։

Անհարիր էր գա Իսահակյանի էությանը, անհարիր էր, ասենք, չարի խոսցումը՝ առանց բարու անդուլ պոռթկումների կամ հակառակը. նրա խոճերն ու հույզերը ընդհատում չունեն, արամագրությունների կուտակման պահերը հղի են, լեցուն նոր, շատ հաճախ, կոնտրաստային անցումներով։ Դրա լավագույն նմուշն է «Անանդան և մահը» լեգենդը (1908):

Գնում էր Անանդան ռՀիմալալի սրբազան անտառների լուսթյան մեջ ներտառնձնանալու և հանկարծ նրա ճանապարհը կարում է մահը: Խաչվում են Անանդալի ու մահվան ուղիները և վերցինս կմախքացած ծնոտները շխկշխկացնելով հրամալում է Անանդալին հնթարկվել իր կամքին:

Բնդիարման հանգույցները բացվում են.

«...—Ես անհրաժեշտությունն եմ, անբեկանելի, անխուսափելի, անպարտելի: Պետք է մեռնես, Անանդա»— որոտում է մահը:

«—Ես չեմ հասկանում զրսից եկած անհրաժեշտությունը: Ես էլ եմ անհրաժեշտություն,— ասաց Անանդան սրտապնդվելով: Անհրաժեշտը իմ եռն է, հասկանո՞ւմ ես...»:

Բախումը «անհրաժեշտությունների» միջև աստիճանաբար լարվում է, թեակոխում սպառնալի հռն: Թվում է թե, այլևս ոչ մի ուժով չի կարելի կանխել կամ ողբերգական փլուզումը և կամ էլ հրշանիկ ավարտի շրինդը — մահի հաղթանակը, կամ Անանդալի: Սակայն այս ելքը անսպասելիուրեն շրջվում է, տեղադրվում ու տեղափոխվում զրամատիզմի ակունքը: Կոլիզալի ելքը իսահականը չի լարում, և դրան նա չի էլ սպասում: Դրամատիկականն ալտեղ կանքի և մահվան բախման անընդհականությունն է:

Կյանքի ու մահվան անվերջանալի ու անբեկանելի վերաճումներով է դարգանում, առաջ ընթանում լեզնդը, և այդ վերաճումներն անընդհատ

գրամատիզմ են սկըռում, միջոց չտալով վերջինիս  
թուլանալու կամ անհնատանալու: Բնության մաքա-  
ռումի հարատևությամբ է, առես, այն շարունակ-  
վում ու մղվում առաջ:

Բեկելով կյանքի ու մահվան բախումը Անան-  
դալի հոգում, Խսահակյանը ստեղծում է բազմե-  
րանգ տրամադրությունների ու հոգղերի մի հա-  
րանուն շարժում: Մլուլ է անում Անանդալի միա-  
քը մահվան շուրջը. «Ահա թե ո՞վ է ճմլում մեր  
սիրան այսքա՞ն անողորմ, այսքա՞ն անգութ հա-  
վերժապես — մահն է դա»: «Նա անգութ, անհաղթ  
և բռնակալ անհրաժեշտաթյունն է: Նա տիեզերա-  
կան այն մեծ մորճն է, որի հարվածների տակ  
պիտի փշրվին, փոշիանան բոլոր նրանք, ինչ  
որ ծնունդ և սկիզբ են տաել...»:

«...Ուրեմն պիտի մարի և չքանա տիեզերա-  
կան կյանքը և մտհի անվախճանությունը պիտի  
տիեզերակալի, եթե իրոք մահն է միահեծան տի-  
րանը ժամանակի և տարածության վրա, հետեապես  
նրանից առաջ մահն է իշխել և նրանից հետո  
մահն է իշխելու»:

Հետզհետե ավելի է մռալլվում Անանդալի  
միաքը.

«Մահը — այդ միակ վիշտն է տիեզերական,  
միակ բռնությունը ժամանակի վրա, միակ իշխա-  
նը տարածության վրա, որ անիմաստացնում է  
իրերը բոլոր:

Մահը, մահը...»:

Դնալով խորանում է մահվան սարսափը։  
Մոալության այս աստիճանական թանձրացման  
ընթացքում՝ մահվան շորշովից մինչեւ մեռնելու  
չարագուշակ նախաղդացումը, մահվան անդարձու-  
թյունը կտակածի տակ առնելոց մինչեւ դառնաղին  
պողթկումն ու ընդլուսմը աշխարհի վշտի դեմ, —  
այս ընթացքում անա Անանդալի հոգում բարձրա-  
նում է, ծփում կը անքի ալիքը.

«Կյա՞նք, զո՞ւ ևս վասում արեները երկինքնե-  
րում և սերը մեր սրտերում, սակայն դժինմ մա-  
հը մարտում է արեները և սերերը պայծառ։

Կյա՞նք, զու ևս հյուսում շքեղ, գաղնանալին  
անուրջները, բոլոր երգերը ծաղկաբուլը, սակայն  
դաժան մահը ցնդում է անուրջները և երգերը  
չքնաղ։

Կյա՞նք, զու ևս ձեռում ու կաղապարում գեղե-  
ցիկ իրերը և ներդաշնակում աստղերի պարսը,  
սակայն անիմաստ մահը հյուծում է գաշն ձեռերը  
գնդեցիտթյան և թոհ ու բոհի վերածում աստղերի  
համերգը։

Ավա՞զ, և բյուր ավա՞զ կը անքին...»։

Դնգերում է Անանդալի միտքը կը անքի ու  
մահվան սահմաններում և կրկին վերագաւնում  
նրանց երկասի բախման անվախճանության ոլոր-  
տը։ Մահվան մղձավանջից սարսափած Անանդան,  
սսես, տեղի է տալիս և հանձնվում նրա դաժան  
«թվացամներին», սակայն այստեղ անդամ չի  
ընդհատվում կը անքի հոսքը, որ մեկ նվազում, մեկ

էլ վարարում է, աճագնաճում ու աիրաբար կաճոգնում մահվան դիմաց:

Զլտծվող այս բախման կենսասիրական, հաշմանիստական առումն է հաստատում Իստիականը — դրամատիզմի հավերժականությունը: Ակամալից մտաքրում ես Գլոթեի համճարեղ տաղերը.

Բեեռը հենց որ բեեռին առնի,

Շարժումն էլ այն ժամ իսկույն կմեռնի:

Ալսպես «իրար չեն առնում» և իսահակյանի մոտ բեեռները՝ կլանքն ու մահը. հանդես գալով գրողի ստեղծագործության մեջ, նրանցից և մեկը, և մյուսը երեսում ու անցնում է, ալսպես ասած, մաքառման ոլորապտույտով ու գալարումով: Հենց այստեղ էլ տեղն է ասել, որ այդ բեեռներն էլ ահա թյուրիմացության մեջ են գցում գրականագետներին, որոնք, չնկատելով մաքառումը, իստիականին կապում են կամ այս բեեռի հետ, կամ այն, նայած թե որը անսնելու են ավելի արագագույնած իրենք:

Բեեռների շարժման անընդհատականությունն է, որ «Անսնդայլում» ծավալվող բախտումը հարազատ է դարձրել մեծ աշխարհի չհանդարտվող ալեկոծություններին: Դնում են, անվերջ փոխակերպվում Անսնդայլի արամագրությունները. ինչոր տեղ իսահակյանը նույնիսկ հաշտեցնում ահամակերպում է մահվանը. «Սակայն մի՞թե իրավ վատ է մահը, մի՞թե նա ալդքան տաժանելի է... Մի՞թե ես ափում էի կլանքը, երբ քալլում էի նրա

ուղիով։ Հիշում եմ, որքան եմ նզովել կյանքը. ի՞նչ հեղձամաղձուկ էր աշխարհը և տաղակալի, և արդարի ի՞նչ կար կյանքում։

Եվ իսկն ասած՝ ևս շատ սիրելոց հոգնել էի արգեն, և ո՞վ էր հասկանում սերը։ Ես շատ ատելոց զզվել էի արդեն, և օրեցօր որքան աճում էր տանելությունս, և շատ տանջվելոց քարացել էի, բայց ամեն ոք նորանոր տանջանքներ էր նկաթում ինձ։

Կյանքը նզովելիս Աբու-Լալա Մահարոց հեռուն է գնում Անանդան, խղճի ու ազնվության հետ միասին ծախված համարելով մալրական սերն անգամ և որբի արցոնքները։ Համարյա նույն ժամանակներում ստեղծված լեգենդն ու պոեմը առհասարակ շատ ընդհանրություններ ունեն ոչ միայն գաղափարական տեսակետից, այլև արվեստով, գեղարվեստական շնչով ու պաթոսով։ Հերսոների «կենսագրությամբ» (եթուսն էլ հոգնել ու «զզվել» են կյանքից, և ահա հեռանում են՝ մեկը Հիմալայի անտառների լուսթյան մեջ ներանձնանալու, մշտաբ՝ անապատում), նզովելու և օրհներգելու միենալոյն սիթմիկայով, տրամադրությանների խտացման աստիճանականությամբ, սեփական հոգու հետ խոսք բացելու, վեճի բռնվիլու, սիրոց՝ քարավանին, անապատին կամ այս գեպքում մահվան առջև բացելու հնարանքներով, և այն և այն։ Այս իմաստով, թվում է թե, լեգենդը մի տեսակ նախադուռ է հանդիսացել պոեմի

ստեղծման համար, շատ բանով նախապատրաստել պոեմի գեղարվեստական հյուսվածքի գունագությունն ու կատարելությունը:

Բաղդադի հռչակավոր բանաստեղծի պես հիասթափություններով, դառնությամբ ու ցավով է լի Անանդալի սիրտը, ուրեմն՝ «Թող չէանա կյանքը», «մահը այն բարի շրթունքն է, այն զինջ ու զով աղբյուրը, որ հաղմցնում է կյանքի հուրծարակը, լինելու անխմանու կամքը անէացնում...

**Փրկիչ է մահը»:**

Մեռնել՝ հագեցնելու համար կյանքի հուրծարակը, կյանքի գեմ ըմբսատացած Անանդալի հոգին նույն կյանքով է փալլատակում, և արամագրությունները չխղիելով անդամ իրենց ամենալարված պահին, նորից ու նորից են վերաճում հակառակին: Օրենել էր ուզում Անանդան մահը, հագիտենապես հաշումիլ նրա հետ, սակայն հենց այդ պահին էլ մահվան դեմ է ծառանում նրա բովանդակ էտթյունը, մահվան սարսափին է զզում Անանդան, զարհուրը՝ չտեսնելու, չզգալու.

— «Ո՞չ, ո՞չ, դու փրկիչ չես, ո՞վ դժնատեսիլ մահ, ես քեզ ատում եմ, իմ հոգում կա ամեն տեսակի կամք ու կարոտ, բայց մահի բաղձանքի ստվերն անդամ չկա... իմ մեջ ոչ մի հյուլե և տիեզերքի մեջ ոչ մի հյուլե, ոչ մի հունդ մահ չեն փափագում. մեր ամեն մի քայլը ձգտում է միայն հեռանալ մահից, մենք ամենքս անմահություն ենք տեսնում միայն, տեսնչալով տեսնում»:

Այս տեհնչալով — ահնչալն է ահա իսահակպահական անհանգիստ ուժինը կյանքի ու մահվան հավիտենական մենամարտում:

Կյանքի ու մահվան ընդհարման թեմատիկան գրականության մեջ, մանավանդ լեգենդը ստեղծելու ժամանակներում, ինարկել, նորություն չեր: Ավելին, թերեւ ժամանակի գրական-փիլիսոփական մտայնություններն էլ են ինչ-որ չափով ազգակ հանդիսացել լեգենդը մշակելու համար: Մշակելու, սակայն, և ոչ թե տուրք տալու անկումային մտավորականության միջավայրի միտոխցիկմին ու մահապաշտությանը: Կյանքի ու մահվան բախման առաղձնով ստեղծված նրանց գրվածքներում մահվան ամենակուլ շունչն էր վեր առնում ու հաղթանակում: Գրականության զարգացման այլ շըրջաններում կամ այլ ներկայացուցիչների մոտ հաղթող է գուրս գալիս կյանքը: Իսահակպահնը անավարտ ու անհատնում է թողնում կյանքի և մահվան մենամարտը, նրա գրամատիզմը, ալսահղեա չի հնաւանալով ժողովրդական մտածողության ու հոգեբանության ակունքից:

Բնորոշ է, որ նույն այդ վեճը անընդհատ նորոգվում և չի գաղաբում նաև Շվեյցարիան կյանքի ու մահվան միջև՝ գերմանական շատ ապաժիգած ժողովրդական մի լեգենդում:

Так жизнь сказала:

—Мир этот — мой,  
С весельем, песнями, кутерьмой,

Я—солнце в небе, я—свет дневной.

Так жизнь сказала:

— Мир этот— мой!

Так смерть сказала:

— Мир этот— мой.

Я все окутаю вечной тьмой.

Умолкнут песни в ночи немой,

Так смерть сказала:

— Мир этот— мой!

Так жизнь сказала:

— Мир этот— мой!

Хоть из гранита границы строй,

Не похоронишь любви святой...

Так смерть сказала:

— Мир этот— мой!

Иду с войною я и чумой.

В могилу ляжет весь род людской...

Так жизнь сказала:

— Мир этот— мой!

Распашет кладбища плуг стальной.

Взойдет колосьями перегной.

Так жизнь сказала:

— Мир этот— мой!

*Ժողովրդի ըմբռնմամբ վերջ չունի արև վեճը:*

\* \* \*

Կյանք և զորություն, ամենամեծ զորությունը,  
թող որ Զինգիդ խանի զորությունը, որի կամքով  
«Արարտանի անապատների ծովածածան ա-  
փազը մինչև արել» կարող էր բարձրանալ, «մի

վայրկանում իւալիֆաների թաղդադը Տիգրիսի փրփրաբաշ ալիքների տակ ծածկվելա, «չքնաղակերտ Բյուզանդիոնի ծովը երկինք» հասնել—կլանքի և զորության խոհական-փիլիսոփալական ասպեկտով է դրված Խսահականի «Զինգիդ-խանը» (1907) լեգենդը։ Հստ որում գեղարվեստական առումով Խսահականի համար էականը ոչ թե կլանքի ու հզորության հակադրությունն է, այլ արդանամադրելի մեծությունների համադրումը։

Աշխարհներ էր տիրել Զինգիդ-խանը, պետություններ ծնկի բերել ու ժողովուրդներ, հզորի ու տմինակաբողի համոզմունքով ու կամքով ապրել, և ահա մահվան շեմին բացվում են նրա աչքերը, տեսնում է կլանքի ու աշխարհի ծով պարունակությունները և գառնորեն գիտակցում, որ չնչինից-չնչին հատիկ ու հլուկն է իր ունեցածը արդանաւության մեջ։

Լուկ են արդեն հաղթական շեփորները, մնձ օվկիանոսից մինչև Հնդու բոցավառ ծովը բարձրացել են նահատակների բուրգեր... հաղթանակը լիակատար է ու հաստատուն, և ալժմ ահա Զինգիդը կանգնել է կլանքի դիմաց, դեմ հանդիման իր իշխանությամբ ու փառքով։ Եվ սկսվում է ահա աշխարհակալ հզոր մոնղոլի ողբերգական նահանջը...։

Աշխարհներ նվաճածը հետ-հետ է քաշվում կլանքի առջև, մեն-մենակ, առանց զորքի, զենքի ու զրահի, հանձնված իր ուշացած խոհերի մորմու-

քին: Խարվել է հմուտ աշխարհակալը, էն ճամփով  
չի գնացել, և հիմա, անմիտիթար ցավը սրտում,  
բռնել է դարձի ճամփան, ու շատ ծանր է նրա  
երթը: Ուշ է. ծերացել է Զինդիզը, թալկացել, և  
հենարան ու ապավին է հալցում ահա աշխարհա-  
կալը կլանքից.

«—Է՞ր, վիզիր,— նվազած ձախով դիմում է  
խանը,— ձանձրանում հմ հս, սաստիկ ձանձրա-  
նում... Կանա՛լք բերեք, թո՛ղ սկարեն, երգեն, թո՛ղ  
լոգանք անեն մոտա... Գինի՛ բերեք, էլ, գինի՛ բե-  
րեք. ճարյուր տարվա ճարաբորտք գինի...»

Կրնկի վրա բացվում են եքենոսուա դռները, և  
երգի, ծիծաղի ու բուրմունքի հետ խանի սերալը  
ներս են կարկաչում մատադ եղնիկների բուլլեր—  
չքնաղ, մարմարիբան աղջիկներ...»:

Խաւճախում են իրար իրականն ու անիրակա-  
նը, կյանքն ու երազը Զինդիզի աչքում: Ամբողջ  
նրա ներքնաշխարհն է կենտրոնացել, ասիս, որ-  
պես իղձ ու տեհնչանք, բայց և սեալ ճակատագիր:  
Ծուռ ու մուռ են գալիս նրա հոգում կյանքն ու  
երազը, և երազ է արդեն նրա համար օհուլք-  
հուլք պարո» աղջիկների, շուշանների բուրմունքը  
անուշ, «գիշերների պիս սկաթուզը և արեի պիս  
ոսկի» տեսքը նըանց: Ամենածանր փորձության  
մեջ ընկածի պիս իր բոլոր ուժերն ու ապրումներն  
է հավաքում, լարում Զինդիզ-խանը, և ալստեղ  
միայն հասկանում, թե որքան թշվառ ու աղքատ  
է ինքը աշխարհում: Իսկ առաջ ենթագրել էր, թե

առել է աշխարհը, գերել իր իշխանության ու հզորության պարփապներով։ Մղկում է Զինդիզը գեղի անդառնալիորեն կորցրածը, սակայն գավաճանում են ուժերը։ Այլս չեն ջերմացնում նրան ոչ երգն ու պարը, և ոչ էլ հրաբորոք դինին։ Սարսափով է զգում դա խանը, բայց և չի ուզում համակերպվել իր բախտին, նորից է հարկադրում իրեն ու հրամացում բերել Դյուրջիստանի գատերը, որին գերել էր ինքը։ Նորից են բախվում նրա մարած հոգին ու ավլունը և կյանքն ու գեղեցկությունը։ Դավա է աղջկիը «զեփյուռի պես սահելով», «գարնան պես բուրելով» և նորից սախաված է պարտության գառնությունը ճաշակել աշխարհակալը։ Դավաճանում են ձեռքերը, չեն կարողանում պահել «սարերի վիթին», սրան էլ է կորցնում, շարունակելով իր նահանջը։

Փառքի տեսչանք չէ Զինդիզի տեսչանքը և փառքը չէ, որ խորտակվում է, նրա ելքեննի կուռքերն են խորտակվում, և դրա մեջ է անա նրա ճակատադրի դրամատիզմը ճակատադրական է եղել Զինդիզի սխալը և հիմա է անա վորձում շտկել իր կյանքը. «Իմ ամբողջ թագավորությունը չարժեն երիտասարդ հովվի կրակի մի համբուրբին»— մոլիդնած բացականչում է խանը, որ իսահականական ենթատեքստում հնչում է որպիս ապրելու, վայելելու ժողովրդի մարդկանց առօրենական կյանքի պաշտամունք «սույն այս աշխարհի

հզորներից փառասիրական մարմաշխ, դուրեղության մոլուցքի կողքին:

Ամեն, ամեն բան վոխել է իր տեղը Զինգիզի համար, և նրա լախատարած կալարությունն, ասես, կծկվել, աննշմարելի է դարձել կյանքի մի զարկի, կենսականության մի շնչի համեմատությամբ: Եվ ալժմ արդեն, երբ վերջին ճիգերով ձգտում է ինքը դոնի պատառիկ ունենալ կյանքից, տհաճ մի արձագանքի, հեգնանքի պես են հնչում իր հասցեին ուղղված մեծարանքները. «...մեծ խան, արքաների արև, քո կամքի առջև ամեն ինչ հլու է, մեծ օվկիանոսից մինչև աշխարհը ֆրանկների...»:

Այն չէ արդեն Զինգիզը, և օտարոտի են հընչում տարիներով լսած ու վախլած խոսքերը. պետք չէ իրեն ֆրանկների աշխարհը, իր նժույգին հեծած մարդկային մի հասարակ ցանկություն է ուղղում կատարած լինել ինքը՝ որս անել: Վերջին հույսն է դա. բայց սանձն ընկնում է ձեռքից և պարտվում ու խորտակվում է Զինգիզը:

Հարյուրավոր ճակատամարտերում հաղթանակ տարած խանը տանուլ է տալիս, պարտվում կյանքի ամենասովորական հրապուրանքների առջև՝ գլխակորությ ու մոլորչած: Տանջանքով է հրաժարվում նա ամենակարուղության թլուրատես համոզմունքից, և սթափ հայացքով նկատում, որ ոչինչ են իր նվաճած աշխարհները կյանքի համեմատությամբ Մարդն է արթնանում Զինգիզի մեջ, արթնանում է, սակայն ողբերգորհն ուշ:

Իսահակյանը Զինդիզի գատն անում է իրեն  
իսկ Զինդիզի ձեռքով. հանդիպեցնում միմյանց  
երկու Զինդիզի՝ աշխարհին տիրանալու համար  
և ուանդը գատնած բռնակալին և անհատակ կյան-  
քում փոքրիկ հենակետերի տիրանալու կորովը  
կորցրած մարդուն, հանդիպեցնում է գեղարվես-  
տական ինքնատիպ հնարանքով, հավաստելով, ա-  
սես, թե մեկնելով իր մեծ գրչակցի հորդորը.

Հե՞յ ազահ մարդ, հե՞յ անգոհ մարդ,  
միտքըդ երկար, կյանքըդ կարճ,  
Քանի՛ քանիսն անցան քեզ պես, քեզանից  
առաջ, քո առաջ.  
Ի՞նչ են տարել նրանք, կյանքից, թե ի՞նչ  
տանես դու քեզ հետ,  
Խաղաղ անցիր, ուրախ անցիր, երկու օրվան  
էս ճամփեր:

«Խաղաղ», «ուրախ» և արդար չէր անցել իր  
ճամփեն Զինդիզի խանը, դրա համար էլ պատժում  
է նրան իսահակյանը, «թույլ չտալով» որպեսզի  
նա հասցնի կյանքից հեռանալ որպես աշխարհա-  
կալ. սովորական մահկանացուի մորմոքով է նա  
հեռանում կյանքից».

Կյանքի ու մահկան խոհական ասպեկտ՝ պատ-  
ժելու նպատակով, հազվագեակ է իսահակյանը դի-  
մում դրան, և այդ պատճառով էլ պատահական  
չին օրենքակաները՝ Զինդիզի խանն ու Բողդիխանը:  
Ավելի հաճախ այդ ասպեկտով կյանքի անհուն-  
տենչանք է մարմնավորվում, իմաստավորվում  
մարդկային ողու ուժ և գեղեցկութիւն բանա-

ստեղծի պատմվածքներից շատերում, արձակ պոեմներում, բալադներում ու լիդենդներում՝ չափածո և արձակ: Չինգիլոյսանի հակապատկերն է, օրինակ, արգար ապրած Սոկրատեսը, չափածո համանուն լիդենդում, որ մահվան դատապարտված, շղթաների մեջ ուզում է իմանալ երաժշտության գաղտնիքը: Իմաստուն էր Սոկրատեսը, և ոկղորից էլ իմացել էր, թե ինչի համար ու ինչով պետք է ապրել աշխարհում և մահվան շեմին ահա՝

Երբ մեկնում էր երաժիշտը երկյուղած  
Գաղտնիքները, խորհուրդները արվեստի, —  
Իմաստության անմահ լուսով ճաճանչված՝  
Հրճըլում էր անհաղթ ոգին Սոկրատի:

\* \* \*

Հոգու լախությունն էլ աստվածային շնորհ է, պետք է կարենալ Խալամի նման գինու թասը առջել՝ գետնին զնել ու մլուլ անել, խորհել աշխարհի բանը («Օմար Խալամի վեճը աստծու հետ», 1909): Հանգարտ, ասես, վերացած վայելում է նա, չծանրացնելով իրեն ու շուրջը մանր հոգսերի բեռով: Ոչնչի հետ չի փոխի իր արդ պահը Խալամը, ամենից թանկը իր այդ տրամադրությունն է, բայց աստված հարկ է համարում փչացնել նրա այդ պահը, թափում է նրա գինին: Աստված էր զգում իրեն Խալամն այդ պահին, և իրավունք ուներ նկատելու, որ աստված ինքն

էլ թուլությունները ունի, ալլապես չէր թափի իր  
գինին, և խոցված կշտամբում է աստծուն.

Իմ գտոքինու զավաթն հողե  
Դու կոտրեցիր, աստված իմ.  
Ուրախության դուռն իմ առաջ  
Դու գոցեցիր, աստված իմ:

Այսպիսի մի հարաբերությամբ է առնչում  
իսահականը Խալամինը ու աստծուն, մեկնելով  
վայելքների սերահար և «վարդերի տիսուր երգիչ»  
Օմար Խալամի կլանքի լեզենդը: Մեկնում է բա-  
նաստեղծի կոչման իր համոզմունքին հավատա-  
րիմ, ըստ որի «կյանքի հեքիաթը» «բանաստեղծ-  
ներն են հառկացել դուզզն ինչ և թոթովում են  
հնչուններն անմահ»:

Անմահ հնչյուններ էր թոթովում Խալամը՝  
վայելելու ուրախությունն ու նրա խափանման  
մորմոքը, և այդ կշտամբանքի համար աստված  
պատժում է նրան, զրկելով երգելու հնարավորու-  
թյունից: Զարմանքն է պաշարում բանաստեղծին.  
մի՞թե աստված էլ է հնթակա մանր կրքերի. մի՞թե  
նա էլ է մահկանացուների նման արթուն հսկում իր  
իփառքը: Եվ զղման ու ապաշխարանքի նոր երդ  
է հլուսում Խալամը.

Աշխարհիս մեջ մեղք չը գործած,  
Ո՞վ կա, ասա, աստված իմ,  
Եվ նա, որը չի մեղանչում,  
Ի՞նչով կապը, աստված իմ:

Թե վատ անեմ, թե վատ խոսեմ,  
Դու էլ ինձ վատ պատիժ տառ,  
Ուրեմն ի՞նչ է իմ և քո մեջ  
Տարբերությունն, աստված իմ...

Վեհանում է Խայամը՝ «ամենաներող» աստծո  
չափ, իսկ աստված՝ «մահկանացուի պիս նեղսրտում»:  
Մարդկալինի ու ասավածալինի պատճեշներն է  
քանդում իսահականը, հաստատում՝ մարդկալին  
հոգու շարժման անսահմանությունը՝ դինի վայե-  
լելու հաճուքից մինչեւ աստծո հետ չափելու,  
աստծու հետ վիճելու սահմանը: Իմաստավորում  
է իսահականը՝ «Մարդախայամի» «ապաշխարության»  
լիգենդը, և, կարծես նորից խոսքը՝ մեկ արած  
թումանյանի հետ, որ բացատրելով՝ նարեկացու  
ապաշխարությունը, հանդիսավոր հպարտությամբ  
հավաստում էր, թե նարեկացին՝ «ապաշխարողի  
կերպարանքով», իր դլուխը՝ բարձրացրել է մինչեւ  
երկինք՝ ուղրուցից արել աստծո իրեն՝ հետ երես  
առ երեսը<sup>17</sup>:

\* \* \*

Նույնամման՝ տրամադրությամբ է դլոված և  
իսահականի՝ «Մարդի Հիլելը» (1922): Մարդկալին  
հանդուրժող ոգու, մարդուն անշահախնդիր օգնա-  
կան և սատար լինելու ելակետով, որի ակունք-

<sup>17</sup> «Թումանյանը քննադատ», Հայպետհրատ, 1930,  
էջ 336:

ները նա պեղում և հաստատում է մարդկության գործիքան հնագույն ժամանակներից, այստեղից, որտեղից մարդը սկսել է գիտակցել իրեն որպես զգացող ու խորհող արարած: Իսահակյանը իմաստավորում է մարդկության գործության հետ հարատևող այդ հայացքը ընդդեմ բուրժուական ռմարդը մարդուն գալլ է սկզբունքի, հակադրում է մեծահոգի մի ժպիտով, համոզված, որ գործության կովի բնագդները կողոպտելով ու մանրացնելով հանդերձ մարդուն, չեն կարող բթացնել նրան ևսապաշտական կուրությամբ, չեն կարող իւլել մարդկալինը: Հենց միայն այն պատճառով թեկուզ, որ ոչ մի ժողովուրդ չեսապաշտության լեզենդ ու զրուց չի ստեղծել իր օրում, մինչդեռ մարդը մարդուն սատար սկզբունքով ստեղծվել ու ստեղծվում են բոլոր ժամանակներում և ամենուր...

Մարդակերության դեմ ակամա գոտեմարտի մեջ է Հեմինգուենի ծերունին, որի հայացքը ծովի անհղության հետ է, բայց հարկադրված է մաքառել շնաձկների դեմ: Մարդունական մարդը մղվում է աշխարհի չափ աշխարհ ունենալ, բայց նրան հարկադրում են մանրախնդիր լինել Եվ մեկը, և մյուսը լրենց ստեղծագործություններում ներկայացնում են, թե ինչպիս բուրժուական աշխարհը հետդիետ փոքրացնում է մարդ կոչված արարածի շրջանակները, պակսեցնում օդը, որպեսզի մարդը ստիպված լինի հափշտակել այն դիմացի-

նից: Իսկ մարդը՝ հասարակ մարդը, չի համաձայնում գրան, և հանապազօրյա մաքասման մեջ է մարդակերության գիմ՝ հանուն մարդկայնության: Բուրժուատկան գալլացին օրենքներին ծանոթ իսահակյանը մարդու մեծ հորիզոններն էր վերահասատառմ «Ռաբրի Հիլլելով», ճղուամ հետո պահել նրան արդ հեղձուձիչ մթնոլորտին ընտելանալուց: Իսահակյանը տեսնում էր իրար հոշտակու հոգիբանությանը, բայց մարդու կոչմանը ռավելի վայել էր համարաւմ մարդուն ոչ միայն «հանուրժելու», այլև ընդառաջելու հոգիբանությունը: Հենց արդակս էլ նա ներկայացնում է Հիլլելին\* որպիս մարդկանց ընդառաջելու համբերությամբ զինված սովանդական մունեալի, համբերությամբ, սակայն, որ դերծ է քրիստոնեական հնագանդությունից:

Դոգմաների քարոզիչ չէ Իսահակյանի Հիլլելը. նա հենց զոգմալին է գեմ, խղճի ու լանտկանության հսկատակությանը զոգմալին: Հիլլելը իր դավանանքի ստրուկներ չի որոնում, այլ հաստատում է խորհելու, զգալու մարդկացին լայն աշխարհ, որոնդ հասկանալ կա, ներնել ու զիշել,

\* Մինչքրիստոնեական շրջանի հրեական ավանդական գլուխուն, ծննդով բարելոնից, որի բարոյական բարձր նկարագրի և համեստ վարք ու բարքի վերաբերյալ պահպանվել են մի շաբթ ավանդություններ:

համբեկություն կա ու հանդուրժողականություն։  
Հիլլելի այս հայացքով մեծ ու բարի է գառնում  
աշխարհը։ Բարի կոչվածը զբականության մեջ իր  
այս կողմով ևս շատ է խտացվել ու սիմվոլիկ ձևով  
արտահայտել կյանքը։

Առհասարակ սիմվոլիկայով է հատկանշվում  
իսահակյանական «Խարբի Հիլլելը», և պարմանաւ-  
կան է այնտեղ համարյա ամեն ինչ։ Պարմանաւ-  
կանի մոտավորապես այն իմաստով ու գեղար-  
վեստական դիրով, ինչ այնքան հաճախ հանդի-  
պում ենք հատկապես Սարոյանի ստեղծագործու-  
թյուններում, հանրահայտ «Մարդկային կատա-  
կերգության» մեջ, ասենք, կամ «Իմ սիրոը լեռ-  
ներում է» պիեսում, «մարդկայնության փորձարկ-  
ման ավանդատիպ ճիշտ նույն միջոցներով ու հը-  
նարանքներով։ Պարմանական է, որ Հիլլելի համբե-  
րությունը փորձելու համար մարդիկ միշտ գրապ  
են գալիս իրար հետ, պարմանական է և այն, որ  
միշտ նրանցից մեկը հանձն է առնում զայրացնել  
Հիլլելին։

«...Հիլլելը իր բնակարանում պատրաստվում  
էր լոգանք առնելու, երբ եկավ գրավ բռնող մար-  
դուկ ձայնեց։

— Տա՞նն է ռաբբին, տա՞նն է Հիլլել ռաբբին։

Հագնվեց ռաբբին և զուրս ելավ փողոց։

— Ի՞նչ կհաճիս, որդիս, — հարցրեց Հիլլելը։

— Ուզում եմ մի հարց տալ քեզ։

— Ասա՛, որդիս, ասա՛։

— Ինչո՞ւ բարելոնցիների գլուխները այնպիս աձեւ են:

— Կարեսը հարց տվիր, որդիս — պատասխանեց Հիլլելը, — ալդ նրանից է, որ նրանք բանից մաց գալակիներ չունեն:

Մարդը գնաց, մի պահ անցած նորից եկավ և նորից ձախնեց: Մարբին դարձյալ հագնվից և գուրս ելավ փողոց:

— Ուզում եմ մի հարց ևս տալ քեզ:

— Ասա՛, որդիս, ասա՛, — պատասխանեց ուարդին:

— Ինչո՞ւ թարմուղցիների աչքերը հիվանդ են:

— Կարեսը հարց տվիր, որդիս, երկի այն պատճառով է, որ ավագուտ երկրներումն են ապրում նրանք:

Մարդը գնաց և մի պահ անցած նորից եկավ և ձախնեց ուարբիին:

Հիլլելը դարձյալ հագնվից և գուրս եկավ փողոց:

— Ինչո՞ւ ապրակցիների ներբանները տափակ են լինում:

— Ալդ ևս կարեսը հարց է, որդիս, — պատասխանեց նախկին հանդարտությամբ ուարբին, — սա նրանից է, որ նրանք ճախճախուտ վայրերումն են ապրում...

— Ես դեռ շատ հարցեր ունիմ, բայց վախենում եմ քեզ գալրացնեմ:

Հիլլելը ամուր կոճկվեց և համգիստ նստեց ասելով:

— Հարցը՛ւ, որդիս, հարցը՛ւ, ինչ որ ուզում են...

...Հիմկին ոչ ոք կարող է գալքացնել»:

Կարեռը, ինարին, հարցերը չեն ու պատասխանները, պայմանական բան է դա իսահականի համար. կարեռը երևությն է, այն, որ մարդու հանգեղ սերը, նրան ընդառաջելու համբերությունը կարող է արդքան անհուն լինել, սեփական անդորրության համեմատությամբ:

\* \* \*

Պատմում է իսահակյանը, որ հեռավագ Զինաստանում շատ ժամանակներ առաջ մի կալսր է ապրել. բարի նպատակ է ունեցել այդ կալսր՝ թիթեացնել իր հապատակների վիճակը («Զինական մի հին զրուց», 1935): Եվ հրովարտակ է արձակել նա կիղիչ արեից պաշտպանվելու համար սեղմարկները փոխարինել սպիտակով: Աւշագրություն հրավիրելով պատմական որոշ երողությունների վրա, իսահակյանը զուսպ ժպիտով պատմում է, թե ինչ պատովներ կարող է առ բանությամբ իրագործվող բարեգործությունը:

— Վարդվանից կատարված է ձեր աստվածային կամքը, ։ Հայաստիացնում է մեծ նախարարը, և հաջորդ օրն իսկ, ի լուր մայրաքաղաքի բնակչության, ընթերցվում է կալսերական հրովարտակը, հրամանադրեր են առաքվում երկրի չորս կողմերի նահանգապետներին: Զեն հապաղում և նահան-

գապեաները, սրանք էլ իրենց հերթին հրամայում  
են գավառապեաներին ու քաղաքապեաներին, և  
կամաց-կամաց սկսում է բուն զնել ֆարսը։ Հրա-  
մանը գլուղապեաներին ու թաղապեաներին է  
համում արդեն բավականաչափ շերտավորված՝  
դիմագրողներին տուգանելու, կամ պատժնելու ան-  
հրաժեշտ սպառնալիքներով։ Սրան էլ մի բան  
թաղապեաներն ու գլուղապեաներն են հաջելում,  
և սկսվում է իրազործվել կայսերական հրովար-  
տակը։ Անխոսսափելի ընթացքով զործն ավարա-  
վում է ոստիկանական սամհարձակություններով,  
ծեծում են մարդկանց, ծանր տուգանքների են-  
թարկում, թբառված գլուխների ու անտեր գլխարի-  
ների վակլսանալիք սարքում, տագնապ տարա-  
ծում ու սարսափի...»

Ամեն ինչ խեղաթյուրվում է ոչ թե հանկար-  
ծակի, այլ հեռանկարի մեջ, աստիճանաբար, և  
դրա մեջ է ողջ զավեշտն ու ողբերգությունը։



## ԼԻԼԻԹ

Անհեքիաթ էր թվացել աշխարհը ռաստծու առաջին դավակին»՝ Աղամին: Աղամի իրեն ծնված էր զգացել անվերապահորմն տիրելու և սքանչան ալու աշխարհի բոլոր հրաշագեղություններով: Բնության պարզեած ներշնչում էր դա — առաջին մարդու գեղեցիկ մոլորություն: Եվ ահա, երբ սկսվել էր նրա համար հրաւիկի կլանքի հեքիաթը անհամապարփակ իր գալթակդությաններով, հեղության խարսանիկ խաղելով, առեղջվածներով ու հալտնություններով, — հեքիաթը ակնթարթավին վաղանցուկ պահ էր թվացել, աշխարհին անվերջանալորեն տիրելու նրա պատկերացումը՝ հավիտենական ու բացարձակ:

Անմեղ միամտությամբ նետվել էր Աղամը դունելու համար հեքիաթի վերջը, մինչդեռ հե-

քեաթն իր հավերժական ընթացքով տարել էր  
նրան ու տարել: Դեռ չգիտեր Աղամը, որ՝

...ամեն մի նոր ծնվածի համար նորից է  
պատմվում հեքիաթն այս շքեղ,  
Նորից սկսվում և վերջանում է ամեն մի  
յարդու կյանքի հետ մեկտեղ:

Հեքիաթ-աշխարհի անդուլ շուրջպարի մեջ է  
ընկնում Աղամը և պատվիում նրա հետ մեկտեղ,  
մեկ բանում նրա չափն ու հանգը, մեկ կորցնում,  
բերկրանքից փայլատակում կամ մռայլվում: Սկիզբ  
է առնում իր հրազանքներին հասնելու մարդկու-  
թյան մեծ ոլացքը՝ առնելով իր մեջ նրա բոլոր  
սերունդներին, աղամորթիներից ամենին:

Համաշխարհավն գրականության մեջ բաղ-  
միցամշակված Աղամի—Լիլիթի—Եվայի ավանդու-  
թիւնը հսանականի գրչի տակ ատաղձ է գառնում  
կյանքի սիրո, ու ձգտման բանաստեղծական իմաս-  
տավորման համար, որ նրա լիգենդում հնչում է  
որպես մարդուն զարդարող մեծ սկիզբ, տարերք  
ու էություն:

«Լիլիթի» բանաստեղծական լույսակու-  
թիւնը ձգտումն է, որ պայմանավորել է և խստ-  
հականական գեղարվեստական հայտնագործումը,  
բովանդակության մարմնավորման ձևը: Լիգենդն  
իր գեղարվեստական հյուսվածքով ընկալվում է  
որպես սիրո, կարտի ու չբավարարվող ձգտման,  
տևես, անվերջանելի մի շուրջպար, որտեղ իշխող  
շարժումն է, ոլացքը՝ իր «խոսուն» մթնութառով,

չափով ու ոիթմով։ Շարժումն ու սլացքը «խոսուն» է դարձրել խսահակլանը, բանաստեղծական խոսքը ծառալիցրել պլաստիկ արտահայտչականությանը և գրանովարտահայտել իր հերոսների ապրումներն ու հուզերը, հոգեկան աշխարհի անցումներն ու երանդները։

\* \* \*

Եղեմ էր պարգևել աստված Աղամին, իսկ Եղեմն Աղամին ձանձրացրել էր, և աստված գըտել էր ելքը, սեր էր շնորհել նրան։ Լիլիթի կերպարանքով հրեղեն սեր, ու Լիլիթի մի հայացքից Եղեմը՝ շնչավորվել էր։ Շիլիթ ուշի-ուշով նայեց Աղամին, և կազի հոտ զգաց իր հոտոտելիքը։ Եվ զգաց, որ Աղամի հայացքը հողի ծանրությամբ իջավ իր մազերի և ուսերի վրաս...։

Աղամ նայեց Լիլիթին, և գեղեցկության մի անհուն ծավալվեց ու խորացավ իր առջև, որ դյութում էր ու քաշում իր հոգին գեպի ահավոր անդունդը՝ ոչնչացնելու համարա։ Նալում են միմյանց հողածինն ու հուրը, Աղամը պատրաստ նետվելու շլացուցիչ ալիք գեղեցկության աշխավոր անդունդը, Լիլիթը՝ խուսափելու, փախստալու։

Այս «մանրուքից» էլ ահա սկիզբ է առնում խսահականական գեղարվեստական, խոհական ընդհանրացումը, որ այնունեու ծավալվելով՝ ծավալվում, իր միջ է առնում մարդկագին ձգտման տարերքը։

Միայն մի ակնթարթ է տեսում ռուժերի  
ստուգմանց Սդամի ու Լիլիթի վորսագարձ զննու-  
մը: Եվ ահա Լիլիթը սահում է, հեռանում. հավըշ-  
տակված Սդամը մղվում է կրկին բռնելու նրա  
ձեռքը: Սակայն Լիլիթը չկա արգեն, նրա ուշքը  
«ոսկեվառ ճակի» ափին նազող կարապների հետ  
է. ձախում է կարապներին, նազում, կարապնե-  
րով շրջապատված: Այս արբեցման մեջ էլ Լիլիթը  
շրմերի վրա իր ցոլքն է որսում, տեսնում «մի  
հրաշալի, մի հրաբորդոչ պատկեր»: Ի՞նքն է դա,  
Լիլիթը. թաքուն հրճվանքն ալիքավորվում է ինք-  
նահիացման պութկումներով: Իր ամբողջ փառքն  
է ուզում վալելել նա, ավելի է սևեռում հայացքը,  
և զարմանքն է պատում նրան, բնության մեջ է  
Լիլիթը ճանաչում իրեն, բնությունն, ասես, իրեն  
տիսնելու համար է սահեղձել Լիլիթին:

Սա է Լիլիթի խսահականական մեկնակեան  
ու գաղտնիքը՝ բնությունն ու կյանքն է մարմնա-  
վորում Լիլիթը: Խսահականի գրչի տակ հրաշա-  
գեղ աշխարհը Լիլիթ է դառնում, ինչպես հալի-  
նիքը չարենցյան մտահղացումով՝ Հայաստան յար:

Աշխարհի անհամար հրաշագեղությունները  
խորացնում է բանաստեղծը: Հպարտության ցոլ-  
քեր են անցնում Լիլիթի գեմքեց, նա նորից ու  
նորից է նայում իր պատկերին և իր հրապուլո-  
ների շռալությունից գոհ նազանքով կարգի բե-  
րում իրեն. վերացած, սևիական հմայքների քմայ-  
քով օրորվում ու շորորվում է Լիլիթը, և դա վե-

հացած բնությունն է վիթում «գրախտն ու լիճը լցված» Լիլիթի «գեմքի լուսով»: Պարծենում է Լիլիթը, որ «արևը այնքան հրեղեն չէ, ինչքան իր աչքերի կրակը, երկինքը այնքան խորունկ չէ, ինչքան իր աչքերի հունը»: Խաճակլանական բանաստեղծական զուգավորումներով Լիլիթն ու դըրախաը լրացնում են միմյանց և հորդում կատարելության անցումների իրենց անհուն հարստությամբ ու հնարավլորություններով:

Երկար ու ծանր տառապանքով պետք է Աղամը կռաճեր, որ աշխարհի, բնության անմահության զլութեանքը, խորհուրդն ու երազանքն էր շունչ առել Լիլիթի մեջ և ծառացել իր առջև.

— Լիլիթ, Լիլիթ, գու իմ ճակատագիր:

Առանց քեզ ի՞նչ է անմահությունը:

Դու հեշտանքի զրախտն ես, Լիլիթ,

Հրաշքների և հմայքների միակ զրախտն ես զու:

Երազն ես զու, հիացքն ու գյութանքը, Լիլիթ,

Դու շճաշակված գաղտնիքն ես, Լիլիթ,

Արեաղբյուրն ես զու, Լիլիթ,

Բոլոր տանջող ու ապրեցնող հրապույբների արե—

ազբյուը:

Անհաղթելի կենն ես զու, Լիլիթ,

Լիլիթ, հավիտենակա՞ն Լիլիթ:

Մեծ փորձությունների առաջ է կանգնեցրել ճակատագիրը Աղամին, որ, կարծես, նախագում է ու մի կողմ քաշված, շվարած հետեւմ Լիլիթի խաղերին. իսկ նա անհոգ ու անսանձ զվարճանում էր, զմալլված իր հրապուլըների վորդիողում.

ներով: Մեկ էլ հանկարծ սիրո է առնում Աղամը, փորձում մոտենալ Լիլիթին. բայց ի՞նչ տարօրինակ բան. ընթանում է ինքը գեալի պարզորոշ երևացող սիրելի էտակը, և մեկ էլ շփոթության մեջ ընկնում, մոլորդում նրա պատկերի ցնորային կրկնակից: Երկատվում է աշխարհը Աղամի աչքում. փորձում է բռնել կենդանի, տեսանելի Լիլիթին, այն ինչ վիճակվում է նրան միայն Լիլիթի պատրանքը: Բայց սա էլ չի հանդուրժում Լիլիթը. «Լիլիթ, երբ տեսավ, որ Աղամի ցոլքը խառնվեց իր պատկերին, զայրացած ոտքի ելավ և աչքերի ցանկոտ հուրը վառեց նրա վրա»: Դայթակղում է Լիլիթը Աղամին, մշտապես բորբոք պահելով երկրպագության հուրը, և ապա հեռանում ու կորչում, իսկ դա շատ է տանջալից Աղամի համար: Աղամն ուզում է իրենց հակադրել Լիլիթին, իր երազանքներով վարակել զգացածով ու պաշտածով գերել, գրանով սկիզբ ու վերջ գնել ամենին: Մարդկային մի համականալի համառությամբ ձգտում է սրբագրծել իր պատկերացումներն ու դրանց մեջ պարփակել Լիլիթին: «—Լիլիթ, հրեշտակներից չքննաղս, թոթովեց Աղամ, — ալդ ի՞նչ ծաղիկներ էին, որ դու քաղեցիր...»:

Պատահում է անսպասելին: Լիլիթը Աղամի համազումների հողն է խլում, խոցում իր պատասխանով: Աղամի խմացածը ոչ սկիզբն է և ոչ էլ վերջը. «—Մրա՞նք, — հրաշալիքներ են սրանք, դու չես համականում, — Աղամի խոսքը արհամարհանքով կտրեց Լիլիթ»:

Աղամի անստվեր երջանկությունն է եղել, որ դրախտն իրեն տրված է լիտպես, մինչև վերջ, և չի կարող լինել իրեն անհայտ կամ անծանոթ որևէ խորհուրդ: Աղամի երանությունը դառնում է մոլորություն: Լիլիթն անգիտուի ի չիք է դարձնում նրա բոլոր պատկերացումները. իսկ Աղամը նորից է ճիպեր գործադրում աներեր պահելու իր գիտցածն ու զգացածը. «—Ո՞չ հոգիս, — ասում է նա, — ևս գիտեմ եղեմում այնպիսի վայրեր, ուր ստեղծողն անգամ տակալին ոտք չի դրել: Այնպիսի աննման ծաղիկներ անպատմելի բուլրերով ու գույներով, այնպիսի լուսատերն ծառեր՝ ամենահամեղ պտուղներով զարդարուն»:

Աղամը դեռևս Լիլիթի կաշկանդումներից ազատագրվելու հույսեր է փայտալում, մղվում իր հայրացքի տակ, իր ընկալումների շրջագծի մեջ հավաքել ու ամփոփել Լիլիթի պատկերը, աշխարհի եղբերն իրար բերել ու հանգուցել, մինչդեռ հղբերն անընդհատ շաղվում են, մոտենում ու հեռանում: Հակառակ Աղամի սպասածի կանքը, աշխարհը գուրս է դալիս նրա պատկերացումների շրջանակներից: Շատ ծանր է շտկվում Աղամի համար աշխարհի բանը: Զեռքերը պարզած նա ընդառաջ է գնում բնությանը, Լիլիթին որսալու, հափշտակելու փափագով, հասավ ահա, ուր որ է կրոնի, կպահի արդին, սակայն նորից է վրիպում, և կատաղի կրօպվ կրկին նետդում Լիլիթի սլացման հետքերով:

Հավիտենական սլացքի մեջ է գցել Լիլիթը,  
Լիլիթի սերը Աղամին, և ամենուրեք նա Լիլիթի  
բուլըն է առնում, բոլոր կողմերից նրա կանչը  
լուսմ, անհամբեր նետվում գեղի այդ կանչը, բայց  
կանչը մեկ էլ թինդ է առնում մի ուրիշ տեղից,  
քաշում այս կողմից, այն կողմից, անվերջ Կա-  
խարդական շրջանակի մեջ ընկած պտուլու է գա-  
լիս Աղամը:

Հայացքն ամեն կողմ լարած Աղամն ընթա-  
նում է գեղի Լիլիթը ու չի ճանառում. պուրակ-  
ներում է թափառում, թփերի ու մացանիրի  
ճետեռում որոնում, որոնում է ու չի գտնում: Մո-  
լորվել է Աղամը ու չգիտե, թե «որն է ճամփին»  
Լիլիթի: Կյանքի ու աշխարհի անթիվ ու անհամար  
արահետներ ու շավիղներ են նրա առջե և իր  
միտքն ու ուշքը դրանց ամենի հետ: Լիլիթ գոչե-  
լով Աղամը բոլոր ճամփինքն է շտապում ակոսել,  
բոլոր տեղերում Լիլիթին փնտրել և վերջ չկա նրա  
և շտապելուն, և սպասումին: Ամենուրեք միայն  
Լիլիթի անհոգի ու անզիջում սառը խոսքն է լը-  
սում. «—սպասի՛ր, գեռ մի եկ մոտս, կդաս հե-  
տո...»: Թե երբ է լինելու այդ երջանիկ պահը,  
Աղամը չգիտե... իսկ Լիլիթին դա ամենեւին չի էլ  
մտահոգում, իր զվարժ խաղին հետամուտ—թաք  
է կենում նա, թռչկոտում, կատակում, հեղնում:  
Կզգա՞ր Աղամը, որ անկարող է ոտք ձգել Լիլիթի  
խաղի հետ:

Նրա խոհերը գեռես աշխարհի անհունին տիրելու հետ են, իսկ կյանքը կամաց-կամաց սկսում է հեքիաթանալ նրա աչքում։ Այդ հակասությունից գուրս գալու տանջալից ուղիով է առաջ տանում իսահականը Ադամին, տանում է ու չի շտապում։

Մտելումորեն իր մարգկալին սիրտն է ուզում բացել Ադամը Լիլիթի առջև, ասել, որ հոգնել է փնտրելուց։

«—Ո՞ւր էիր երեկ ամբողջ օրը։ Այնքան որոնեցի, այնքան որոնեցի...»։

Ադամը նախապատրաստված չէ, որ կարող է ալդպես հեշտությամբ «թարսվել» ամեն բան։

«—Երեկ՝ երեկ ես եկա լիճը. քեզ չտիսա. դու չեկար, — պատասխանեց Լիլիթ։»

Հավատա՞մ, ուրախանա՞մ Ադամը, թե ինչոր անբացարելի երազ է դա։ Տարակուսանքի մեջ է Ադամը։

«—Բայց զարմանալի է։ Դու ե՞րբ եկար լիճը. մի ոտքս ալսեհղ էր, մլուսը՝ այստեղ։ Եվ վերշապես դրախտում այնքան թափառեցի։ Ո՞ւր էիր, որ քեզ չգտա...»։

Հրճվում է Լիլիթը, որ ինքը Ադամի մոտն է եղել, կողքին ու շուրջը և մնացել աննկատ։ Առեղծված է, ի՞նչ է. ինչու իր հայացքը ալդքան հեռուներում է եղել, եթե Լիլիթը ալդքան մոտ էր, կողքին։ Եվ ինչպես հասկանար Ադամը, որ հենց ալդպես է կյանքը։ Անհուն իր կարութ հագեցնելու

կիրքն է պոռթկում Աղամի մեջ։ Ուզում է խլացնել իր հոգին սողոսկած թուլության շշունչը, զորեղ, ամենակարող զգալ իրեն, վերցնելու աշխարհից փափագածը։ Իրեն նորից հավատալ տալով դրան, թեթևացած շունչ է քաշում, ձգվում։

«Հիմա պիտի գնանք, չե՞ հոգիս»— հարցնում է Աղամը և շտապով իրենից հեռացնում հակառակ պատասխանի երկյուղը։ Լիլիթը չի ուշացնում չափավորելու Աղամին, մի պահ ճառագած ոգեսրությունից հանում ու նորից է մատնում անորոշության։ — «Կերթանք, դեռ ժամանակ կա, — ասաց Լիլիթ։

Շատ է, շատ երկարաձգվում ու հետաձգվում այդ «ժամանակը», վերջապես, իրբ պետք է գա երանելի այդ ժամանակը։ Անորոշությունը մաշում է նրա սիրտը, բայց և չի մարում հույսը, և ծայր չունի սպասումը։ Երջանկության աշտարակներ կառուցելու Աղամի ճիգերը ապարտիուն են անցնում։ շատ հեշտությամբ է Լիլիթը քամուն տալիս իրենով լինալու Աղամի ոգեսրությունը, և կրկին նորանոր մղումներ բորբոքում։ Ծարավը ավելին է Աղամի մարդկացին կարողություններից։ «Այս, ինչպես կուզենալի հաղար ականջ ունենալի, — ասում է նա, — որ քաղցր ձախիկի հաղար անգամ լսեի և նորից չհագենալի»։

Վերջ, հատնում չունի Աղամի կյանքի կարութը։ Աշխարհից հագենալուն այնքան ահնչացող Աղամը բացականչում է։ «հաղար անգամ լսեի ու

Նորից չհագենալից: Ինչպես կնախանձեր Ադամը  
թեկուղ և կյանքի գնով նվաճած Յառաստի երջան-  
կության ակնթարթին: Անափ է նրան պաշարած  
կարուուր:

Անվերջ շտապում է նա, ասես, փախչում  
ինչոր բանով պակասավոր իր ճակատագրից: Տա-  
ռապում է, որ չի կարող հասկանալ, որոշել կյան-  
քը ճաշակելու ու վայելելու իր չափը: Եվ ով է  
սահմանել, և ո՞րն է իր «չափը» աշխարհում:  
Հանդուրժել չի ուզում ինքը ոչ մի չափ. Լիլիթը  
խախտել է սիրո ձգտման սահմանի նրա պատկե-  
րացումը: Մոլորության մեջ Ադամը աներեակայե-  
լին է հնարավոր համարում, հարուցում Լիլիթի  
անզուսպ քրքիջը. զվարճություն է դա Լիլիթի  
համար, և նա միտումնավոր խոսեցնում է Ադա-  
մին.

«—Ադամ... աստված քեզ վաղո՞ւց է ստեղ-  
ծել:

— Այո՛, նազելիս:

— Ի՞նչ էիր անում գրախտում:

— Թափառում էի մեն-մենակ և ինձ համար  
ընկեր էի որանում անքան անսառւնների մեջ:

— Միթե՞ չգտար քեզ նմանը, — հարցրեց,  
աչքերի խորամանկ խաղով գննելով Ադամին:

— Ո՞չ, Լիլիթ: Դրա համար էլ աստված քեզ  
ստեղծեց ինձ համար:

— Ինձ քեզ համար ստեղծե՞ց... հա՛, հա՛,  
հա՛... ծիծաղեց Լիլիթ բարձր ու զվարթա:

Շփոթվում է Աղամը, կատակ չարեց ինքը,  
 ո՞րն էր ծիծաղելին իր ասածի մեջ: Չէ որ ասա-  
 ված ասաց, և գա իր անխախտ համոզմունքն  
 է, որ Լիլիթը ստեղծվել է իր համար: Սա ավելի  
 է սաստկացնում Լիլիթի քրքիչը: Դառնանում է  
 Աղամը վիրապվում: Ինչպիսի՞ ծաղր, հավիրժու-  
 թյանն անհպատակ Լիլիթը՝ հալատակ: Աղամին,  
 և արձակում է իր անկաշկանդ քահ-քահը: Ցընց-  
 վում է Լիլիթը հոճոցից, մինչդեռ Աղամի աչքե-  
 րում արցունքներ են հայտնվում: Ուժդնանում,  
 բարձրանում, վարակում են միմյանց հեկեկանքը՝  
 քրքջոցին, քրքիչը՝ հեկեկանքին: Իրենց հարատե-  
 անհամաձայնությամբ դեմ ու զիմ կանգնած  
 մարդն ու աշխարհը իրենց գոչուններով խւաց-  
 նում են միմյանց ձայները: Կհասկանա՞ր Աղամը,  
 որ ծիծաղելին անվերջանալի Լիլիթի հետ չափ-  
 վելն էր: Կհասկանա՞ր Լիլիթը անեղրին տիրանա-  
 լու Աղամի մարդկացին ճգուռն ու հուզմունքը:  
 Թվում է, թի խսովքը պիտի լիռնանա, ժայթ-  
 քի, սակայն անսպասելի, հանկարծ վերակերպ-  
 վում է հենց այլտեղ, գագաթնակետին զորովա-  
 լից մի քնքշանքի: Կյանքն իր գյութանքով նո-  
 րից իրենն է վերցնում: Լիլիթի թիթեակի մեղմ  
 նայվածքն իսկ ծունդի է բերում Աղամին, և կրկին  
 նրա հոգին լցվում է երանելի խանդաղատանքով  
 Լիլիթի՝ բնության, կլանքի հանդեպ: Տաղնապի  
 ու վշտի ալիքը ընկրկում է գլութանքի ու վայելքի  
 նույնքան ուժդին ալիքի առջև: Իրենց լարման

բարձրակետում՝ ալիք տրամադրությունները մի այնպիսի ռմաներմությամբ» են փոխհաջորդում միանց, որ, ասես, իրարից են սերվում, իրար մեջ են: Իսահակյանի ստեղծած լարումը ոչ ողբերդական բռնկման է համում, և ոչ էլ որոտագին ցնծության: Նրա աշխարհնկալմամբ հենց այդպիսին էլ կյանքն է, կյանքի հեքիաթը, որ արվում է մարդուն տրամադրությունների ու ապրումների մի անվերջանալի շրջապտուլուփ: Սակայն կյանքի իսահակյանական ալիք հեքիաթում նրա ալիք շրջապտուլուն չհամակերպվող մարդկային մի հնչուն է միշտ լսվում, որն, ասես, դարձ ու պտույտ չհանդուրժելով, անհամրեր շտապում է կանխել շրջապտուլու: Իսկ հեքիաթը... հեքիաթն անդադար իրենն է անում, շարունակարար շուռ տաւով ամենի սկիզբն ու վերջը:

Աղամը ձգտում է առաջ ընկնել ալիք ընթացքից, հակիրժորեն պահել կիլիթին: միամիտ հանգըգնությամբ մրցավազքի հրավեր է նետում նըրան, գուցե թե անտեղի՝ փորձ է անում համոզել կիլիթն Աղամին.

«—Չհս կարող— հակառակեց կիլիթ; — մի պարծենալ:

—Կարո՞ղ եմ, — պնդեց Աղամ...

—Չուր մի՛ հոգնիր

Աղամը նորից պնդեց:

Հակառակում է Աղամը, ոչ մի կերպ չի համոզվում, և ինչպես համոզվի: Մարդկային իր

տարերքով է նա անկարող հասկանալ, որ ակամապետք է հետ մնա, չկարողանա մըցիլ Լիլիթի հետ: Եվ ինչո՞ւ «պետք է», այդ «պետքերի» դեմ է ընդվըզում աստծո առաջին որդին: Ու կյանքի այս առաջին մեծ սիրահարը, մի կողմ թողած ամեն տիպի զգուշավորություն, երանության երազանքով արբեցած խինթագին մի թափով նետպում ու նորից է սլանում առաջ: Թափ է առնում նուև Լիլիթը, թռչիստում է կայտառ ու թեթև և Աղամն էլ հետապնդում է նրան: Մագլցում է, ցատկուում՝ Լիլիթը, թաքնվում թփերի հետեւում, հնչեղ ու լիաթոք ծիծաղում — մինչդեռ նրա հետեւց արդելքների է դեմ առնում Աղամը, զարկվում ծառերի ու քարերի. Լիլիթն էլ չքմնղացած, չարաճընի խաղերով, չիմանալու դնելով, որ դժվար է Աղամին, կանչում, բորբոքում է նրան: «արի՛, արի՛, բանիր, սպասում եմ»:

Նույնիսկ ինքն իր առջև խուսափելով խոստովանել սեփական թուլությունը, Աղամը «...բոլոր ուժերը հավաքած՝ վագ տվեց, վաղեց Լիլիթի վրա, և քիչ մասց բռներ նրան ու ճմլիր իր գրկում. սակայն մատները միայն դիպան մազերին: Իսկ Լիլիթը ակնթարթի մեջ, արտուլուի նման նետվեց վեր ու սլացավ թափուաների մեջ...».

Ու պարտվածի դառնությամբ Աղամը էլի մոռւմ է կյանքի բնական ոլորտում, եվալի կողքին, ուշը Լիլիթի հետ, իսկ Լիլիթը շարունակում է անվերջանալի իր ուղին «ամեն մի նոր

ծնվածի համարա նորից պատմելու սիրո ու ձըգուման հեքիաթը շքեղ: Այսպես է սկիզբ առնում «Լիլիթում» իր հրադանքներին հասնելու մարդկության մեծ վաղքը:

Հուղերի բեռի տակ, բայց անքեն հոգով ու սրտով Ադամը ծունկի է գալիս Լիլիթի առջև և անսանձ պոռթկումով հեգում իր ինքնամոռաց օրհներդը, որ վերաճում է կլանքի սիրո մոլեուանդադոթքի.

«...դու չքնաղ ես, հրաշագեղ, հրաշագեղ, բլուր անդամ հրաշագեղ:

Եվ գիտեմ հիմա, որ սե'ըն է բոլոր իրերի հոգին, սերն է, որ թռչունների բերանը հովերի ու աղբյուրների անուշ մրմունջն է գրել: Սիրուցն է, որ քո անցած շավիղներից մեխակի և խնկածաղիկների բուրմունքն եմ առնում:

Եվ գիտե՛ս, Լիլիթ, փոթորկով բռնկված ծովը, որ լեռնաչափ ալիքներով ծեծում է երկրի ժայռը, ավելի թույլ է ու թալուկ, քան իմ սերը...»:

Քանի՛քանի հանգով ու եղանակով փառարանում է Ադամը ու էլի չի գոհանում, տենդաղին նոր խոսքեր է որոնում, գույներ, որպեսզի նորից ասի, գովերդի ու թեթևանա.

«Քո հոնքերը ծիածանի պիս կամար են. ծիածանի պիս կամար են կապել քո հոնքերը աչքերիդ երկնքի վրա:

Քո աչքերի երկնքի մեջ ծիր-կաթիններ եմ տիսնում, ուր հազար-հազար արևներ են հրդեհում:

Հաղարհազար արևներով բոցավառ աչքերդ  
կիղում են հոգիս. հոգիս կիղում են Թող աչքե-  
րիդ մեջ նալիլով մոռանամ ինձ. մոռանամ գը-  
րախտն ամբողջ՝ աչքերիդ մեջ նալիլով:

Հեղեղալին ընթացքով աշխարհն իր ամբողջ  
փայլով ու շուքով Աղամի աչքում բեկրելում է  
Լիլիթի մեջ և ալիլին է հրեում քան՝ «կալծակի  
բռնկումը՝ գիշերների մթության մեջ», «համեմիկ-  
ներն ու հակինթները բոլոր, նարգիզներն ու նար-  
դուները», «ստեղծման օրվա անդրանիկ ցողը՝ սհ-  
դերի սաղարթների վրա»:

Կյանքի, սիրո պաշտամունքի իսահակլանա-  
կան այս հուժկու օրհներդը հնչում է որպես «ողջ  
տիեզերքի հավերժությանն ու անհրությանը»  
հպիկու մարդկալին անհուն տենչանք:

Երբեք Աղամը պարման չկնքեց սատանալի  
հետ, չվաճառեց հոգին հագեցման վայրկլանի հա-  
մար, ապրեց նա ու մեռավ կյանքի անհուն, ան-  
սպառ կարոտով ու տենչանքով:

\* \* \*

Սաակու ու Աղամի սկս կյանքի նուն ան-  
հուն կարոտով ու տենչանքով ապրեց ու մեռավ  
ինքը բանաստեղծը՝ մեծ իսահակլանը:

ԲՐԱՄՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Պատմվածքներ	7
Հեքիաթ և առակ	85
Արձակ պոեմներ	96
Լեզենդներ	128
Հելիթ	171



ԳԱՐԻԿ ՆԵԿԻՆԻ ՀՈՎՀԱՆՆԵՍՅԱՆ  
ГАРИК НИКИТОВИЧ ОГАНЕСЯН

Ա.Վ.Շ.Տ.Վ. Ի.Ս.Ա.Հ.Ա.Ց. Ե. Յ. Յ. Յ. Յ.

Տպագրվում է  
ՀՍՍՌ ԳԱ գրականության ինստիտուտի  
գիտական խորհրդի հանձնութարությամբ


Գառ. իմբազիր՝ Ս. Ն. ՄԱՐԴԻ ՅԱՆ,  
Հրատ. իմբազիր՝ Ա. Հ. ՇԱՀՎԱՄՅԱՆ  
Նկարչական և պորումը Կ. Հ. ՅՈՒԹՈՒՅԱՆ  
Տեխն. իմբազիր՝ Մ. Ա. ԿԱՓԵԱՆ ՅԱՆ  
Սբքազիր՝ Փ. Հ. ՄԱԴԱՆ ՅԱՆ

ՎՃ 10520 Գառզիր 342 Տիրամ 2000  
ԽՀԵ 864 Հրատ. 2134

Հանձնված է արտադրության 22/VII 1963 թ.,  
Սուրբազրված է պազրության 15/X 1963 թ.,  
Քաշը 64×108½, ապազր. 11,75 ժամ. + 1 ներդիր.  
Հրատ. 5,1 մամ.։ Գինը կազմով 37 կող.։

Հայկական ՍՍՌ ԳԱ Հրատարակության ոպարան,  
Երևան, Բարեկամության, 26:






ԳԱԱ Հիմնարար Գիլ. Գրադ.



220029949



A

II

29949